ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Է

ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ



ՀՐԱՄԱՆԱՒ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Է

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2011

ՀՏԴ 23 / 28:1 / 14
ԳՄԴ 86.37 + 87
Ի 912

Արևելահայերենի վերածեց՝ Վ. Պարանյանը
Խմբագիր և սրբագրիչ՝ Լ. Պետրոսյան

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ
Ի - 912 Դրախտի ընտանիք: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009.- 248 էջ:

Հայ ընթերցողին ենք ներկայացնում հայ ժողովրդի մեծ երախտավոր Մկրտիչ Ա Վանեցի (Խրիմյան Հայրիկ) Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Դրախտի ընտանիք» երկը՝ արդի արևելահայերեն փոխադրությամբ: Այստեղ ամփոփված են հայ երիտասարդին՝ լիարժեք և ամուր ընտանիք կազմելու վերաբերյալ Հայոց Հայրիկի հորդորներն ու դաստիարակիչ խորհուրդները՝ հիմնված քրիստոնեական սկզբունքների ու արժեքների վրա, հորդորներ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը:

ԳՄԴ 86.37+87

Տպագրվում է մեկենասությամբ
«ԼԵՎՈՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԵՎ ԱՐԱՔՍԻ ՋԵՆՅԱՆ»
հիմնադրամի

ISBN 978-9939-59-013-4 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011 թ.

ՆԱԽԱԲԱՆ ԸՆԹԵՐՑՈՂԻՍ

Բարեկամ հայ ժողովուրդ, ձեզ եմ նվիրում փոքրիկ երկասիրությունս, որի վերնագիրն է «ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ»: Այս անունը քաղցր ու ժողովրդական է, բայց թերևս զարմանաք ու մեղադրեք ինձ, որ գրքիս նյութերն ավելի շատ այս աշխարհի առարկաների մասին են, քան թե երկնային արքայության: Ինձ պիտի դատե՞ք արդյոք, երբ եկեղեցու վարդապետը, Ավետարանի աշակերտը, Կենաց Հացի մատակարարը թողնի իր բարձրագույն ծառայությունը, Պողոսի քարոզած երկնային անճառ դրախտն ու երկրի ընտանեկան դրախտի համար ճառի:

Ճշմարիտ կլիներ քո այդ դատաստանը, եթե երկնային դրախտը մոռանայի ու չկապեի այն երկրի դրախտի հետ, որ իսկապես երկնային դրախտի հիմքն է: Ես Եկեղեցու համար եմ խոսում, որ Քրիստոսի տնկած դրախտն է, և նրա սուրբ ընտանիքը Նոր Եկեղեցու զավակներն են: Ահավասիկ այդ նոր դրախտի ընտանիքի համար

է փոքր աշխատությունս, որ տքնեցի, որպեսզի դրախտի ընտանիքի կյանքը բարվոքվի:

Գիտենալ ու հավատալ է պետք, որ այս աշխարհի ընտանեկան դրախտի մեղապարտ ու անհնազանդ զավակները չեն կարող երկնային դրախտը ժառանգել:

Ուստի այս ընտանեկան կյանքի սեղանին ես միայն սոսկ հաց չպատրաստեցի, և եթե պատրաստեի էլ, Հիսուսը հրաման կտար, ինչպես տվեց իր աշակերտներին, երբ անապատում քաղցած ժողովուրդը հաց էր խնդրում. «Դուք նրանց ուտելու բան տվեք» (Մատթ. ԺԴ 15, Մարկ. Զ 37, Ղուկ. Թ 13): Այստեղից բխում է, թե կենաց բանի[1] *հետ երբեմն էլ ժողովրդին հաց մատակարարելն Ավետարանին հակառակ ծառայություն չէ:*

Հայ ժողովուրդ, քեզ համար պատկերեցի դրախտի ընտանիքը. կաղաչեմ, որ իբրև հայելի՝ դնես աչքիդ դիմաց, նայես ու տեսնես հիվանդ ու հյուծված կերպարանքդ: Պապանձվի բերանս, թե չարագուշակ լինեմ քեզ համար. մահդ ինքդ կկանչես, ու պիտի մեռնես, թե չշտապես դարմանել այդ համաճարակ ու մաշող մահաբեր հիվանդությունդ, որ վաղ թե ուշ քեզ թշվառության գերեզման կտանի:

[1] Այսինքն՝ Ավետարանի խոսքերի *ծնթ. խմբ.*:

Կխոժոռվես թերևս, երբ խիստ խոսեմ ու խստությամբ դատեմ քեզ, և մի՞թե կկարծես, թե միայն ես եմ, ու դու ինքդ քեզ չես դատում: Հապա ի՞նչ է այն, որ շարունակ տրտնջում ես, աղաղակում, թե ահավասիկ կորչում ենք: Հրեամիտ մի լինիր, ուրիշ ոչ ոքի պատճառ մի բեր, ոչ ոք քեզ կորստի չի մատնում, կորուստը քո քենից է, քո տնից է ու քո ընտանիքից: Եթե ստույգ է, ու դու զգում ես, թե կորչում ես, ու թշվառության օրերդ մոտալուտ են, պիտի հասնեն քեզ, ուրեմն դու ամեն օր աչքիդ առաջ տեսնում ես անկյալ ընտանիքների վշտագին տառապանքը: Այո՛, տեսնում ես ու տակավին չես սթափվում, թողնում ես՝ քեզ վարեն ու տանեն, և ո՞ւր, դու գիտե՞ս, ես կանխավ ասացի, թե ուր են տանում:

Հիշի՛ր, հիշի՛ր, հետ դարձի՛ր, թո՛ղ, մահ է, մի՛ հպվիր, ձեռքերդ թոթափի՛ր այդ զեղծարարությունների փոշիներից, ընտանեկան սրահիդ սեմին այս առածը գրի՛ր. ՃԱՆԱՉԻ՛Ր ՔԵԶ: Այդ իմաստուն առածը մի՛ մոռանա, կարդա՛ միշտ, չափ ու սահման դիր տնտեսվարմանդ, հացդ չափով կեր, ջուրդ չափով խմիր, հանդերձդ չափով հագիր, թող հայ տիկնայք քառասուն կանգուն հագարթերթիկ շրջազգեստը տասը կանգունի փոխեն, որ բավական ու շատ է

մարդու այն չափի հասակի վայելչությանը, որ չափով Արարիչն է ստեղծել: Թող տղամարդիկ իրենց նեղ հանդերձը փոքր ինչ լայնացնեն, որ նեղ լինելուց չպատռվի: Թող չափ դնեն դարձյալ ընտանեկանայն բոլոր պահանջներին, որ օրըստօրե հնարում է Եվրոպայի ձեռնարվեստ հանճարը՝ գիտենալով որ պահանջներն անսպառ են: Մարդու ցանկությունն ու հաճույքն անհուն, անսահման են, եթե չափ չդնենք՝ մարդը մի անգետ մանուկ է, միշտ դեպի սիրուն խաղալիքներն է վազում:

Ուրեմն պետք է խոհեմ ու կատարյալ մարդ լինենք, սանձ դնենք մեր մանկամտությանը, քանի որ փորձառությամբ ու մեծամեծ տուժերով տեսել ու տեսնում ենք մեր ընտանեկան բյուրավոր աղետները թե՛ նյութապես և թե՛ բարոյապես:

Ժամը հասավ, խոստովանում եմ քեզ, ո՛վ հայ ազգ, չորս տարվա պատրիարքությանս շրջանում ինքնաբերաբար ես տեսա քո ընտանեկան բազմաթիվ աղետները, և այդ աղետների մեջ առավել աղետավոր էին ամուսնական խնդիրները, որոնք թե որքան և քանիպատիկ են ծանրալուր՝ ես կծածկեմ այդ թվանշանն ու քեզ չեմ հայտնի խնդրո պատմությունը: Եթե կդժվարանաս հավատալ ինձ՝ վկա ու ապացույց

կկանչեմ Պատրիարքարանի Դատաստանական Խորհրդի արձանագրությունը: Սակայն պետք չէ, որ մեր ընտանեկան գեղծարարությունների բովանդակ ցանկը միայն այդ արձանագրությունով չափենք, քանի որ մեր այսօրվա յուրաքանչյուր ընտանեկան կյանքը կենդանի արձանագրություն է. մարդը, որ աչք ունի՝ այն կարող է կարդալ տանն ու հրապարակում, ուր իբրև անգլիացի լորդ ու թագուհի՝ ցուցամոլ շռայլությունն է նազելով շրջում՝ կարծելով թե իր հարստությունն Անգլիայի անսպառ ոսկին է:

Ո՛չ, ո՛չ, այդպես մի՛ կարծեք, ո՛վ հայ ընտանիքներ, ճանաչեք ձեր չափն ու վիճակը. դուք շատ աղքատ եք ոսկով ու մտքով, աղքատ եք դաստիարակությամբ ու ազատությամբ, աղքատ եք գործունյա աշխատասիրությամբ, աղքատ եք արվեստի հանճարով, աղքատ եք իմաստուն տնտեսագիտությամբ: Առանց մտավոր ու նյութական հարստության դու մի՞թե քեզ արժանի կհամարես նույն եվրոպական ժողովուրդների ճոխ կյանքը վայելել: Ճանաչի՛ր ա՛յդ կյանքը, ա՛յդ առաջադիմությունը՝ ճակատի անխոնջ քրտինքով, բազմակերպ արյան զոհերով, հարյուրավոր տարիների ընթացքում հազիվհազ է կազմվել, իսկ դու, որ դեռ երեկ

սկսեցիր նոր երեխայի պես քերականություն կարդալ, կարծում ու հավատո՞ւմ ես, որ ուսյալ ու քաղաքակիրթ եվրոպացի ես դարձել:

Ես գովում եմ քո եռանդը, որ ձգտում ես դեպի առաջադիմություն ու քաղաքակրթություն, միայն թե սխալ ես ըմբռնել, որպես թե գեխությունը, գեղծարարությունը, նորասիրության բուռն տենչանքը քաղաքակրթության նմանողություն է: Այդ նույնիսկ քաղաքակիրթ ժողովուրդների մեջ սինլքոր մասի վարքն ու կարծիքն է: Դու ազնիվ եղի՛ր ու ազնիվ ժողովուրդների բարի ու պարկեշտ օրինակին հետևի՛ր, որոնց ամեն ինչը չափով ու կշռով է, որոնց ընտանեկան կյանքի լույսն ու առաջնորդը ուսումը, դաստիարակությունն ու տնտեսումն են: Քաղաքակիրթ ժողովուրդն այս երեք բառերով է վարում իր ընտանեկան կյանքը, այս երեք բառերի շնորհիվ է, որ նրանք բախտավոր ու երջանիկ են ապրում այս աշխարհում, քանի որ ուսման լույսով են հաց գտնում, հոգին ու սիրտը դաստիարակությամբ կրթելով՝ բարի ընտանիք են կազմում, իսկ տնտեսելով հացի սեղանն ու կյանքի այլ պիտույքները՝ չափով ու կշռով են մատակարարում՝ միշտ հոգալով ապագայի անստույգ օրերը, որ մարդու համար, անշուշտ, պատրաստում են կա՛մ երջանիկ բախտ, կա՛մ թշվառ կյանք: Բայց մարդն ինքն իր ձեռքով իր ներկայի մեջ է գգաստությամբ կամ անուշադրությամբ իր ապագա օրերը պատրաստում, որովհետև ներկան ապագայի հիմքն է, ու ապագան՝ ներկայի շարունակությունն ու շինությունը:

Բովանդակենք մեր հորդորի ճառը, ո՛վ հայ ընտանիքներ, ուղղեցե՛ք ձեր ներկան, որ ապագան ուղիղ լինի, տնտեսեցե՛ք ձեր ներկան, որ ապագայի հացը չպակասի: Մի՛ մոռացեք վերոհիշյալ երեք պայմանները, որ բարվոքում են մեր թշվառ կյանքը, սրանք են՝ լուսավորությամբ հաց գտե՛ք, դաստիարակությամբ բարի ընտանիք կազմեցե՛ք, իսկ իմաստուն տնտեսվարությամբ միաժամանակ հոգացե՛ք ձեր ներկան ու ապագան:

Ա
ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Սուրբ Գրքից իմանում ենք, որ տիեզերքի ճարտարապետ Տեր Աստված, երբ մեր աշխարհի կառույցն ու հրաշալի զարդերն արարեց՝ նախապես այն պատրաստելով իբրև մարդու բնակության ու թագավորության սահման, տնկեց իր ձեռքով եդեմական դրախտն ու զարդարեց իբրև արքայական պալատ իր տերունական պատկերը կրող առաջնաստեղծ մարդու պատվին: Եվ ինչպես երկնքում իր տիրական աթոռն էր դրել, երկրում ևս պարգև տվեց. դրախտում հաստատեց Ադամ թագավորի անմահության գահը:

Զգիտեմ՝ երբ հողուկավը կենդանի շնչով ու բանականությամբ հոգիացավ ու հանկարծ աչք բացեց, տեսավ իրեն ստեղծող Արարչին, երկինքը, երկիրը, իր ամբողջ շրջապատը, զանազան արարածները, զգա՞ց արդյոք ու համբուրե՞ց այն մեծագործ ձեռքը, որը նկարեց

իրեն անարգ կավից, իմացա՞վ, թե ինքը երկրի թագավորն էր ու պիտի իշխեր ծովին, ցամաքին ու բոլոր հպատակ արարածներին:

Այո՛, աստվածային իշխանության այս բարձրագույն հրամանն ընդունեց նա իր Արարչապետից. «Աճեցե՛ք և տիրեցե՛ք երկրին» (Ծննդ. Ա 28, Թ 1), բայց առանց զույգի մարդն ինչպե՞ս պիտի աճեր ու բարգավաճեր:

Ադամը թագավոր էր, բայց թագուհի չկար, ուստի, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, Տեր Աստված համաշխարհային հանդես կազմեց, դրախտի ծառազարդ սրահն ամեն տեսակի թռչուններ ու անասուններ հրավիրեց ու մեր մանուկ նախահորը, որ դրախտի դպրոցում բնագետ իմաստուն էր, որովհետև վարժապետն Աստվածն էր ու նրա երեսին գիտության լույս էր ճառագել, հրամայեց՝ իրեն հպատակ արարածների վայելուչ անուններն ինքը դնի: Երբ Ադամը դիտում էր իրեն ընտելացած ու հնազանդ կենդանիների բոլոր տեսակներին՝ զույգ-զույգ իր առաջ կանգնած, ինքն իրեն մտահոգվելով՝ մի պահ տխրեց իր միայնությունից ու երանի տվեց զուգակից միությամբ իրենից երջանիկ, անխոս կենդանիներին: Հատկապես երբ տեսավ, որ սոխակն իր վարդն ուներ, տատրակն՝ իր ամուսինը, արորիկն՝ իր սիրանվեր ընկերը:

Առավել ևս վարանեց բանական մարդը՝ Ադամը, այնինչ նորապսակ թագավորի պես թագ կապած էր իշխում:

Ու Տեր Աստված հրամայեց, որ նա իր ազատ ընտրությամբ կենդանիներից որին որ հավանի ու կամենա, իրեն կենակից ընկեր, հարս ու թագուհի ընտրի:

Որքա՞ն ծանր ու դժվար կլիներ անզույգ մարդու համար, որ նա խոնարհվեր, ստրկանար ու անբանական կենդանիներից իրեն ընկեր ընտրեր: Եվ մի՞թե Տեր Աստված կփորձեր աստվածային պատկերով փայլող և բոլոր ձեռակերտներին պատվով ու փառքով իշխան կարգված իր նախապատիվ բանական մարդուն, թե արդյոք նա կճանաչի՞ իր ազնվական շնորհն ու մեծությունը, թե՞ կզիջի ու կհավասարվի անասուններին:

Հանճարեղ ու մեծահոգի էր մեր նախահայրը. կենդանիների համայն սեռի մեջ չգտավ իր պատվին ու ընկերությանն արժանիին, նաև այն, որ սահմանադիր Արարչապետը բոլոր կենդանիների սեռը զույգ-զույգ էր ստեղծել, և զրկանք ու հափշտակություն չէ՞ր արդյոք, եթե հաճեր մեկին առնել ու մյուսին թողնել:

Նա տեսնում էր, որ սիրո երգիչ էր սոխակը, եթե այն խլեր վարդի թփից, անշուշտ, վարդը

պիտի թառամեր ու մեռներ: Թե տատրակին առներ, նրա ամուսնասեր ընկերն, այլևս ամուսին չընտրելով, միայնությունից պիտի շարունակ սգար ու հառաչեր: Ո՞ւմ ընտրեր Ադամը՝ գորավոր առյուծի՞ն, որ կենդանիների թագավորն էր ու անտառ էր սիրում, արծվի՞ն, որ բարձրաթռիչ լինելով՝ ձեռքը չէր հասնում: Կապիկը հոպանքով խաղում էր իր առջև ու շողոքորթում, իբրև թե ինքը մերձավոր ազգակից է մարդուն, բայց նրան ևս թողեց Ադամը, որ գնա վերջին դարում իր բնագետ ու իմաստակ զավակների հետ ամուսնանա, որոնք, արհամարհելով մարդու աստվածային պատիվը, բանականության գերագույն շնորհն ու դեմքի հրաշագեղ պատկերը, անմտացան կարծել, թե մարդը կապիկի սերունդ է, ու կապիկն է մարդու նախապապը:

Այսպես անընկեր մնաց խեղճ Ադամն ու սկսեց մտատանջվել ու տխրել: Դրախտի ողջ գեղեցիկ վայելքները չկարողացան նրան սփոփել. նա միայնակ էր, ու Տեր Աստված փութաց նրա տխրությունը փարատել: Թանձր քուն թափեց նրա աչքերին և նրա կողից մի ոսկոր առնելով ու կենդանի հողից նորահրաշ մարդ կերտելով՝ հրաշքով ստեղծեց Եվային: Արթնացավ Ադամը քնաթաթախ աչքով, իր կողքին տեսավ

իր մարդակերպ պատկերը, հիացավ, հավանեց ու հրճվելով գոչեց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորից և մարմին՝ իմ մարմնից» (Ծննդ. Բ 23):

Ադամը բոլոր կենդանիների անունները վայելչապես հորջորջեց ու առանց վարանման գտավ իր ընկերոջ անունը. Աստված նրան օգնական կոչեց, ինքը՝ կին, այսինքն՝ իր անձից առնված իսկական մաս, որով մեղմորեն ազդարարում էր Արարչին, թե ինչպե՞ս էր հնարավոր, որ ինքն իր համար օտար մարմին ու օտար ոսկոր ունեցողին ընկեր ընդուներ և կցեր ու պատվաստեր իր մարմնին, ինչն անբնական կլիներ:

Այսպես ավարտվեց Դրախտի հարսանիքը, որի պսակադիր Քահանան Աստվածն էր, Եկեղեցին Դրախտն էր, Խաչն ու Ավետարանը Կենաց ծառն էր, շարական երգող Տիրացուն սոխակն էր, վկայող ժողովուրդը բոլոր կենդանիների խումբն էր, հարսնարանի խնջույքը կազմող մատակարարն ու մատուակը հրեշտակների դասն էր, անմահ անուշահամ գինին Դրախտի չորս գետերն էին, սուրբ և մաքուր առագաստը՝ հովանավոր ծառաստանը:

Առաջին ընտանիքն ահա այսպես կազմեց Տեր Աստված. օրհնեց իր արարչական աջով նորապսակ ամուսիններին ու անխզելի սիրով կա-

պեց նրանց այնքան ամուր ու անբաժանելի, որ մինչև իսկ հորն ու մորը թողնեն ու ամուսնու հետևից գնան, որով և դրախտի Քահանայապետը հայտարարում է. «Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. ԺԹ 6, Մարկ. Ժ 9), այսինքն՝ պսակի խորհուրդը վեհ է, և այն, ինչ Արարչի հզոր ձեռքը կապեց, թող ստեղծված մարդը հանդգնությամբ իր տկար ձեռքով չհպվի ու չբաժանի:

Բայց, ավա՜ղ... Դրախտի ընտանիքն ուրիշ պառակտիչ մարդ չմտավ, որովհետև դեռ չկար. միայն խորամանկ օձն էր նախանձում երկու սիրելիների երջանկությանը, ուստի նենգությամբ մտածեց երկու անփորձ ամուսիններին դժբախտացնել ու մահ բերելով դրախտ՝ անեղծ մարդու անմահ կյանքը մեռցնել: Կեղծավոր ու ստախոս կենդանին, պատերազմի իր գաղտնի ծրագիրը պատրաստելով, հարձակվեց նախ տկար կնոջ վրա այն պահին, երբ նա միայնակ էր ու շրջում էր՝ առանց իր մեծ թիկնապահի: Գիտության ծառի տակ լարեց իր դարանն ու կնոջ նորազգաց ցանկությունը գրգռեց դեպի գեղեցիկ պտուղը՝ գեղեցիկով որսաց գեղեցիկին: Նա քաջ գիտակցեց. «Երբ կնոջը խաբեմ, հանեմ դրախտից, անշուշտ, Ադամը կգնա նրա ետևից: Արարիչն այնպես պատվիրեց. հնարավոր չէ, որ նա բաժանվի իր կենակցից, ու եթե նույնիսկ չգնա, դարձյալ կշահեմ, որովհետև ամուսնությունը սերունդ չի ունենա, և Աստծու օրհնության նպատակը կձախողեմ»:

Այսպես հաղթանակեց իժ օձը, և իր հաղթանակը տևեց վեց հազար տարի, մինչև Աստվածորդին հասավ, խաչի ոտքի տակ ճմլեց դարանակալ օձին, ու գոչեց. «Ո՞ւր է, մա՜հ, քո խայթոցը» (Ովսե ԺԳ 13, Ա Կորնթ. ԺԵ 55) :

Անգետ մարդիկ, դրախտի ընտանիքի ու արդի ադամորդիների վիճակը տեսնելով ու կարեկցելով, դատում են Աստծուն, թե նա խստությամբ պատժեց իր սիրելի ձեռակերտներին, մահով ու արյունով գրեց նրանց վճռագիրը, տկար պտղի համար մահ սահմանեց, իսկ կույր Հազկերտն, այդ հիշեցնելով, կատակում ու ծաղրում էր հայ նախարարներին:

Ափիբերան պետք է լռի այստեղ մարդկանց կասկածելի դատաստանը, որովհետև անհատակ է Աստծու նախատեսության խորքը. ո՞վ գիտի, գուցե գերագույն ու բարերար դատավորը, դրախտի հանցավոր ընտանիքը պատժելով, առավել ևս բարերարեց, որովհետև մեր նախածնողները բարու ու չարի գիտության պտուղը ճաշակելուց հետո, եթե հաջողեցնեին Կենաց ծառից ևս ճաշակել, աներկբա էր, որ այնուհետև մեղքի մեջ անմահ էին մնալու, որով

իրենք ու իրենց բոլոր սերունդներն անիծյալ ու տատանյալ կյանք պիտի վարեին աշխարհում ու մահ ցանկանալով՝ չգտնեին այն:

Խնամակալ Աստված իր պատժապարտ ծառաներին մահով հանգեցրեց հողին, մինչև իսկ իր Միածին Որդուն ևս գերեզման այցելելու ուղարկեց: Նա մահով քավեց իր նախահոր հանցանքը, կրկին անգամ մեղապարտ ծառային հողից հանելով՝ գրկեց, բարձրացրեց, տարավ երկնքի դրախտը:

Դրախտի տարաբախտ ընտանիքից պետք է օրինակ ու խրատ քաղենք նոր դրախտի որդիներս, զգուշանանք չարանախանձ օձի հրապուրիչ թույնից. եթե նա ջանաց, մահ մտցրեց հին դրախտն ու մեր նախածնողներին մահացրեց, պիտի ջանա նաև Ադամի հավատացյալ որդիներին երկնքի դրախտից հանել: Այնտեղ տեսանք, որ բարեխնամ Աստված, թեպետ մեծագորով, բայց արդարությունը գործի դնելով, չխնայեց երբեք իր նոր ձեռատունկներին, որոնց վաղ խամրեցրեց խորամանկ օձի շունչը:

Անցյալի աղետներից հարկավոր է հասկանալ, դիտել ու տեսնել նենգավոր օձի դարանամուտ հետքերը, թե ինչպես է նա շրջում ու սողում մեր մեջ: Նա աշխարհի չար մշակն է, որոմնացան թշնամին, նա ատելություն է սերմանում, նա միություն է պառակտում ու վերից վար խռովում է ընտանեկան կյանքը: Բայց հզոր մանուկ Հիսուսը բռնեց ու հավիտենական շղթայով կապեց այդ մահաշունչ վիշապին: Եվ խրախուսեց Եկեղեցու ընտանիքին, որ զորանան, քաջալերվեն, կոխեն ու ջախջախեն դարանակալ օձի գլուխը, որ դրախտի օրից սկսած՝ թշնամի դարձավ մարդուն ու միշտ սպասում է, որ խայթի մարդու գարշապարն ու թունավորի նրա կյանքը:

Բ
ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ
ԴՐԱԽՏԻՑ ԴՈՒՐՍ

Սուրբ Գիրքն պատմում է՝ երբ Տեր Աստված, դրախտի հանցավոր ընտանիքը զրկելով անմահ ու ազատ վիճակից, դուրս հանեց Եդեմի դռնից ու դրեց դրախտի հանդիման ապերջանիկ թշվառության մեջ, ո՞վ կարող է նկարագրել մեր նախածնողների սուգը, խղճալի ու ցավագին ողբը, ինչպես պարզ ու սրտառուչ հորինել է ոմն հայ երգիչը.

«Ադամ նստեր դուռն դրախտին,
Լայր և ճայներ ողորմագին.
Երեկ էի ի մեջ դրախտին,
Լցյալ լույսով Աստվածային ... »:

Այո՛, պետք է լաց լիներ ու անմխիթար ողբար փառքի վայելչությունից օտարված ընտանիքը, որ միայն մի պահ դրախտի երջանիկ կյանքը համբուրելուց հետո աշխարհի թշվառության

փուշը գրկեց, ու այն էր առավել կսկծալի, որ մոտիկից տեսնում էին մի կողմում երկնավետ դրախտ, մյուս կողմում՝ անիծյալ երկիր, մի կողմում՝ բազմազան հոտավետ ծաղիկներ, մյուս կողմում՝ քստմնելի տատասկ փուշ, մի կողմում՝ ազատություն Արարչի ազատ գավազանի տակ, մյուս կողմում՝ ստրկություն աշխարհի բռնավոր ձեռքի տակ, մի կողմում՝ հանգիստ, անաշխատ կյանք, մյուս կողմում՝ քրտինքն երեսին տաժանելի վաստակ, մի խոսքով՝ մի կողմում՝ անմահ կյանք և հավերժական փառք, մյուս կողմում՝ մահ, հող, գերեզման ու դժոխք:

Բայց բոլորովին անմխիթար չէին տիրոջ ապերջանիկ ծառաները: Բավական էր, որ դրախտի դիմաց էին բնակվում: Մարդու խնամատար Արարիչը մտածված տնօրինեց այս վիճակը, որպեսզի իր հեգ ծառաները, որ գրկված էին Կենաց ծառի անմահությունը ճաշակելուց, սփոփվեին, գոնե հույսով մխիթարվեին՝ տեսնելով մոտիկ ազատարար կյանքը, որ խաչանման կախված էր Կենաց ծառի բարձրածայր ճյուղերից. բազուկները տարածած՝ հույս էր ցոլում աչքերից, նայում էր նախածնող Եվային ու այս խոսքն ավետում նրան. «Ես ձեր ապագա փրկիչն ու բարեկամն եմ, պիտի գամ ու փրկեմ ձեզ. աներկբա

հավատով սպասեցե՛ք ինձ Երիքովի ճանապարհին, ես այնտեղ կգտնեմ ձեզ: Դուք ցանկանում էիք Աստված լինել, ես էլ այժմվանից ցանկանում եմ մարդ լինել: Դու ինձ համար մի կույս պիտի ծնես, Եվա՛, և ես պիտի գամ ու այն կույսից էմմանուէլ Աստված ծնեմ. քեզ նշան կտամ, ճանաչի՛ր այն կույսին. նրա անունը Մարիամ է, և միայն նա պիտի լուծի քո վրեժը քո ոխերիմ թշնամի օձից» (Հմմտ. Մատթ. ԻԸ 7, Եսայի Է 14, Ծննդ. Գ 15, Ղուկ. Ա 31-33):

Դրախտի ժառանգորդները թեպետ զրկվեցին հայրենի անփուշ կյանքից, բայց իրենց անկապտելի ժառանգությունն էր այն օրհնությունը, որով Աստված օրհնեց իրենց ամուսնական պսակը, թե՝ «Աճեցե՛ք... ու լցրե՛ք երկիրը» (Ծննդ. Ա 28, Թ 7): Ուստի սկսվեց Եվայի առաջին երկունքը, ծնեց անդրանիկ որդի Կայենին, ու հետզհետե նահապետական առաջին ընտանիքն, ուրիշ շատ զավակներ ծնելով, կազմեց Ադամի տունը:

Ադամի տանից ու ընտանիքից տարածվելով՝ բարգավաճեցին աշխարհի բոլոր սերունդները. մի ընտանիքն այլևայլ ազգերով լցրեց ու զարդարեց ամբողջ երկրագունդը:

Մարդն ուր որ գնար, չարկամ թշնամի բանսարկու օձը ետևից սողում էր: Դրախտից

ելով, Ադամի տուն մտավ, և իր ընածին չարության նպատակն էր խռովել խաղաղ ընտանիքը, թե հնար լիներ նախանձ ու ատելություն փչել նրանց սիրտը, նա կամենում էր Ադամի ամբողջ տունն ու ընտանիքը կռվով, սպանությամբ սպառել: Նա նախ թույն թափեց Կայենի ոխակալ սիրտը, որով հարազատին հարազատի դեմ գինեց: Ջեռնարկված առաջին սպանության ոճիրը, առաջին ընտանեկան սուգը, առաջին մահն ու գերեզմանն առաջին անգամ մտցրեց Ադամի տուն: Մեր նախածնողները կոծելով լացեցին անմեղ Աբելի վրա, իրենց ձեռքով փորեցին դժոխքի փոսն ու իրենց աչքով առաջին անգամ տեսան չարաչուք մահվան սև դեմքն ու գերեզմանի սոսկալի ստվերը:

Միաժամանակ լաց եղան Կայենի ապիրատության համար, մինչև Ղամեքի նետը լուծեց անմեղ Աբելի անպարտելի մահվան վրեժը:

Ադամի տունն ու ընտանիքն անմխիթար սրտով ու սգով անց էր կացնում դառնաբեր օրերը, մինչև ծնվեց մխիթարության որդի Սեթ նահապետը, որ իսկական նախատիպար էր Աստվածորդու, և ինչպես Սեթի սերունդն «Աստծու որդիներ» (Ծննդ. Զ 2) կոչվեցին, Քրիստոս Էս իր հավատացյալ որդիներին այդ բարձր անունով կոչեց: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել Կայենի գերդաստանին ու Սեթի գերդաստանին: Երկյուղած ու աստվածապաշտ Սեթն իր սերնդին իբրև առաքինության օրինակ ու դաստիարակ էր հանդիսանում. իսկ Կայենն՝ ագահ, ինքնասեր ու վայրագ մշակը, չարություն էր սերմանում ընտանեկան անդաստանում, մեծամեծ հսկաներ էին բուսնում, որոնք աճելով, զորանալով՝ խեղդեցին Սեթ նահապետի բարեբույս ծաղիկներին և խառնագնաց անառակությամբ ապականեցին նրա ընտանեկան անխառն անդաստանը: Երբ Աստծու որդիները մարդկանց որդիների հետ խնամիությամբ խառնվեցին, գայթակղության չարությունը բարուն հաղթեց, որով այս երկու սերունդների խառնածին զավակները միահամուռ մոլորվեցին Աստվածապաշտ նահապետների ուղիղ ճանապարհից:

Սեթի ու Կայենի ցեղերի այս նշանավոր դեպքը մեզ ճշգրիտ ու անվրեպ օրինակ է ծառայում՝ չարերի հետ ընտանիք չկազմել, խնամիությամբ ազգակցություն չկապել: Չարերը միշտ մարդկային ընկերության գայթակղությունն են ու միշտ կան ու կլինեն մեր կյանքի ճանապարհին, ինչից խուսափելն անկարելի է, ինչպես Քրիստոսն ասաց. «Անկարելի է, որ գայթակղություն չգա, բայց վա՜յ նրան, որի

ձեռքով կգա» (Ղուկ. ԺԷ 1): Ուստի ամենայն խնամքով զգուշանալ է պետք, մանավանդ ընտանեկան կապերում: Մովսեսն աստվածախոս օրենքներով պատվիրում էր Իսրայելի որդիներին չխառնակվել հեթանոսների հետ, նույնպես և Քրիստոս իր Ավետարանով անդադար քարոզում է եկեղեցու որդիներին զգուշանալ չարերի գայթակղությունից:

Աստված երբեմն չարերի մեջ ևս բարին է հրաշագործում, և նա է, որ հանում է պատվականն անարգի միջից, ինչպես որ Սեթի ցեղի մոլորված զավակներից Ենովս նահապետը բարի շառավիղ է հանդիսանում Սեթ նախահոր աստվածապաշտության արմատի համար. Սուրբ Գիրքը վկայում է, որ միայն Ենովսը հույսով դիմեց Աստծուն, մինչդեռ Աստվածային նախախնամությունից հուսահատված, եղծված մարդիկ, օրըստօրե վատթարանալով ամբարիշտ գործերի մեջ, նախնադարում շրջում էին անտերունչ ու առանց օրենքի: Մարդիկ իրենց թանձր մոլության մեջ մոռացել էին Աստծու սուրբ անունն ու նրա արարչական խնամքը, երբ տակավին ողջ էին Ադամ, Սեթ և Ենովս նահապետները, որոնք՝ իբրև կենդանի քարոզ ու օրինակ, բավական չեղան ընտանեկան կյանքում աստվածապաշտության հիշատակն

անմոռաց պահելու համար: Շատ զարմանալի է, որ Սուրբ Գիրքն առանց հիշատակության է անցել ու բնավ չի հիշում որևէ կնոջ անուն, որ երկյուղած բարեպաշտությամբ հանդես եկած լիներ ընտանեկան կյանքում, ինչպես աստվածահաճո նահապետները:

Ենովսից հետո չնաչխարհիկ առաքինությամբ բարձրացավ Ենոք նահապետը, որի մասին սուրբ հայրերի կարծիքն այն է, որ գերազանց լինելով ժուժկալության մեջ, հաճոյացավ Աստծուն ու իր անժուժկալ նախածնողների պարտքը վճարեց լիովին: Ուստի վերին նախախնամությունը փոխադրեց նրան երկնային դրախտ՝ զատելով ամբարիշտ մարդկանց կարգից արդարի կյանքը, որպեսզի մարդկանց չարությունը նրա լուսավոր վարքը չաղարտի:

Սուրբ Գիրքն առաջին դարի վերջին նահապետ ու երկրորդի սկզբնահայր Նոյի վկայությամբ հռչակում է նրան արդար ու կատարյալ իր ազգատոհմի մեջ: Նոյի ժամանակ ամբողջ երկիրն ապականված էր չարությամբ, ու Տեր Աստված այլևս չկարողացավ հանդուրժել: Երկնքից ահավոր աչքով նայեց երկրի ամբարշտությանն ու մարդկանց ապիրատ գործերը չափելով՝ ասաց. «Բոլոր մարդկանց վերջը հասել է...» (Ծննդ. Զ 13), որով ցույց է

տալիս, թե առհասարակ հավատն ու Աստծու ոգին մերժելով՝ մարդկային ընտանիքը շաղախվել էր մարմնապաշտ մոլությունների մեջ, ու երկնքի արդարությունը պատուհասելով պիտի ջնջեր ու վերացներ նրանց կյանքը: Ուստի Նոյ նահապետին ու իր ընտանիքին առանձնացնելով ապականված մարդկանց ընտանիքներից՝ փակեց հրաշակերտ տապանի մեջ ու մարդկության սերունդը ջրահեղձ վերացրեց աշխարհի երեսից՝ բավական համարելով երկրորդ դարի սկզբին մարդկային նոր սերնդի նախահայր անվանված արդար նահապետի տունը պահել միայն:

Նոյի տապանի նավապետն աստվածային նախախնամությունն էր, որ առանց ղեկի այն վարելով՝ բերեց հասցրեց Արարատի լեռներին՝ Մասիսի բարձր գլուխը դարձնելով նավահանգիստ: Ծովացած ջրհեղեղը ցամաքում է երկրի երեսից, ջրասույզ լինելով՝ խպառ ջնջվում են նաև մարդիկ ու իրենց ամբարիշտ գործերը:

Սուրհանդակ աղավնին, ձիթենու մի կանաչ ճյուղիկ նշան բերելով, ավետում է, թե պատուհասի ձմեռն անցել է, գարուն է եկել աշխարհ: Նոյ նահապետն իր ողջ ընտանիքով տապանից դուրս է ելնում, նախ՝ իջևանում նույն Մասիսի կողերին, ապա՝ իր վաղեմի ուխտին հաճելի զոհ մատուցելով՝ Աստծուց հաշտություն է աղերսում: Եվ ահա ծիրանի գոտին[1] կամար է կապում Այրարատ աշխարհի վրա՝ ձգելով մի ծայրը Մասիսին, մյուսն՝ Արագածին:

Աստված Արդարի հետ հավիտենական ուխտ է կնքում. այլևս չապականել երկիրը ջրհեղեղի պատուհասով: Վաստակավոր նահապետը, հիշելով իր արդար մշակության արվեստը, Մասիսի արեգդեմ դարավանդի վրա իր ձեռքով մի այգի է տնկում: Մի օր գինուց հարբելով, գլուխը Մասիսի թևին դնելով՝ համեստ ծերունին ննջում է, ու հովից բացվում է նրա զգեստը: Կրտսեր որդի Քամը, տեսնելով այդ, ծանակելով, ծիծաղում է: Սեմն ու Հաբեթը պատկառանքով ծածկում են իրենց հոր ամոթույքը: Ծեր Նահապետն արթնանում է ու զգում. անիծում է մանուկ Քանանին և օրհնում Սեմին ու Հաբեթին:

Նահապետական ընտանիքի մեջ շատ նշանակալից էր ծնողների հարգանքն ու որդիների պատկառանքը. երանի՜ թե Հաբեթի տան անցյալ ու ներկա որդիները հասարակական կյանքում անմոռաց պահեին այս վսեմ առաքինության օրինակն ու հիշատակը, որոնց մասին Սուրբ Գրքի հետ չի մոռանում պատմել

[1] Այսինքն՝ ծիածանի աղեղը — *ծնթ. խմբ.:*

Մովսեսը՝ ցույց տալով, թե պատկառանքի ու համեստության ինչքան շնորհներ էին փայլում նահապետների ընտանեկան կյանքում:

Գ
ՀԱՅՈՑ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՆՆ ՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ

Դրախտի նախաստեղծ ընտանիքից սկսելով՝ միայն մի համառոտ նկարագրով հիշատակեցինք մի քանի աստվածահաճո նահապետների կյանքը, որը շարադրանքիս նպատակն էր պահանջում:

Նոյից հետո հավատացյալ ընտանիքներով առավել ևս փայլում են Աբրահամ, Իսահակ և Հակոբ նահապետները, որոնց վարքն ու ընտանեկան կյանքը սքանչելի են, և մարդ հիանում է, երբ ուշադրությամբ կարդում է Ծննդոց Գիրքը:

Բայց երբ շարադրածիս կարգն ու առարկան պահանջեն, անշուշտ, իբրև օրինակ, պիտի մեջ բերեմ հին աշխարհի առաքինության այդ չքնաղ տիպարներին, որոնց ընտանեկան կյանքը զարմանալի է, ուր ո՛չ գիր, ո՛չ դպրոց, ո՛չ ուսում կար, միայն խիղճը, երկյուղածությունն

ու աստվածապաշտությունն էին առաջնորդում ու դաստիարակում նրանց: Ներկա լուսավոր ու քաղաքակիրթ աշխարհի որդիները պետք է ակնածեն նահապետների պատկառելի շուքից:

Մեր ազգի ու Հայոց աշխարհի ընտանեկան կազմության առաջին հիմնադիրը Նոյ նահապետն է, ինչպես և ջրհեղեղից հետո հանուր մարդկության նախապապը. Հայկի անունով մենք հայ ենք կոչվում, Արամի անունով՝ արմեն, և երբեմն նաև Թորգոմական կամ Ասքանազյան, բայց այս բոլոր նահապետներն էլ էլ Նոյի կրտսեր որդի Հաբեթի սկզբնական սերունդից են, դրա համար էլ երբեմն Հաբեթական ազգ ենք կոչվում:

Ինչպես որ ենթադրվում է, դրախտը Հայաստանում էր, ու կյանքն այդ աշխարհից սկսվեց: Նախախնամությունը կամեցավ, որ մարդկության սերնդի զարգացումը դարձյալ դրախտի մոտից սկսվի, ուստի մարդկային ազգի նոր խանձարուրը Հայոց Արարատյան աշխարհն եղավ: Նոյ նահապետն իր բարեճոխ ընտանիքը Մասիսի հովանու ու թևի տակ հաստատեց, որ այժմ Նախիջևան է կոչվում: Գրեթե հինգ հազար տարուց ավելի՝ մինչև օրս, այս ավանդական անունն անկորուստ է պահվում:

Երբ Նոյի ընտանիքը, ինչպես ենթադրվում է, չորս հարյուր տարում այնքան աճեց ու բազմացավ, մինչև որ Արարատյան լայնատարած աշխարհում այլևս բնակության տեղ չմնալու պատճառով սկսեց աշխարհի ամեն կողմում գաղթականություն սփռել, առաջին ընտանեկան գաղթականությունը դեպի Բաբելոնի Սենարա դաշտը չվեց:

Զգիտեմ, թե ինչպես այս գաղթական ընտանիքները շուտ մոռացան Նոյ նահապետի՝ արդար ծերի հիշատակը, նրա հավատքն ու աստվածապաշտության երկյուղածությունը և սկսեցին փուչ խորհրդով ու մտքով երկնային ցասման դեմ մի հզոր աշտարակ կանգնեցնել՝ թերևս ավանդությունը հիշելով. ինչպես բարձրագագաթ Մասիսը Նոյի տապանին հյուրընկալ եղավ, այդպես էլ այդ մեծագործ աշտարակը ևս կարող է իրենց ազատել, եթե կրկին ջրհեղեղ լինի աշխարհում: Իսկ հավատացյալ Նոյին սիրելի, պաշտելի Աստվածը, որ հաշտություն էր ուխտել, մի պահ ծածկեց իր հաշտության աղեղն ու Մասիսի գլխից իջնելով Բաբելոն՝ մի շնչով խորտակեց ամբարտակը, խառնակեց միաբարբառ մարդկանց լեզուն ու ցրեց չարաժողով միաբանությունը, որպեսզի Բաբելոնի ամբարիշտ ընտանիքներն իմանան, որ իրենց մեծամիտ խորհուրդն ու ունայն գործը դեմ էին Աստծուն, ու այլևս չհանդգնեն երկնքի Բարձրյալի դեմ թումբ կանգնեցնել:

Մինչդեռ Բաբելոնը խառն էր և Բելն էր տիրում, Արարատյան աշխարհում խաղաղություն էր: Այնտեղ ազատությունն ու աստվածապաշտությունն էին թագավորում, տոհմական նահապետներն իրենց ընտանիքներին իշխում էին տանուտերական իրավունքով, իսկ նահապետների նահապետ արդար Նոյը դեռ ողջ էր ու իր աթոռը Մասիսի մեծաշեն պալատի դռանը դրած՝ հովվում էր հարազատ հայ ժողովրդին, որ սիրելով իրենց բնականունդ հայրենիքը՝ երբեք չբաժանվեցին, որով և անմասն մնացին Բաբելոնի պատուհասից՝ անարատ պահելով հայրենի նախնական լեզուն, կրոնն ու երկյուղած Աստվածապաշտությունը:

Քանի որ Նոյ նահապետն աշխարհին պահապան, կենդանի օրինակ ու քարոզ էր և արդարության լույսն էր տարածում բոլոր ժողովուրդների կյանքի ու ընտանիքների վրա, բավական էր, որ մի արդար մարդն աշխարհին լույս տա և ազատ պահի ազգին մոլեկրոն անբարիշտությունից: Նոյի արդարության լույսով զինվեց մեր Հայկ նահապետն ու ըմբոստանալով աշխարհակալ Բելի դեմ՝ Բաբելոնից կրկին վերադարձավ իր հայրենիք: Եկավ, համբուրեց հինավուրց, ալևորված ծերի տապանաշեն աջը, և ես հավատում եմ, որ նրա զորավիգ օրհնությամբ զորանալով՝ հաղթանակ տարավ Հայոց ձորում ու կործանեց այն հսկա որսորդին, որ խիզախել էր Աստծու առաջ և երկնքի դեմ հոխորտացել:

Այստեղից է սկսվում Հայկատունն ու ընտանիքը և հետզհետե տանուտերական իշխանությամբ կառավարում է ժողովրդին:

Հայկի կյանքից ու թվականից սկսած՝ մինչև օրս, գրեթե չորս հազար տարի են հաշվում: Օրհնյալ է Նախախնամության անունը, որ հայ ազգն ու իր անունը դեռ կենդանի է պահվել. այսքան ընդարձակ ժամանակի մեջ կան ուրիշ ազգեր, որ գաղթել են հայրենիքից, կան, որ սպառվել ու նվազել են, ինչպես հայի դրացի ասորին, իսկ հայ ազգն ու իր ընտանիքը, որ մեծ մասամբ իր հին հայրենիքում պահպանեց ու դեռ պահպանում է իր նախնիների հողն ու գերեզմանը, ամեն վիշտ ու տառապանք կրեց, բայց աշխատեց չհեռանալ Նոյի տնից, Մասիս սարից, ուր Քրիստոս բարձրացրեց Հայաստանյայց Կաթողիկե եկեղեցին:

Զգիտենք ու տարակուսում ենք. արդյո՞ք հայ ազգն, իր նահապետի տունն ու հայրենիքը չթողնելով, նախնիների ընտանեկան նույն չնաշխարհիկ առաքինությունները ողջ ու անարատ պահեց: Հայտնի է, ու պատմությունն է ուսուցանում. երբ մի ազգ ընկնում է

այլևայլ ազգերի տիրապետության տակ, անշուշտ, ստիպված հետևում է օտարի կյանքին ու սովորություններին: Սրա համար Աստծու պատգամախոս Մովսեսը օրենքով արգելում էր Իսրայելի ժողովրդին, որ զգուշանան ու չխառնակվեն հեթանոսների հետ, որպեսզի չսովորեն նրանց անարժան գործերը:

Հայ ազգն ու իր նահապետական ընտանիքն այդ խառնակությունից զերծ չմնացին ո՛չ հեթանոսության դարում, ո՛չ քրիստոնեության: Պարթևական Արշակունիները, Բագրատունիները, ասորիները, պարսիկները, մարերը, հույները, թաթարները և այլ փոքր ու մեծ ազգեր կոխեցին մեր հայրենի հողը, մե՛րթ խառնվեցին ու ձուլվեցին, մե՛րթ տիրեցին ու զորացան, մե՛րթ գերեցին ու կոփեցին, և ո՞վ կտարակուսի, թե այսքան խառնակության մեջ մի որևէ ազգ չի կարող իր հին ընտանեկան կյանքը ողջ ու անեղծ պահել: Երբ այդքան հեղափոխություններն այլափոխել են մեր ազգային կյանքն ու հանել իր նախնական պարզությունից. շատ դժվար է երևան հանել ժողովրդի կյանքի ստույգ ու անխառն նկարագիրը, մանավանդ, որ մեր ազգի պատմիչները ժողովրդի կյանքն ու բարքը համարյա շոշափելով են անցնում՝ մտադրված նկարագրելով միայն պատերազմի դաշտը, քաջերի գործը, նաև շատ ողբ ու

կոծ ժողովրդի աղետներից: Ուստի քննասեր ու բանասեր միտքը շատ դժվարությամբ կարող է նյութական պարագաներից գուշակել մեր նախնի ժողովրդի բուն նշխարները. դրա հավատարիմ ավանդապահը մեր հայրենիքի ժողովուրդն է, իսկ հայ գաղթականությունն ուր որ գնաց, այնտեղ իր մեռելների հետ թաղեց նաև իր հայրենիքի հին փառքի հետքը՝ մոռանալով նաև Էջմիածնի բարձրագույն Կաթողիկեն:

Եւ դուք, ո՛վ որդիներ հայոց, որ մեր հին Նահապետական տան ժառանգորդ զավակներն եք, այնտեղ՝ հայրենի տանը, կացե՛ք, մի՛ հեռացեք, սիրեցե՛ք Մասիսը, իր տապանն ու սուրբ Գրիգորի Կաթողիկեն, մշակեցե՛ք Նոյի ձեռատունկ այգին՝ Արարատի դաշտը, մի՛ թողեք հավիտյան Նահապետական տուն-ընտանիքը: Դուք Մասիսի հարազատ որդիներն եք, Մասիսը ձեր հայրենի սեփական տունն է, թող չե՛ն մնա ձեր տունը, չե՛ն մնա Նոյի գերդաստանը, բարգավաճեն օրհնյալ Հաբեթի որդիները, արդար Նահապետի գերեզմանի աղոթքն ու զոհի ծուխը մինչև երկինք ելնի, երկինքը հաշտվի ու յոթնագույն աղեղը կամար կապի դրախտի աշխարհի վրա, ու դրախտի բնիկ որդիները ցնծան, թե՝ «Աստված մեզ հետ է ու իր հզոր Աջով օրհնում ու պահպանում է Նոյի տունն ու նրա օտարամերժ ընտանիքը»:

Դ
ՄԱՐԴԸ ԵՎ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու Արարիչն ամուսնությունը միայն մարդու համար է սահմանել, և ամուսնությունն Աստծու խորհրդավոր, ձեռագործ ու բնական օրենք է: Աստված Մովսեսին օրենքները Սինա սարից տվեց, իսկ ամուսնական օրենքն սկսվում է դրախտից: Անդրանիկ մարդ Ադամն ու նրա ամուսին Եվան, երբ արարչությամբ աշխարհ եկան, այս բնական օրենքն իրենց գոյության հետ էր: Եվ որո՞նք են այս արարչագիր օրենքի զորությունն ու նպատակը: Այդ ինքնին հայտնի է, զորությունը բնական սերն է, նպատակը՝ մարդկային սեռի բարգավաճումն ի փառս իր Արարչի:

Այո՛, ամուսնության բուն օրենքը բնական սերն է, որ մարդու բնությունից անբաժանելի է: Առանց ամուսնական պայմանի, որ ազատ մարդու համար է միմիայն, բնական սերը հա-

տուկ է նաև բոլոր թռչուններին ու անասուններին: Ու միայն բնական սերն է ողջ բնության կենդանատու հոգին ու զորությունը. եթե չկենդանացնի այն՝ բնությունը կմեռնի, ո՛չ մայրը կծնի իր զավակին ու կաթ կտա, ո՛չ հավն ու ճնճղուկները ձագեր կհանեն ու կուտ տալով՝ կանուցեն նրանց:

Ուստի արժի, որ ամենայն իրավունքով ընդունենք, թե ամուսնական օրենքն աշխարհի, մարդկության հիմքն է՝ բնության մեջ խորապես հաստատված, և ոչ մի ձեռք չի կարող խախտել այն, և եթե խախտի, մարդն իր կյանքով կչքանա, ու այլևս պետք չեն լինի աշխարհն ու իր համայն զարդերը, որ պատրաստված են աստվածային մարդուն սպասարկելու համար:

Ամուսնական օրենքն Աստծուց հետո մեր կյանքը շարունակող ստեղծագործ ձեռքն է, որովհետև մի անգամ արարելով երկու նորաստեղծ ամուսիններին՝ բավական համարեց ու թողեց, որ այնուհետև ամուսնությունն արարչագործի, ու իրար մարդիկ ստեղծեն:

Մարդիկ չեն կարող մի սպիտակ կամ թուխ մազ փոխել ու թող չպարծենան, որ այդ արարչագործական շնորհքն ունեն, և հավատան, որ մանկանն իր մոր արգանդում պահողը նախախնամությունն է: Մանուկը ծնվում է, աճում, զարգանում, ու մենք զարմանքով տեսնում ենք, որ մարդը մարդուն աշխարհ բերեց: Ամենայն պատկառանքով պետք է խոստովանել, որ նախախնամող ձեռքն է մարդու կյանքի բուն սնուցիչ մատակարարը, որովհետև Քրիստոս ասաց. «Ո՞վ կարող է, հոգս անելով, իր հասակի վրա մի կանգուն ավելացնել» (Մատթ. Զ 27, Ղուկ. ԺԲ 25):

Մեր բնակեցրած աշխարհի շենությունն ու բարգավաճումը ամուսնական կյանքի արգասիքն է: Եթե մեր լայնատարած երկրագունդն այսօր լի է մարդկային սերնդով, այդ ևս ամուսնական կյանքի պտղաբերության անսպառելի հրաշքն է, որովհետև դրախտի մեկ ծառը բովանդակ աշխարհը զարդարեց: Եթե կանխատես Արարիչը կնոջն՝ իբրև կյանք ու օգնական, չտար մեր նախահորը, եթե ինքն իր բերանով չօրհներ, թե՝ «Աճեցե՛ք ու լցրե՛ք երկիրը» (Ծննդ. Ա 28, Թ 1), և այլն, ի՞նչ կլիներ Ադամն իր միայնության վիճակում: Նա կմնար առանց կենակից ամուսնության, անծին, անծնունդ ու անկյանք, որովհետև Ադամի ու Հանուր մարդկության կյանքը կինն էր, որի համար Սուրբ Գիրքն ասում է. «Նա է բոլոր մարդկանց նախամայրը» (Ծննդ. Գ 20):

Հին դրախտում Եվան, որ կյանք էր, մահ ծնեց, մարդու կյանքը մահացրեց: Սուրբ Կույ-

սի զավակ Հիսուսը նոր դրախտի եկեղեցում մահացած հին կյանքը վերանորոգեց ու իր Ավետարանի ազատ ու շնորհական օրենքով սրբագործեց ամուսնական խորհուրդն ու վերստին ամրացրեց նրա կապը, որ միշտ խզում էր հրեական խստասրտությունը:

Սուրբ Պողոսը, որ խոսում էր Քրիստոսի հոգով, ամուսնությունը պատվական է կոչում ու սուրբ համարում նրա առագաստը: Եվ այնքան մեծ նշանակություն է տալիս, որ մինչև իսկ համեմատում է եկեղեցու բարձր խորհրդի հետ՝ փեսա Հիսուսին իր հարսի հետ:

Անձնուրաց առաքյալը խաչակրության ազատ պաշտոնի ու Ավետարանի քարոզության համար կամեցավ նաև ներքինի լինել, որպեսզի միայն եկեղեցու հավատացյալ ընտանիքի մասին հոգա, որովհետև Ավետարանն ու Եկեղեցին խաչաբարձ խմբի առաջ վերագույնն էին համարվում: Նրանք քաջ սովորել էին Ավետարանի այն դասը, թե՝ «Եվ ով իր խաչն չի վերցնում ու իմ ետևից չի գալիս, ինձ արժանի չէ» (Մատթ. Ժ 38, ԺԶ 24, Մարկ. Ը 34, Ղուկ. Թ 23, ԺԴ 27): Հիսուսը, խաչն ուսին, դեպի Գողգոթա գնաց, զոհեց իրեն մարդկային սիրո համար ու նույնը պահանջում էր իր ուխտադիր աշակերտներից: Հայտնի է, որ այս անձնվեր

խաչակիրների առաջ որքան խոնարհվում ու լռում է ամուսնական իրավունքը, բայց երբեք չի եղծվում, որովհետև Աստվածային ձեռքն ու դրախտի օրհնությունն այն անեղծ են դրոշմել:

Թող ոչ ոք այնպես չկարծի, թե ուրեմն Հիսուսն ու Պողոսն ընդդիմախոս են այս աստվածային վճռին. մեկն, իր սիրո և Ավետարանի համար ընտանիքն ու աշխարհը թողած, դաս է տալիս, մյուսն էլ ցանկանում է, որ յուրաքանչյուր մարդ իր պես անամուսին կույս լինի: Եվ կամ թե Պողոսը հավանում է կորնթացի հավատացյալների կարծիքը, որոնք գրում էին. «Լավ է տղամարդու համար կին արարածին չմերձենալ» (Ա Կորնթ. Է 1), թվում է, թե այս կարծիքն ուղղակի ընդդիմախոսություն է դրախտի աստվածային այն վճռին, թե՝ «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի» (Ծննդ. Բ 18) և այլն:

Պողոս առաքյալի Կորնթացիների թղթի ամբողջ յոթերորդ գլուխն ամուսնության ու կուսության վիճակի մասին է ու խիստ ազատությամբ վարդապետում է՝ պատասխանելով կորնթացի ժողովրդի նամակին: Մարդն ինքն իրեն կարող է խորհել, որ դրախտի վճռի ու Պողոսի վարդապետության մեջ անշուշտ մեծ խորհուրդ ու նպատակներ կան. Մարդու արարչության օրն Արարչի խորհուրդն ու նպատակն էր, որ իր

պատրաստած ամայի երկիրն ամուսնական օրհ-
նությամբ լցներ, և մարդն իր սերնդով փառա-
վորեր Աստծուն, իսկ Պողոսի նպատակն էր, որ
եկեղեցու որդիներից նրանք, որ կարող են իր
պես առաքինանալ, թողնեն աշխարհն ու ամեն
բան, միայն Աստծու և եկեղեցու մասին հոգան՝
ազատ մնալով ընտանեկան զբաղմունքից:

Պողոսի վեհ հոգին փափագում էր, որ Ավետա-
բանի պաշտոնյաներն ազատ զինվորներ լինեն,
Երուսաղեմից սկսած՝ անարգել գնան աշխարհի
ծայրն՝ Ավետարանն ու հավատքը ծավալելու:
Բացի այս՝ Պողոսը, երբեմն վերանալով, տեսավ
երկնքի դրախտը և Աստծու սիրելիների համար
պատրաստված փառքը, ապշեց, հիացավ, թե
անճառ է ու անպատում. ուստի զարմանալով
պատմում ու նույնն է հորդորում, որ վերթևեն
եկեղեցու զավակներն, ու այսպես է ասում. «
Թե այսուհետև ժամանակը կարճ է, որովհետև
նրանք, որ կին ունեն, այնպես ապրեն, որպես
թե ունեցած չլինեին... և նրանք, որ աշխարհիկ
կյանք են վարում, որպես թե վայելած չլինեին,
որովհետև այս աշխարհը այնպես, ինչպես որ է,
անցնելու վրա է» (հմմտ. Ա Կորնթ. Է 29-31):

Երանելի Պողոսն իր տեսած դրախտից թող
այժմ նայի, թե այս աշխարհի վայելչությունն
ու կյանքն ուր են հասել, ու երկրասեր մարդիկ
կհասկանա՞ն իր խոսքը կամ կհավատա՞ն, թե

իր տեսած դրախտը Փարիզի դրախտից գերա-
զանց ու վայելուչ է:

Այո՛, Պողոսի հափշտակված միտքը երազ չէ,
այլ ճշմարիտ իրողություն ճշմարիտ հավատաց-
յալների համար միայն, որովհետև երբ երկնքի
արքայությունը հայտնվեց, ու երբ Հիսուսը
քարոզեց Ավետարանի որդիներին, թե՝ «Այս
աշխարհից չեք» (Հովհ. ԺԵ 19), այնուհետև
այս աշխարհի դրախտը քանդվում ու երկնքի
դրախտն է բացվում մարդու առաջ:

Այսպես թե այնպես ո՛չ Աստված, ո՛չ Հիսուս,
ո՛չ Պողոսը և ո՛չ եկեղեցին բացարձակ վճիռ չեն
տալիս, որ անժխտելի օրենքով, առանց բացա-
ռության՝ մարդիկ պետք է ամուսնանան կամ
կուսական կյանք վարեն՝ առանց երբևէ ամուս-
նանալու: Եթե այսպես լիներ, ու ամեն մարդ
հետևեր Պողոսին, եկեղեցին, անծնունդ մնա-
լով, վաղուց սպառած կլիներ իր որդիներին,
իսկ եթե Պողոսի նման կամավոր ներքինիներ
ու Ավետարանին անձնվեր պաշտոնյաներ չլի-
նեին, ո՞վ անմախաղ ու անցուպ կավետարա-
ներ բարբարոս հեթանոսների մեջ, ո՞վ կկառու-
ցեր Քրիստոսի եկեղեցին, ո՞վ հավատի վկա-
յության համար արյուն կթափեր: Մենք չենք
ժխտում, որ շատ ամուսնացածներ ևս առաքի-
նացան այդ ասպարեզում, բայց Ավետարանի

խաչակիրների խմբի գերազանցությունը միշտ անհամեմատ է:

Ուրեմն՝ ստույգ է, և պետք է խոստովանենք, որ մարդու երկու վիճակի կյանքն էլ իր ազատ ընտրությանն ու կամքին է թողնված: Այսպես կամ այնպես՝ ամեն մարդ իր առանձին շնորհն ունի, որովհետև եկեղեցու դրախտի ծաղիկները մշակող հայրը տնկել է զանազան, ու յուրաքանչյուրն իր վայելուչ տեսքն ու անուշ հոտն ունի:

Թեև Ավետարանի ազատ մշակներն իրավունք ունեն պարծենալ, որ իրենք առավել վաստակեցին և վաստակում են, բայց նրանք երբեք իրավունք չունեն փարիսեցիների աչքով նայել ամուսնական կյանքին ու այնպես դատել, թե այդ կյանքը մեծ ու հաճոյական չէ երկնքի առաջ: Սուրբ Գիրքն ու եկեղեցու պատմությունն ամուսնացած ու չամուսնացած մարդկանց նկարագիրը միաժամանակ հանում են մեր առաջ, որին եթե մարդը ողջամիտ աչքով նայի, կտեսնի, որ երկու դասի առաքինիների համար էլ սքանչելի ու հաճելի է երկնքի առաջ. Աբրահամին՝ իր ընտանեկան վրանի տակ, աղոթավոր Անտոնին՝ իր խցի մեջ: Ենոքն ու Եղիան կենդանի են արժանանում երկնքի դրախտին, մեկն՝ իբրև ընտանիքի հայր և նահապետ, մյուսը՝ կույս մարգարե և այր Աստծու: Մեծ է Հովհաննես Մկրտիչը կանանցից ծնվածների մեջ. ուրիշ ո՞վ է երկնքի արքայության այն փոքրիկ հավատացյալ արդարը, որ Հիսուսին տեսնելով՝ մեծ է համարում, և իբրև աննշան ու փոքրիկ՝ վրիպում է մեր աչքից, և չգիտենք՝ նա կո՞ւյս է, թե՞ ամուսնացած:

Ուստի պարտավորվում ենք ուղղել մեր կասկածելի դատաստանը. այդ երկու դասի աստվածահաճո առաքինիները միևնույն ամուսնական ծառի բարի պտուղներն են: Քանի դեռ կա աշխարհը, այդ ծառը միշտ պետք է կանաչազարդ մնա, որովհետև Աստծու ձեռքի օրհնյալ տունկն է: Նրա սահմանադիր օրենքն ու օրհնությունն են այն դարմանում, որ շարունակ աճելով ու իր ընտանեկան ճյուղերն արձակելով՝ միշտ բազմապատիկ պտղաբերի թե՛ աշխարհի և թե՛ երկնքի արքայության համար:

Սակայն թե՛ հեթանոսության և թե՛ քրիստոնեության տարբեր ժամանակաշրջաններում չարածնունդ աղանդավորներ եկան աշխարհ, գրեցին ու քարոզեցին: Նրանցից ոմանք Շնական[1] փիլիսոփայությամբ ուզեցին մարդու անձից հանել ամոթի ու պատկառանքի հանդերձն ու թույլ տալ, որ նա, հրապարակում՝ բաց

[1] Կինիկյան:

երկնքի տակ, անասունների նման խառնագնաց լինելով, ծաղր ու ծանակի առնելով ու քամահրելով սուրբ ամուսնության ու մարդու բանականության պատիվը, չամաչի:

Ոմանք էլ ծայրահեղ մոլեռանդությամբ վարդապետեցին, թե նույնիսկ ամուսնական կյանքը չար անառակություն է, ու լավ կլինի, որ մարդիկ հրաժարվեն ամուսնությունից, խորշեն կանանցից՝ իբրև չար արարածներից, տղամարդիկ Դիոգենեսի նման անինչք, անտուն, անընտանիք կարասաբնակ լինեն՝ միանգամայն արհամարհելով մարդկային բանական կյանքն ու հասարակությունը: Այսպիսի անլուր, այլանդակ ու անօրինակ հայհոյություն մտաբերեցին այդ մոլորամիտ մարդիկ՝ եղծելով նաև մարդու սիրտը, զգացումը, բնական սերն ու բանականության լույսը:

Քրիստոնեական կրոնն ու եկեղեցին նզովքով հերքում են այդպիսի աղանդավորների մոլորության հոգին ու վարդապետությունը: Երկնքի վարդապետ Հիսուսը Մովսեսից առավել նվիրագործում է սուրբ ամուսնության անեղծ իրավունքը. բազմակնությունը բոլորովին ջնջելով ու մի Ադամի համար մի Եվա բավական համարելով՝ եկեղեցով՝ նոր դրախտով, հին դրախտն է վերանորոգում:

Ուստի իբրև եկեղեցու իշխանության ճշմարիտ ու հարազատ հպատակ՝ թե՛ եկեղեցու օրենքի նախանձավոր հայրերն ու հովիվները և թե՛ Աստծու տան ընտանիքի ճշմարիտ զավակները պարտավոր են ամենայն պատկառանքով պահել սուրբ ամուսնության օրենքն ու իրավունքը և արթուն աչքով հսկել այդ օրենքի ցանկը, որ խնամքով հյուսել է օրինադիր Արարչի ձեռքը: Թող չհանդգնի ըմբոստացող ու ստահակ մարդը հերձելով անցնել Աստծու պատնեշած ցանկից: Եթե միանգամայն արձակվի այդ ցանկը, ընդարձակ ասպարեզ կբացվի կամակոր մարդկանց առաջ, և ամուսնական օրենքը ոտնակոխ լինելով՝ կխախտվի ընտանեկան կյանքի այն հավիտենական ու հաստատուն հիմքը, որով և վերից վար կշրջվի մարդկային հասարակության ամբողջ կառույցը, և մարդկանց անասնակենցաղ դառնալով՝ կվատթարանա կյանքն աշխարհում, ու կմեռնի դրախտի յոթ հազար տարվա ընտանիքն իր ողջ սերնդով:

Ե
ՏՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ

Ինչպես որ երկու պսակավոր լծակիցներից ամուսնական միությունն է կազմվում, այդպես նաև նույն զուգակից միությունից ծնվում և աճում է ամբողջ ընտանիքը, որի նախածնող անդամներն են հայրն ու մայրը, իսկ ծնված անդամներն՝ արու ու էգ զավակները՝ քույրը, եղբայրը, որոնք երբ ամուսնանում են՝ փեսա-ներով, հարսներով ու թոռներով ավելացնում են ընտանիքի թիվը:

Ուստի ընտանեկան կյանքի ու տան չինութ-յան հիմնաքարեր են համարվում հայրն ու մայրը: Որքա՞ն սքանչելի, զարմանալի են մա-նանեխի այս երկու փոքրիկ հատիկները ամուս-նական պարտեզում, որ, ըստ Ավետարանի առակի, գնալով աճելով՝ մեծ ծառ են դառնում ու իրենց բազմապատիկ ճյուղերը սփռում աշ-խարհով մեկ, որովհետև ամուսնական արմա-տից ընտանիքն է հաստատվում, ընտանիքից՝

ժողովուրդը, ժողովրդից՝ այլևայլ ազգերը, ազգերից՝ իշխանական պետությունները, և պետություններից՝ ընդհանուր մարդկային համաշխարհային հասարակությունները: Սրանից հետևությամբ դատում ենք, որ մեր հասարակական աշխարհի ողջ կառույցն ամուսնական ու ընտանեկան պատվանդանի վրա է հաստատված, ժողովուրդների ոտքն ու պետությունների գահերը նրա վրա են դրված: Եթե քանդվի այս պատվանդանը, ժողովուրդն ու գահերը միասին կտապալվեն, ու այլևս չեն լինի ո՛չ աշխարհը, ո՛չ ադամորդին, ո՛չ կյանքը, և երկիրը կշրջվի նույն՝ առաջին, վիճակին. «Երկիր անեւեւոյթ և անպատրաստ» (Ծննդ Ա 2):

Ոչ ոք չի կարող ժխտել, թե այս այսպես չէ: Աշխարհի հին ազգերի պատմությունը, ներկա հասարակական վիճակը, համայն ազգերի կյանքը, ամենն ապացուցում են, թե ոչ միայն մարդկային զարգացումը, այլև ժողովուրդների, ազգերի, հայրենիքի ու թագավորության ճակատագիրը կախում ունեն ընտանեկան կյանքից:

Թեև մեր ընկերական երջանկության ու թշվառության մեջ կան այլևայլ արտաքին ուրիշ պատճառներ, բայց իմաստուն խելամտությամբ դիտելով աշխարհի իրողության սկիզբը, միջոցն ու վախճանը՝ տեսնում ենք, որ աշխարհի չարի ու բարու սկզբնածնունդ մայրն ընտանիքն է: Հապա ընտանեկան կյանքի չարության ու բարության պատճառն ո՞վ է: Դրա պատճառը ևս հայտնի է՝ ծնողներն են, հայրն ու մայրը, որոնց հպատակության տակ ապրում է ամբողջ ընտանեկան գերդաստանը:

Տունն ու ընտանիքը մի փոքրիկ թագավորության երկիր ու սահման են, որի նահապետական աթոռի վրա նստում են ծնողները. հայրն՝ իբրև թագավոր, մայրն՝ իբրև թագուհի, ու կառավարում են հպատակ ընտանիքը: Այս ընտանեկան պալատում և թագավորությունում ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ դավազան. ամեն տեղ հայրական սեր ու մայրական գորով է, դաստիարակողն ու խրատողը՝ ծնողների կենդանի օրինակը: Այս օրինակն այնքան բարի ու տպավորիչ է, որ կարծես հանում է զավակների վրա ծնողների պատճեն, ու զավակներն այդ սկզբնական տիպարն առնելով են մտնում ժողովրդի ու հասարակության մեջ: Այնուհետև օրինակ առ օրինակ տարածում է սկսվում, և ընտանեկան կյանքի բարի ու չար օրինակներից ժողովրդական կյանքը բարվոքվում է կամ գեղծանվում, շինվում կամ գայթակղությամբ փլվում, կենդանի մնում աշխարհում կամ մեռնում, ու հիշատակը վերանում է աշխարհից:

Ժողովուրդն ու ազգերը միայն հացով չեն ապրում, թագավորությամբ ու ազատությամբ չեն բարձրանում, այլ առավել բարոյական կյանքով, և այդ կենսական կյանք տվողն ընտանիքն է: Ուշադիր եղի՛ր, և ես նկարագրեմ քեզ:

Ժողովուրդը, եթե առաջադիմում է, իր առաջին քայլն ընտանեկան սրահից է առնում, եթե լուսավորվում է՝ իր լույսն ընտանեկան ճրագից է, եթե միանում է՝ իր ոգին ու կապն ընտանիքն է, եթե զորանում է՝ իր ուժն ու բազուկն ընտանիքն է, եթե հարստանում է՝ իր գանձարանն ու գանձապետն ընտանիքն է, եթե իր տունն ու սեղանը բարելից ու առատ է՝ արդյունաբեր անդաստանն ընտանիքն է, եթե դրախտի գետերը վազում են իր հրապարակ՝ աղբյուրը դրախտի ընտանիքն է, եթե իր կարասները լի են գինով, խմում, ուրախանում է՝ խաղողաբեր այգին ընտանիքն է, եթե բարեծնունդ զավակներով օրըստօրե բյուրապատիկ աճում է՝ իր նախածնող խնամատարն ընտանիքն է, եթե իր զավակներին բարեկիրթ քաղաքացի պատրաստել է ուզում՝ իր բարեկրթության առաջին համալսարանն ընտանիքն է, եթե երջանիկ ապրել է ուզում աշխարհում, թող հավատա, որ երջանկության կյանք բխող աղբյուրն ընտանիքն է, եթե երկրից հետո երկինքը ևս ժառանգել է ուզում՝ պահելով իր հայրենի կրոնը, հավատն ու եկեղեցին, այո՛, այդ սուրբ ավանդներն անեղծ, անկորուստ պահելու խորանն ընտանիքն է: Որովհետև այդ գանձերն ու Ավետարանի աննման մարգարիտն աշխարհի շահավաճառության հրապարակում, կառավարությունների դահլիճներում, գիտության ճեմարաններում անկորուստ չեն պահվում, ուստի դրանց հավատարիմ ավանդապահը միայն ընտանիքն է:

Այս նկարագրության մեջ տեսա՞ր, ուշադի՛ր ընթերցող, որ որևիցե ժողովուրդ իր բարոյական կյանքի տիպարն ուղղակի ընտանիքից է առնում ու պարծանքով ցույց է տալիս աշխարհին, թե ինքը բարեկիրթ ընտանիքի զավակ ու ժողովուրդ է:

Սրա հակադիր պատկերից հոգու աչքով նկատենք, որ չարաբախտ ու ապերջանիկ ժողովուրդն իր կյանքի զեղծումները դարձյալ նույն ընտանեկան պատկերից է ընդօրինակում ու երևան հանում աշխարհի հրապարակ: Ահավասիկ, ցույց տամ քեզ:

Ժողովուրդը եթե զեղծանում է՝ ներքին իր զեղծման սկիզբն ընտանիքից է, եթե դեպի կորուստ է դիմում՝ իր կորստյան ճանապարհ բացողն ընտանիքն է, եթե ծնկները թույլ են, իր քայլերն առաջ չեն գնում՝ լքումն ու կաղությունն ընտանիքից են, եթե երկու ձեռքով

հարստահարվում է՝ մի ձեռքն ընտանիքից է, եթե արտաքին թշնամիներից պաշարվելով ապշել է՝ իր ներքին մերձավոր ու բարեկամ թշնամին իր տան ընտանիքն է, եթե այս աշխարհի կյանքի ճանապարհում ուղղություն չունի՝ հոռությունն ընտանիքից է, եթե Եվրոպայի կախարդիչ նորասիրություններն իրեն պիտի կողոպտեն անխնա, թող զգաստ լինի ու տեսնի, որ մեծ կողոպտիչ ձեռքն իր ընտանիքն է, եթե իր զավակներն, օրըստօրե հացի կարոտ լինելով, թշվառանում են, քաջ հայտնի է, որ ընտանեկան մշակներն անաշխատ, ծույլ ու անհոգացող են, եթե առանց տնտեսելու, առանց կանխատեսելու՝ վատնում է իր վաստակն ու գանձը, ո՞վ չգիտի, որ շռայլության տնտեսապետն ընտանիքն է, եթե իր զավակներն առույգ ազնվածնունդ չեն, ուրեմն, ընտանեկան սերունդը հյուծվելով ստրկացել է, եթե իր օրիորդներն ու երիտասարդները վարակված են մաշողական ախտով, ո՜հ, դրանց մահ ու գերեզման փորողն ընտանիքն է: Ի վերջո, եթե ժողովուրդը կրոնը, հավատը, եկեղեցին թողնում, աստվածապաշտության պարտավորությունները սրտից հանում ու շրջվում է դեպի ջրհեղեղի դարը, ամբարիշտ կյանք վարում, իմացիր՝ այդ ապականությունը Կայենի դուստրերին հետևող ընտանիքներից է:

Տակավին շատ ու բազում է գեղծված ժողովրդի նկարագիրը, որ իր սկզբնատիպ գաղափարն իր բնակեցրած տան ընտանիքից է առնում. մենք միայն այսքանը բավական համարեցինք: Թող մյուս ու ժամանակի նոր բերած զեղծումները հայրերն ու մայրերն իրենք ուսումնասիրեն և հիշեն ու իմանան, որ առանց բարի ընտանիք կազմելու, առանց հայրական ու մայրական դաստիարակության՝ անհնարին է բարեկեցիկ ազգ, ժողովուրդ կազմել, որովհետև ինչ որ չինենք, ինչ որ կազմենք, պետք է գիտենանք, որ այն կազմող առաջին տարերքն ընտանիքն է:

Իսկ այդ ազնիվ ու պատվական տարերքն ո՞վ կստեղծի, ո՞վ կկազմի ու ո՞վ այն կպատրաստի ժողովրդի և ազգի համար: Ես ասեմ քեզ՝ այդ պատրաստող ձեռքն ուսումն ու դաստիարակությունն են, որ պետք է տարածվեն նախ այն բոլոր հարկերի տակ, ուր ընտանիքն է բնակվում: Ճշմարիտ է, որ ժողովրդական դպրոցները լույս ու գիտություն են սփռում, սակայն բարի դաստիարակության տուրքը միայն ծնողների սեփականությունն է, որովհետև տնային դպրոցի ծայրագույն ու բնական վարժապետը նրանք են, ուրիշ ոչ ոք այդ վեհ պաշտոնը չունի: Ընտանեկան դաստիարակության մասին դարձյալ

երկար պիտի խոսենք իր տեղում, այժմ սկսենք խորհրդածել ընտանեկան միության ու բաժանման, զարգացման ու նվազման, ներքին ու արտաքին պատճառների մասին:

Ընտանեկան միությունը բուն նահապետական կյանքի օրինակն է, որով ընտանեկան ճյուղերը, միշտ մի արմատից շառավիղվելով, ընտանիք են կազմում ու նույն տան հարկի տակ բնակվում, որ Դավիթը դրվատում է. «Որքա՜ն բարի, որքա՜ն վայելուչ է, որ եղբայրները բնակվում են միասին» (Սաղմ. ՃԼԲ 1):

Այս միության կյանքը գյուղացի ժողովրդի համար առավել փափագելի ու օգտակար է համարվել, որովհետև մի տան երկրագործ աշխատողները որքան շատ լինեն, այնքան ավելի կընդարձակվի նրանց վարուցանն, ու արդյունքում մեծ օգուտ կստանան:

Շինական ընտանիքում մեծ ցավ են զգում և տան ավերում ու քանդում են գուշակում, եթե ընտանեկան բաժանում է պատահում, և մեծ բախտավորություն են համարում, երբ ծերունի նահապետը ողջ է ու կառավարում է որդիներին ու թոռներին, նմանապես մայր տանտիկինն՝ իր հարսներին ու աղջիկներին: Որքա՞ն փառք և պարծանք են համարում, երբ նորածին մանուկների օրորոցներով է լցվում ու ցնծում

տունը: Դեռ մանուկ էի, սրանից շուրջ հիսուն տարի առաջ հայրս պատմում էր, որ Մշո Հացյաց գավառ իր ուղևորության ժամանակ հյուր է եղել մի գյուղական մեծ ընտանիքի և շատ է զարմացել, երբ նորածին մանուկների՝ քսանի չափ օրորոց է հաշվել, ամբողջ ընտանիքի թիվը, թերևս, Հակոբ նահապետի ընտանիքից ավելի է եղել:

Սակայն պետք է նկատել, որ ամեն բաժանում ընտանեկան բարգավաճման արգելք չէ. անշուշտ կարևոր է, որ ընտանիքի ճյուղերը բաժանվելով նոր-նոր ընտանիքներ կազմեն, ինչպես Եվրոպայի քաղաքակիրթ աշխարհում, ուր ավելի բարվոք է համարվում, որ չափահաս զավակները բաժանվելով ուրիշ ընտանիքներ կազմեն: Այս դրությունը հարմար ու օգտակար է միայն այն ազգերին ու քաղաքաբնակ ժողովուրդներին, ուր դաստիարակությունն առաջ է գնացել, և ուր բաժանված զավակները միայն ստացած ժառանգության բաժինն առնելով չեն հայրենի տնից ելել, այլև միաժամանակ գիտություն, ապրելակերպ ու դաստիարակություն ստանալով, որոնց ժառանգությունն առավել անկորուստ է ու մեծահարգի:

Իսկ մեր հայրենի աշխարհի և նույնիսկ գաղթական հայերի համար ընտանեկան անտե-

ղի բաժանումը միշտ վնասակար է, մանավանդ, երկրագործ ժողովրդի համար, որոնց ուժն, արդյունքն ընտանեկան միության ու միաբան աշխատանքի մեջ է, եթե բաժանվեն, միացյալ զորությունը կՁլատվի և իսպառ ուժաթափ կլինեն: Ընտանեկան նահապետները Նոյի դարից ի վեր միության հրաշքը փորձառությամբ են ճանաչել: Ուստի այդ առաքինի տան ծերունիներն իրենց մահվան օրն, իբրև վերջին կտակ, միշտ այն են ավանդել ողջ ընտանիքին, որ նրանք սիրով ապրեն, միաբան կենան, չբաժանվեն ու չավերեն շեն տունը: Թերևս փորձառության հետ Ավետարանից սովորել են նաև այդ միության բարձրագույն դասը. «Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է, և ինքն իր մեջ բաժանված ամեն քաղաք կամ տուն կանգուն չի մնա» (Մատթ. ԺԲ 25):

Թողնենք արտաքին պատճառները, որ պատահար են. ի՞նչն է արդյոք ներքին պատճառը, որ խռովում է տունն ու բաժանում ընտանիքը. այդ ինքնին հայտնի է՝ ատելությունը, նախանձն ու վայելքների անհավասարությունը, խստությունը, կողմնակալությունը, անհավատարմությունը, անվստահությունը, ի վերջո, մեծերի անխոհեմ ու հոռի վարքագիծն ու փոքրերի ստահակությունը և այլն: Այս և այսպիսի առիթներով

է խռովվում տունը, զավակները բաժանվում են ծնողներից, եղբայրը՝ եղբորից, և երբեմն ամուսիններն՝ իրարից:

Արդյոք ի՞նչն է հնարն ու դարմանը, որ միշտ սիրակապ միության ու խաղաղության մեջ ապրեն ու շարժվեն: Նոր աշխարհը սովորեցնում է, որ դրա միակ դարմանը մարդկանց կատարյալ կրթությունն տալն է, ոչ թե միակողմանի կրթությունը. այսինքն՝ մարդու կեսին կրթել, կես մասին լույս տալ, և նրա մյուս կես մասին թողնել կույր, խեղճ, ստրուկ ու ապուշ: Ուզում եմ՝ մարդիկ իմանան, որ երկու սեռին էլ առանց խտրության պետք է կրթություն տալ՝ յուրաքանչյուրին իր կոչմանը պատշաճ, որպեսզի ընտանիքի յուրաքանչյուր անդամն իր իրավունքն ու իր պարտքը ճանաչի, մեկը մյուսի խոսքը հասկանա, միաբան խորհեն, միաբան, առանց կաղալու՝ ընթանան տղամարդը կամ կինը, ծնողները կամ զավակները, հարսը կամ սկեսուրը:

Այսպես, երբ նոր աշխարհի մեջ հավասար կրթություն է պետք ընտանեկան միությունը պահելու համար, մարդը զարմանում է, թե հապա ի՞նչ բան էր և ի՞նչ զորություն, որ հին աշխարհի նահապետական կյանքում անխզելի էր պահում ընտանեկան միության կապը:

Զարմանալ պետք չէ. այդ միությունը պահելու համար բավական էր ունենալ տուն կառավարող նահապետի հայրական պատկառանք, մեծ տանտիկնոջ ժրագործ տնտեսվարություն, զավակների ակնածանք ու մեծարանք ծնողների հանդեպ, հարսների հլու-հնազանդություն և ամենից ավելի կրոնի երկյուղածություն ու աստվածապաշտության հավատք:

Այս ինքնակամ ու ազատ առաքինությունները նահապետական ընտանիքի համար համարվել էին իբրև բնական օրենք ու նախնական ապրելակերպի բարի ժառանգություն, որ ավանդաբար փոխանցվում էին որդուց որդի, և ջանում էին միշտ անեղծ ու անարատ պահել: Դրանց մնացորդ նշխարները դեռ երևում են հայկական աշխարհում, մանավանդ հողագործ ժողովրդի մեջ:

Սակայն աշխարհն ու ժամանակը ամեն բան հեղաշրջում են: Արևմտյան նոր քաղաքակրթության կյանքը հեղեղի պես դեպի արևելք է գալիս և ողողեց Կոստանդնուպոլսի ու ծովեզրյա քաղաքների հին կյանքը: Ո՞վ կարող է այս հեղեղի դեմ թումբ քաշել: Անշուշտ, այս հեղեղը պիտի գնա հասնի մինչև Մասիսի ստորոտը և ողողելով Նոյի գերդաստանը ևս՝ առհասարակ պիտի քշի ու իր հետ տանի բոլոր ազգերի հին կյանքը: Երանի՜ թե մեր կյանքի միայն հոռի

մասը տաներ. ո՜չ, պարզն ու ուղիղը նույնպես միասին տանելու է: Շատ քաջ են այն ազգն ու ընտանիքը, որ հոռին կթողնեն ու պինդ կբռնեն իրենց նախնական կյանքի լավ և ուղիղ մասը: Արժե նկատել, որ արևմտյան քաղաքակրթության այս հեղեղի ջուրը շատ խառնուրդ ու պղտոր է. չարն ու բարին, լույսն ու խավարը, անկրոն գիտությունը զուգընթաց են իր հետ: Ուստի հայ ընտանիքն այժմվանից պետք է իր աչքը բացի գիտության լույսով ու պատրաստվի բարի դաստիարակությամբ. միայն սրանով կարելի է քաղաքակրթության խառնուրդից բարի մասն ընտրել: Իսկ եթե լույսն ու դաստիարակությունը թողնի, ապուշ ու տգետ լինելով՝ բարի մասն ընտրել չգիտենա ու իր բերանը բացի հեղեղի դեմ, ամե՜ն, ամե՜ն ասեմ քեզ, ուշադի՛ր ընթերցող, հայ ընտանեկան կյանքը պիտի խեղդվի: Ավա՜ղ այն ընտանիքներին, որ փոխանակ մի կողմ քաշվելու, հեղեղի հոսանքի առաջ կանգնած՝ փորձ են փորձում, թեև իրենց իսկ աչքով տեսնում են, որ շատ ընտանիքներ խեղդվել են, ու նրանց դիակները մինչև այսօր տատանվում են Բոսֆորի ծովի երեսին, որով և իսպառ ջնջվեց նրանց ընտանեկան սեռն ու սերունդը: Այնպես չկարծեք, թե արևմտյան այդ հեղեղն իր զեխության մեջ միայն արևելյան ընտանիքներին է խեղդում, ո՜չ, վստահ լինելով՝

այդպես չխորհենք. նույնիսկ Եվրոպայի քաղաքակիրթ աշխարհում շատ ընտանիքներ են խեղդվում ու ջնջվում: Լոկ նրանք են ապրում ապահով, որոնց փրկության տախտակը միայն ընտանեկան կրթությունն է:

Հետևենք ու հավատանք ուրեմն, որ այդ է միայն հայ ընտանիքների ապավենը. թող ամեն ընտանիք գրկի այդ կրթության փայտը, որ Քրիստոսի կյանքի փայտի պես պիտի պատսպարի իրենց:

Զ
ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԽԱՓԱՆԱՐԱՐ ԶԵՂՈՒՄՆԵՐԸ

Մարդիկ բնությունից ամուսնության պտուղ ու արգասիք են ու բնությամբ սիրում են ամուսնությունը՝ անտեսելով այն բացառությունները, որով մարդն իր ազատ կամքով, իրավունքով կամ ուխտով, կամ ուրիշ արդարացի առիթներով խույս է տալիս ամուսնությունից:

Ուստի աշխարհի մարդկանց ամենամեծ մասը սիրում ու հարգում են ամուսնական կյանքը և իրենց նախահոր պես հրճվում են, երբ իրենց կողքին տեսնում են իրենց նախատիպ պատկերը, որ Աստված մենավոր մարդուն իբրև ընկեր, օգնական ու զուգակից տվեց: Համայն աշխարհի ամուսնական ու ընտանեկան կյանքը վկայություն է այն մասին, որ ընդհանրապես մարդիկ ցանկանում են ամուսնանալ, որ-

դի ծնել, ընտանիք կազմել ու միշտ կենդանի պահել իրենց տան փառքն ու տոհմական հիշատակը:

Իսկ եթե իրոք այս այսպես է, այլևս ի՞նչ խափանարար առիթներ կան մարդու առաջ:

Ընդարձակ մտքով եթե քննենք, առհասարակ շատ բազմապատիկ են, որ մարդու հնարած գեղծարարությունները առհասարակ լինում են և՛ ներքին, և՛ արտաքին. գլխավորները թվեմ քեզ, ու դու ինքդ դատի՛ր. ահավասիկ՝ սանձակոտոր ազատություն, անառակ կյանք, զեխության պերճանք, չքավորություն, ստրկություն, ծառայական վիճակ, պանդխտություն, քաղաքացիական օրենք ու երկրի հանգամանքներ և այլն, որոնց մասին ես միայն համառոտ պիտի խոսեմ: Մնացածը թողնում եմ, որ դու ինքդ ժողովրդի կյանքում տեսնես և ուսումնասիրես:

Մեր ժամանակը վկա է, թե ինչպես ոմանք, սանձակոտոր ազատության մեջ ցանկասիրության ընդարձակ ասպարեզ գտնելով, այլևս հարկ չեն տեսնում համեստորեն միավորվելու, և առանց ուխտի ու դաշինքի, առանց եկեղեցու օրհնության, սուրբ ու ողջախոհ առագաստից դուրս՝ ամենուրեք, հագուրդ ու ճարակ են գտնում իրենց ցանկության կրքից ու մարդկային ամոթն արհամարելով՝ արձակ ու համարձակ ապրել են ուզում աշխարհի օրինակարգ հասարակության մեջ այնպես, կարծես թե մարդկանց համար չկան պարտավորություններ ու իրավունքներ, չկա ամոթի ու պատվի զգացում: Մարդիկ, առանց իրապես հայր ու մայր կոչվելու, մերձենում են մոլի սիրով, և այն դժբախտ անծին կամ ծնված մանկիկները դատապարտվում են իրենց ապօրեն ու մեղապարտ ծնողների պատճառով. կամ լույս աշխարհ գալով՝ չքանում են, կամ իբրև անհայր, անմայր անծանոթ որբեր, աշարհիս երեսին անտեր մնալով, գութ ու գորովանք են գտնում միայն եկեղեցում:

Սանձակոտոր ազատության կյանքը ընտանեկան չէ. ո՛չ համեստության մեջ է պատսպարված, ո՛չ ամուսնության վկայագիր ունի, կամ այն սպիտակ անմեղության ծածկույթը, որը ծածկում է մարդու ամոթույքը: Նա մերկ շրջում է հրապարակում, կարծես թե գիտուն և միաժամանակ իմաստակ է: Շնական փիլիսոփայությամբ համոզում է իր միտքն ու թույլ է տալիս, որ իր անժուժկալ կիրքն ազատորեն ղեկավարի: Թե նվաստ ու սինլքոր է՝ իր պատվի ու անունի համար նա իր ռամկությամբ ոչինչ չի զգում, թե հարուստ է, ազնվական է, կար-

ծում է, թե մամոնայի զորությունը կամ անվան փառքն ու վարկը կարող են ծածկել իր ամոթույքը: Մարդկային ակնածանք ու մեղադրանք հատկապես նրանց, որոնք համարում են իրենց Եվրոպայի քաղաքակրթությանը հետևող գավակներ, ու իրենց մեծ ուսմունքը, կյանքն ու զբաղմունքը վառ սիրավեպերն են և այլն: Ահա այսպես սանձակոտոր ազատությունն ու անառակությունը խափանարար են լինում ամուսնությանը:

Զեխության մոլությունը թեպետ անառակ ու անհամեստ կյանքի սպառելի նյութն է, սակայն այս նյութը սոսկ արտաքին անառակության համար չի սպառվում, այլ նույնիսկ ընտանեական կյանքում ավելի շատ կենցաղի ու տնտեսական կարիքների համար, որոնք այնքան են շատացել, որ գրեթե խեղդել են ամուսնության պետքն ու կարիքը: Միթե չե՞ս հավատա, ընթերցո՛ղ, որ հայ ընտանիքներից շատերը պերճ ու փառասեր զեխության մեջ պարանոցաթաղ են եղել: Եվ գիտե՞ս, թե ի՞նչն է նրանց սրտի ու սիրո հաճույքը. շքեղ տուն, թանկագին կահկարասի, կառք ու սիգաճեմ ձիեր, անբավ զարդ, անհուն նորասիրության ձևեր, սնապարծ ցուցամոլություն, ունայնամիտ տենչանք և այլն: Այս բոլոր պերճանքները, մի մեծ բանակ կազմելով, զինվորվում են պարզ կյանքի դեմ և հաղթահարում են ամուսնական սերը, ինչպես մորեխի բանակը ցորենի արտերն է սպառում, այդպես էլ այդ պերճանքներն են ուտում, սպառում են ամուսնության բաժին սեղանի հացը. ո՛չ հարսի օժիտն են թողնում, ո՛չ փեսայի վաստակը, և ինչ փույթ, երբ այս կարգի մարդիկ զեխ ու մեղկ կյանքն ավելի նախադաս ու հաճոյական են համարում, քան ամուսնությունն ու ընտանիքը:

Դու չե՞ս տեսնում, ընթերցո՛ղ, այն ընտանիքները, որ առանց խնայելու, ամենայն շռայլությամբ հոգում են զեխության անպետք պետքերը և մոռանում ամուսնական կյանքի պետքն ու պարտավորությունները. զարդասիրության բուռն տենչն ամուսնությունը մեռցրել է:

Զգիտեմ, ո՞ւմ առավել մեղադրենք, անփեսա օրիորդի՞ն, թե՞ անամուսին երիտասարդին, որոնցից մեկը պատասխանում է, թե ես հաճոյանալու համար եմ զարդ սիրում, կամ թե ես կին եմ, բնությունից զարդն իմ վայելչությունն է, իսկ մյուսն էլ, իբրև իրավացի փաստ, պատճառաբանում է, որ նույնիսկ ես էլ այդ զարդի համար եմ խորշում ամուսնությունից՝ նախատեսելով, թե ամուսնությունից հետո ինչպե՞ս հոգամ ընտանիքն ու ինչպե՞ս կարո-

ղանամ փայտ հասցնել զեխության կրակին, որ շատ ընտանիքների տներ վառեց, մոխիր դարձրեց, ավերակները դեռ մխում են, դեռ ծուխ է ելնում. ես տեսնում եմ ու այդ փորձերից իրավունք չունե՞մ եզրակացնել ու զգուշանալ ամուսնական վիճակից, և այլն:

Թող չարդարանան. երկուսն էլ հավասար արժանի են մեղադրանքի, որոնց դատաստանն ու վճիռը կայացնում են մեր ընտանեկան կյանքը դատող իմաստուն դատավորները:

Շատ զարմանալի է, որ երբ զեխ մարդիկ ամուսնությունից խորշում են, սակայն չքավոր ժողովուրդը, մանավանդ գյուղացի ընտանիքը ընդհակառակը սիրում է ամուսնությունը. ո՛չ նախատեսել են ուզում և ո՛չ ապագայի հոգ ու հաշիվ են անում, իբրև հասարակ առած՝ խոսում են իրենց մեջ. «Ամուսնանանք, հացն Աստված կտա», և հարսանեկան սեղանին դարձյալ այս օրհնությունն են տալիս. «Աստված շատ հաց տա մեր փեսային ու հարսին»: Գյուղացի հողագործ ժողովուրդն անխորհուրդ չէ, իր անուս վիճակի մեջ նախատեսություն ունի: Նա ամուսնություն է սիրում, որպեսզի ընտանիքում աշխատավոր մշակները շատանան: Նրան շատ տղաներ ու աղջիկներ են պետք: Նա միշտ այնպես է կարծում, որ ընտանեկան հարստության աղբյուրը ժրաջան զավակներն

են: Այս է պատճառը, որ հարկավոր ու կանոնավոր ամուսնությունն ավելի հասարակ ու շինական ժողովրդի մեջ է տարածված, քան թե քաղաքակիրթ համարվող ժողովուրդների ու ազնվականների մեջ:

Սակայն աշխարհի տնտեսագետների կարծիքին հետևելով՝ պետք է համոզվենք, որ չքավորությունը միշտ խափանարար է ամուսնության համար, որովհետև չքավոր ընտանիքները, թեև սիրում և բաղձում են ամուսնության, բայց չեն կարող բարգավաճել կամ ամուսնությունն արգասավորել: Ահա, մեր հարազատ ժողովրդի կյանքի փորձը ցույց է տալիս, որ չքավորությունն ու տառապանքը խափանարար են եղել ամուսնության ու բարգավաճման համար: Ա՜հ, թե որ հաց չլինի, մայրերն անոթի կմնան, և երբ մայրերն անոթի մնան, նորածին մանուկների կաթը կցամաքի:

Երանի՜ թե միայն այս լիներ չքավորության փորձանքը: Թող իրենք տառապեին աղքատությունից, միայն թե երկու ամուսին իրարից անբաժան ապրեին: Նորապսակ ամուսիններին ևս չքավորությունը չի խնայում. անգամ քաղցր հայրենիքից ու սիրո գրկից հանելով՝ պանդխտության է տանում:

Այսօր մեր հայրենիքի քսան հազարից ավելի

պանդուխտ զավակներ տառապում են մայրաքաղաքում: Հինգ, տասը, տասնհինգ ու մինչև քսան, երեսուն տարի օտարության մեջ տառապելով, հայրենի հողից ու իրենց նախնիների գերեզմանից զրկվելով՝ շատերն օտար երկրի ու հողի տակ են թաղվում, և ո՞վ է նրանց վրա խաչքար տնկում ու գրում հիշատակը: Եթե ստույգ վիճակագրենք հայ ժողովրդի այս պանդխտության չարչարանքների վիճակը, այն շատ ողբալի է, որովհետև տիրապետող չքավորությունից սպառվում ու չքանում է ընտանիքն, ու հետևապես նվազում է հայ հին ու բազմաճոխ ազգը:

Բացի չքավորությունից՝ ամուսնությանն ու բարգավաճմանը մեծապես խափանարար են նաև երկրի թե՛ բնական և թե՛ պատահական հանգամանքները, այսինքն՝ հողը, ջուրը, օդը, ժողովրդի բարոյական ու նյութական կյանքը և այլն: Սոսկ հավատալով չենք խոսում, ահավասիկ, տեսնում ենք, որ գիտությունն ու քաղաքավարությունը մարդկանց ընտանեկան կյանքը բարելավում են, ժողովրդի զավակներն օրըստօրե բազմապատկվում են, ու ամեն տարի Եվրոպայի բոլոր ազգերից հարյուր հազարավոր գաղթական ընտանիքներ գնում են Ամերիկա: Իսկ Ասիական աշխարհը թափուրանում

է ժողովրդից: Երբեք պետք չէ զարմանանք ու հետազոտենք այս ամենը. պատճառները խիստ հայտնի են: Աշխարհ, որի ժողովուրդը դեռ տգետ է, անուս է, անարվեստ է, կյանքն իր հնության մեջ է, առաջադիմության տարերք չունի, ճնշվում և հարստահարվում է թե՛ իր ձեռքով, թե՛ օտարի, իր հացը դառնության հաց է, իր ջուրը՝ կարոտի, իր օրերը վշտաբեր են, իր կյանքն՝ ապերջանիկ, նա միշտ դողում է այն բոլոր արհավիրքներից, որ իրեն շրջապատել են: Ինչպե՞ս կարելի է հուսալ, որ այդպիսի ժողովուրդը հարսանիքի թմբուկ զարկի, պարի, ամուսնանա, ընտանիքի հայր լինի, ժողովրդի թիվն ավելացնի, ու ազգը՝ Հայկի սերունդը, բարգավաճի, բարձրանա:

Հայ ժողովրդի այս անհուսալի վիճակը մեծապես արգելք ու խափանարար է իր ամուսնական կյանքի ու բարգավաճման համար, բայց տակավին մխիթարվում եմ մեր հայրենի ժողովրդի ընտանեկան կյանքով, որ թեպետ տառապյալ ու աղքատ է թե՛ հայրենիքի և թե՛ պանդխտության մեջ, սակայն որքա՞ն քաղցր ու նվիրական պարտականություն է նրանց համար ամուսնությունն ու ընտանիքը: Նոյ նահապետի հարազատ թոռները նրանք են իսկապես, որ չեն մոռանում իրենց մեծ պապի այն սուրբ

հիշատակները, որ նահապետական կյանքը ժառանգություն է թողել իր հետնորդ զավակներին: Այդ ժառանգությունն ի՞նչ է, գիտե՞ս. գանձ չէ, ոսկի ու արծաթ չէ, ադամանդ չէ, այլ դրախտի ամուսնական օրհնությունը, որ Ադամից սկսած, նահապետից նահապետ անցնելով՝ հասավ մինչև Հաբեթի ու Հայկի տուն, որի ապրող զավակներն այդ Աստվածապարգև հարստության տերն ու ժառանգորդն են: Դու չե՞ս զարմանում, մտախո՛հ ընթերցող, թե ինչպես այլևայլ պատճառներից ու գաղթականության երեսից այսքան ժամանակ դեռ չեն մնաց Հայկի տունը. թեև իր փառքի շուքը կողոպուտի մատնեց, բայց շատ պինդ պահեց այս օրհնությունը, որով մնաց ու դարձյալ պիտի անջնջելի մնա Հայկի տան ու ընտանիքի հիշատակը Հայոց աշխարհում:

Ո՛վ դուք հայրենիքի անմահ ընտանիքներ, խնամքով պահեցե՛ք այդ սուրբ օրհնության ավանդը, որպեսզի աճի, կենդանի մնա Հայկի տան նահապետական սերունդը:

Ինչպես տեսանք, ստույգ է, որ դառը չքավորությունն ու պանդխտությունը մեծապես խափանարար են հայ ժողովրդի ամուսնական կյանքի համար: Բայց այդ կյանքի հետ արժի նկատել նաև գաղթական հայերի վիճակը.

իսկ որո՞նք են արդյոք խափանարար առիթները նրանց համար, որ հայրենիքից դուրս, մեծ մասամբ մայրաքաղաքում են բնակվում: Այս կարևոր կետն՝ իբրև վիճակագրական խնդիր, պիտի ուշադրության առնենք:

Պատմությունն ավանդում է, թե Կոնստանդնուպոլսի հայ գաղթականության թվականը Հովակիմ պատրիարքի օրոք է սկսվում, որ մոտ է գրեթե հինգ հարյուր տարվան: Այս ընթացքում, որ ամբողջ հինգ դար է, մինչև ո՞ւր է հասել կայսերական քաղաքում բնակվող հայերի աճը: Ես կարծում եմ տասնհինգ կամ շատշատ հազիվ քսան հազար ընտանիք, որ պետք է կրկնապատիկից ավելի լիներ: Եվ ի՞նչն է այս նվազական թվի պատճառը: Պատճառները շատ ու բազմազան են թե՛ անցյալ, թե՛ ներկա ժամանակում:

Եթե հետևենք պատմությանը, Պոլսի գաղթական հայերի անցյալ կյանքը ոչնչով չէր տարբերվում բուն հայրենիքի ժողովրդի կյանքից, որովհետև սրանք ևս, քաղաքական փոփոխությունների ենթարկվելով, երբեք բարվոք վիճակ չունեցան, և իրենց ընտանեկան կյանքն առանց բարգավաճման մնաց:

Թեև հին խափանարար առիթները ներկայումս վերջացել են, սակայն նոր աշխարհն ուրիշ խափանարար միջոցներ է երևան հանել՝

դառն ու դժվարին, որքան հինը: Եվ որո՞նք են դրանք. դարձյալ կրկնում եմ, ընթերցո՛ղ, պերճանքն ու զեխությունը, որ իրենց անողոք արշավանքներով քանդեցին ու դեռ պիտի քանդեն գաղթական հայերի տունն ու ընտանիքը:

Երբ պերճանքն ու զեխությունը քանդում են, հապա ի՞նչը կարող է չինել ու բոլորովին վերացնել այդ խափանարար պատճառները, ի՞նչն է այս աղետալի հիվանդության բուժիչ դարմանը: Շատ խոսեցի ու դարձյալ նույնն եմ կրկնում. դրա զորավոր դարմանը գաղթական հայ ընտանիքի սթափվելով զգաստանալն է միայն: Իսկ եթե տակավին քամահրեն ծերերի խրատները, բարոյախոս դաստիարակների խոսքերը չընդունեն, տնտեսագետների հաշիվները մերժեն ու շարունակեն իրենց կորստյան ճանապարհը, այլևս ոչ մի ճար չի լինի նրանց ուղղելու, բացի միայն ապագայի թշվառաբեր օրերի, որում նրանք պիտի փութան դեպի զգաստություն՝ հիշելով Դավթի խոսքը. «Շատացան նրանց հիվանդությունները, որ այսուհետև հաճախակի են դառնալու» (Սաղմ. ԺԵ 4): Դավիթը Հակոբի տան ու նրա համառ ընտանիքի համար է ասել այս խոսքը, բայց կատարումը Հայկի տան համար ևս հարմար է:

Աղոթում եմ ձեզ համար, հայ գաղթակա՛ն ընտանիքներ, թող բացվի ձեր զգաստության աչքը՝ դուք ներկայի մեջ տեսնեք այն կորստաբեր օրը, տեսնեք ու բարվոքեք ձեր ընտանեկան կյանքը: Այս եմ միայն ձեզ համար աղոթում, հայրենիքի՛ որդիներ, որ դուք ազատ մնաք այս ավերիչ զեխությունից: Ձեր փառքն ու պերճանքը թող լինեն միայն հայրենի հողն ու դաշտը, ջուրն ու բազմազան ծաղիկները, եղնամոլը, մաճն ու արորը և շինականի անպաճույճ խրճիթը:

Է
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆԱԿԻՑ ԱՄՈՒՍՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ինչպես տեսանք դրախտի ընտանիքի նկարագրության մեջ, Տեր Աստված թույլ տվեց Ադամին, որ ինքն իր կենակից ընկերոջն ընտրի ինքնակամ ազատությամբ, և երբ նա դժկամանալով վարանեց՝ չգտնելով մի պատշաճագույն ընկեր տարասեռ անասունների կարգից, այնժամ խնամակալ Աստված, կնոջը կողից ընտրելով, հարսնացրեց փեսա Ադամի հետ, որն իր անդրանիկ ստեղծված ամենասիրելի որդին էր:

Իսկ ո՞վ պիտի լիներ Ադամի համար հարսնընտիր հայր, երբ նա ամուսնական ծնողներ չուներ: Իր ծնողն ու հայրը միմիայն Արարչապետի խնամակալությունն էր: Ուստի ինչպես նախահոր դեպքում, կենակից ամուսին ու հարս ընտրելու իրավունքն ամուսնացող փեսայի անժխտելի իրավունքն է, ինչպես և հարսի անբռնադատ ու հոժարամիտ հավանությունը:

Որովհետև հարսը ստրուկ չէ, այլ որպես ազատ ընկեր իր փեսային, նույն հավասար իրավունքն ունի՝ ինքը ևս իր ազատակամ հավանությունը նվիրելու փեսային, որի գեղեցիկ օրինակը տեսնում ենք Ռեբեկայի վարքում: Երբ Աբրահամի հարսնախոս ծառա Եղիազարը պնդում էր, որ առանց հապաղելու, հետևյալ օրն ևեթ Ռեբեկային առնելով ճանապարհ ելնի, հարսի ծնողներն ու եղբայր Լաբանը աղաչեցին նրան, որ կույս Ռեբեկան տասը օր էլ իր հոր տանը մնա: Եվ երբ Եղիազարին չկարողացան համոզել, նրան խնդրեցին Ռեբեկային ևս հարցնել, թե համաձա՞յն է գնալ: Թերևս կարծում էին, որ կույսը ծնողական սերը փեսայի կարոտից ավելի կնախընտրի: Եվ երբ կանչում ու հարցնում են, թե կգնա՞ս, ամոթխած կույսը իսկույն պատասխանում է, թե՝ այո՛, կգնամ, և ծնողներն, անմիջապես զիջելով, ճանապարհում են նրանց: Այս հարսնախոսության դեպքը մեզ համոզում է, թե որքան ազատ էր կինը նահապետական դարում: Կնոջ ազատությունը շատ հին իրավունք է: Եվրոպայի իրավագիտությունն այն նոր չհնարեց, այլ միայն վերանորոգեց:

Բայց չենք կարող ժխտել, որ այս պարագայում ծնողները ևս մեծ իրավունք ունեն՝ իբրև հայր ու մայր, իբրև փորձառու ու խելահաս,

որովհետև շատ անգամ է պատահել, անցյալում ու ներկայում բազում ապացույցներ կան, որ թե՛ փեսացու երիտասարդը և թե՛ կույսը շատ անգամ վրիպել են իրենց ազատակամ ու եռանդավառ ընտրության մեջ: Իսկ ծնողների ընտրությունը հազիվ է սխալվում, և սրա պատճառը խիստ պարզ է. որովհետև թե՛ երիտասարդը և թե՛ կույսը գրեթե միշտ կրքի բերմամբ ու բուռն սիրո զգացումով են տեսնում ու հավանում, և շատ անգամ աչքն է իրենց դյուրթում: Իսկ ծնողները ծանր խորհրդով, երկար հետազոտությամբ հազիվ են հավանում ու ընտրում: Ես խոսում եմ այնպիսի ծնողների մասին, որ իրենց ընտանիքի գլխին, արդարև, բարի հայր ու բարի մայր են հանդիսանում, և որ արթուն ու աչալուրջ են, գիտեն լավապես որոշել իրենց զավակների ամուսնության բախտը: Բայց շատ մեղադրանքի են արժանի այն ծնողները, որ կամ աչալուրջ ու խոհական ընտրություն չունեն կամ շահի ու այլևայլ գաղտնի հանգամանքներից դրդված՝ իրենց զավակներին, նույնիսկ իրենց ձեռքով, զոհում են անհարմար ամուսնությամբ՝ չխնայելով ու չնախատեսելով ապագա ընտանեկան աղետը:

Ամուսնական ընտրության առաջին զգուշավոր պայմանն այն է, որ առանց արյունակցութ-

յան լինի, ինչպես սահմանել է աստվածային օրենքն ու եկեղեցու հայրերի կանոնական սահմանը: Թեև ոմանք կարծում են, որ այս օրենքը դրական է կամ մարդկանց մտացածին գյուտ, բայց այն ոչ միայն բնական է, այլև բանական մարդու համար նվիրական է ու սուրբ: Նրանով է, որ մարդու ազնվությունը բարձրանում ու զանազանվում է անազգի ու խառնազույգ անասունների կարգից ու քաջառույգ բեղմնավորում ընտանեկան պարտեզի մատաղատունկ ծառերը: Արյունակցական ամուսնությունը ոչ միայն եկեղեցու օրենքին է բարոյապես հակառակ, նաև բնապես վնասակար է ազնվասերունդ ընտանիք կազմելուն: Առ այս են միաձայն վկայում հին ու նոր աշխարհը, տգետն ու իմաստունն առհասարակ, նաև արդի ժամանակիս քաջափորձ բնագետներն ու բժիշկները, որ փորձով ապացուցում են ազգակից ամուսնության չար հետևանքները:

Որքա՞ն անբարի է մեր ժամանակը, որում այս վսեմ օրենքի գիրը սկսել է հետզհետե եղծանվել, ու հին զեղծարարությունը օրըստօրե բազմանում է ազգի մեջ, որը Ներսես Մեծը վերջացրեց ու տաժանելի աշխատությամբ հազիվհազ կարկատեց այդ օրենքի ցանկը: Եվ գիտե՞ս, ուշի՛մ ընթերցող, թե որոնք էին հայ

ազգի կարգից այդ աստվածագիր ցանկը հերձող ձեռքերը: Հասարակ ժողովուրդը չէր, աղքատ ընտանիքները չէին, այլ հայ նախարարներն ու իշխանազուն ընտանիքները, որ առանց ակնածության ըմբոստանում էին եկեղեցու սահմանադրության դեմ ու հայրապետի հովվական գավազանը խորտակելով՝ ամուսնանում, զավակներին ամուսնացնում էին մերձավոր ազգախառնությամբ, և դրա պատճառը միայն իշխանական պերճությունը չէր, այլ առավել վատ՝ ագահության նախանձը, որ տոհմական հարստությունը պահվի, ու այն ժողովրդի արժանավոր զավակը չժառանգի:

Դատեցեք, հա՛յ ժողովուրդ, ո՞վ է պատասխանատու, որ այս եղծումն այժմ էլ տարածվում է ազգի մեջ. նրա՞նք, որ փքված հպարտանալով իրենց զորությամբ՝ ըմբոստանում են այս օրենքի դեմ, թե՞ մենք՝ եկեղեցու պաշտոնյաներս, որ չկրելով մեր այն վեհ նախնիների սաստող ու նախանձավոր հոգին՝ անկարող ենք լինում հսկել օրենքի ցանկն, այլ խորհում ենք ժամանակի կեղծավորության հետ ու դրա անունը դնում խոհեմություն, քաղաքականություն, ժամանակի պահանջի վարմունք, երբեմն էլ, երբ հաջողվում է օրենքը ծանրագնով վաճառել, այդ ևս համարում ենք մեզ համար պարծանք,

գործունեություն, ազգի շահութաբերության մի գյուտ: Երբ գավազանի իրավունքը մի կողմ դնելով՝ ապիկար հովիվներս թույլատրում ենք, որ գործադրվեն այս գեղծումները, մի՞թե դու իրոք բարկանում ես, հա՛յ ժողովուրդ: Այո՛, մի պահ զայրանում ես, բամբասում կղերներին՝ ցույց տալով, թե օրենքի շատ նախանձավոր ես: Շուտ է անցնում քո այդ զայրույթը: Դու հետո մեղմանում ես ու մոռանում սպասվող դատաստանդ և սկսում ես մեզ ու մեր օրինազանցությունը գովել. թե մենք ժամանակի ազատության համեմատ վարվեցինք, թե ազգասիրություն գործեցինք, հոգ չէ, թե օրենքի ցանկը փոքր-ինչ քանդվեց, ազգի նյութական շահը ևս նկատել է պետք և այլն: Թողնենք այս դատաստանն՝ ուրիշ անգամ տեսնելու, դառնանք ճառիս նպատակին:

Ամուսնական ընտրության երկրորդ պայմանն է երկու կողմից եղած հանգամանքների համեմատությունը. համեմատություն՝ ըստ հասակի, համեմատություն՝ ըստ վիճակի, պետք է համեմատել նաև երկու ամուսինների բարքն ու վարքը և երկու ոչ մերձավոր ընտանիքների կյանքն ու հարմարությունը: Պետք է ամենայն զգուշությամբ երկու կողմից էլ նախապես զուգակշռել այս երկու հանգամանքներն

ու այդպես հավանություն տալ իրար: Ապա թե ոչ, շատ անգամ, ինչպես հաճախ տեսնում ենք, անհարմար ու անպատշաճ խնամիությունից ընտանեկան կռիվներ, բաժանումներ են առաջանում ու խանգարում ընտանեկան հանդարտ ու խաղաղ վիճակը:

Այս դժվարին ապագայից ազատվելու համար նոր խնամիացող ընտանիքների պարտքն է, որ երբեք չմոռանան համեմատության չափն ու ճշտությունը՝ իմանալով, որ բովանդակ տիեզերքը համեմատության չափով է կառավարվում: Որքա՞ն անբնական ու մեծ խիղճ պիտի ունենան, որ բռնությունը, հրապույրը կամ թե շահը կարողանան միմյանց պատվաստել երկու ամուսիններին, երբ մեկը դալար նորատունկ է, մյուսը՝ հինավուրց հաստացած ծառ, որ աշնան մոտ է, իր դեղնած տերևները պիտի թոթափի, բունը փտած է, ու ճյուղերն սկսել են չորանալ: Օրհնյալ լինեն մեր եկեղեցու սահմանադիր հայրերը, որ օրենքով հաստատել են կույսը՝ կույսին, այրին՝ այրուն: Ամուսնության այս համապատշաճ օրենքը մեր հայրենի դավառներից շատերն են երկյուղածությամբ պահում: Իսկ Պոլսում ու ուրիշ ծովեզրյա քաղաքներում այդ օրենքը, համարվելով իբր հին ու անպետք, անուշադրության է մատնվել ժողովրդի ու միաժամանակ եկեղեցու հայրերի կողմից:

Մեկի հարցին, որ եթե մի կտրիճ նորապսակ երիտասարդի ամուսին տարաժամ մեռնի, նա պարտավո՞ր է մի այրի կնոջ հետ ամուսնանալ, մի հարց էլ ես եմ տալիս. եթե փեսան նույնպես ապաժամ մեռնի ու իր հարսը այրիանա, որի կյանքը նորաբաց գարնան պես դեռ ծաղկահասակ է, կաղաչեմ, որ ասես, ո՞րն է արդար դատաստանը: Ինչպես որ խղճում ես նորապսակ փեսային, նույն խիղճը չե՞ս զգում նորածաղիկ հարսի հանդեպ, թե՞ ուզում ես, որ նա անամուսին, անպտուղ, սևաքող գնա մինչև գերեզման: Եթե փեսան փափագի, որ դարձյալ կույս ամուսին առնի կամ կույսի փեսա լինի, արդյո՞ք այրի հարսն իրավունք չունի այդպես փափագելու: Նա բյուրապատիկ երջանիկ կհամարի իրեն, եթե բախտավորվի ու թող ոչ կույս փեսայի, գեթ այրի փեսայի ամուսին դառնա:

Սա մեծ զրկանք ու ոճիր է կանանց ու տառապյալ այրիների համար, քանի որ աշխարհի դատավորները տղամարդիկ են: Խոսքիս իմաստը չլինի՞ թե խեղաթյուրես, հետամո՛ւտ ընթերցող: Ես չեմ ասում, որ կանայք դատավորական աթոռին նստեն, այլ ուզում եմ ասել խոսքի ճշմարտությունը, որ ալևոր դատավորներն այս դատաստանի մեջ աչառելով են վարվում, և այս բարոյական հարստահարությունը դեռ շատ պիտի ծանրանա մանկամարդ կանանց վրա, քանի որ ժամանակը հոռի ազատության զեղծումներն է ավելացնում:

Հարսնընտրության պայմաններից այսքանը միայն հիշելով՝ այժմ խոսենք նշանադրության խորհրդի մասին, որ երկնային պսակի նախօրհնությունն է, որ կատարում է եկեղեցին վկանեռով հանդերձ՝ հրապարակավ ցույց տալով, որ եթե հիշյալ կույսը նշանվեց մի երիտասարդի հետ, այլևս ոչ ոք իրավունք չունի ուրիշի համար խոսել կամ նշան տալ:

Նշանադրության խորհուրդը շատ հին ավանդություն է, և այն տեսնում ենք նահապետական ընտանիքում: Աբրահամ նահապետն իր հավատարիմ ծառա Եղիազարին Խառան է ուղարկում, իր հայրենի ազգատոհմի տուն, որպեսզի Իսահակ որդու համար հարսնախոս լինի: Տերն առաջնորդում է հավատարիմ ծառային, ու նա Խառանի ջրհորի գլխին գտնում է պարկեշտ Ռեբեկային: Այնտեղ Եղիազարը հավատում է, որ կույսն ըղձակա[1] է իր փեսային ու այլևս չսպասելով ծնողների հավանությանն՝ իսկույն նշանում է նրան՝ դնելով մատանին մատին և ապարանջանները բազկին, որ փեսայի

[1] Այսինքն՝ փափագող:

կողմից ուղերձ է հարսին՝ իբրև հավանության ու սիրո նշան:

Ընտանեկան այս պարզ ու անկեղծ սովորությունը, որ ավանդաբար հասել է մինչև օրս, թերևս Աբրահամից առաջ Նոյի ընտանիքից է սկսվել:

Երանի՜ թե մեր հարսնախոսները Եղիազար ծառայի պես հավատարիմ լինեին, առանց կեղծելու, առանց նենգելու, առանց որևիցե խարդախ միջոցներ գործ դնելու՝ սրտի պարզությամբ կատարեին այդ զգուշավոր ծառայությունը, որ ընտանեկան միության առաջին կապն է և պետք է ամրապնդել ամենայն հավատարմությամբ ու մեծ սիրով:

Նշանադրությունից հետո նշանված կույսի սուրբ պարտքն է իր աչքի խանդակաթ սերը դարձնել միայն նշանի մատանուն և հիշել ու միշտ մտքում պահել, որ ինքը նշանված է, հարս պիտի լինի, այլևս իր համար աշխարհում ուրիշ ոչ ոք չկա՝ բացի իր փեսայից, որին էլ միայն պետք է նվիրի իր մաքուր, կուսական սերը:

Այս պարտականությունները փոխադարձ են ու ոչ միայն հարսի համար են, այլև փեսայի, որ թեպետ ինքն ազատ է, ամենուրեք ազատորեն շրջում է հրապարակում, բայց պետք է փակի իր աչքը, ամփոփի իր միտքը, պահի իր սրտի

անբծությունն ու ոչ ոքի չցանկանա տեսնել՝ բացի իր նշանածից, որի պես թեպետ չունի ոսկե ու աղամանդե հուշարար մատանի, բայց հուշարար մատանու պես է իր հզոր սերը, որով նա կապվում է իր կարոտելիի հետ: Մահն ու աշխարհն այդ կապը չեն կարող քանդել, եթե չքանդի իր ձեռքը կամ նենգավորի դավը:

Արևմտյան քաղաքակիրթ ազգերի մեջ, իբրև ընտանեկան սովորություն, թույլատրված է. նշանված կույսն ու երիտասարդն ամուսնությունից առաջ կարող են իրար հետ հաճախ ու ազատորեն տեսնվել, խոսել ու զբոսնել հասարակության մեջ ու տանը: Պոլսում և ուրիշ մի քանի քաղաքներում ևս մտել է այդ ազատ վարմունքն, ու հայ ընտանիքները ևս սկսել են փափագել այս ազատության մասին: Սակայն այսպիսի ազատ վարմունքի ու տեսակցության մեջ կատարյալ կրթություն ու դաստիարակություն է պետք, առավել ևս կրոնի երկյուղածություն ու պատկառանքի շնորհք:

Թող չպարծենա արդի աշխարհը, թե իր ուսյալ ու կրթված զավակները Հակոբ նահապետի չափ ժուժկալության շնորհք ունեն, որ ամբողջ յոթ տարի իր նշանած ու սիրեցյալ Ռաքելի համար հովվական ազատ կյանքով համբերեց Խառանի արձակ դաշտերում: Զգիտեմ՝ այս պարզ

հովվի սքանչելի ժուժկալությանը արդի ազատատենչ երիտասարդությունն ինչպե՞ս է վերաբերվում, զարմանո՞ւմ է, թե՞ ծաղրում, որ Հակոբն ապուշ ու անզգա մարդ է եղել:

Իսկ մեր հայրենիքի այլևայլ գավառների նախնական սովորությունները, մանավանդ քաղաքներում, դժվարությամբ են թույլատրում այդ ազատ վարմունքը, բայց գյուղական կյանքում բնականորեն ու ըստ հարկի՝ ազատ է թողնված թերևս նահապետական դարից ի վեր, որովհետև գյուղերի փոքրությունը, դաշտային ազատ կյանքն ու աշխատանքը միշտ ներում են, որ գյուղի աղջիկները բացերես ու խառը շրջեն երիտասարդների հետ: Նրանց համար գյուղական պարզ կյանքը, դաշտերը, լեռներն ու աղբյուրների գլուխներն են համարվում հասարակության պարտեզ, ուր շարժվում, տեսնվում ու խոսում են ընկերաբար, միայն թե նշանվելուց հետո կույսը միշտ պարտավոր է քողով ծածկվել՝ ի պատիվ իր փեսայի, միաժամանակ ցույց տալով, որ ինքը նվիրյալ է և այլևս ազատ չէ:

Բայց գյուղական պարզ ընտանեկան կյանքը ևս դարձյալ ազատ չէ պատահական զեղծումներից, ուր մերթընդմերթ զեղծումներ են լինում, որոնց պատճառը մեծ մասամբ ծնողների խստասիրտ համառությունն ու ընծայասիրության բաղձանքն է, որ շատ ու զանազան պարգևներ են պահանջում փեսայի կողմից և նոր միայն զիջում ու համաձայնվում տալ իրենց աղջկան: Երբ այս վատ սակարկությունը չի հաջողվում, բայց մյուս կողմից էլ կույսն ու երիտասարդը սրտով կապված են լինում իրար հետ, անշուշտ, սերը հաղթահարում է: Առևանգող երիտասարդը մեղադրանքի է արժանի, բայց առավել մեղավոր են համարվում աղջկա ծնողները, որ իրենց ազատ զավակին՝ իբրև գերի, ստրկաբար վաճառքի են հանում՝ ոտնահարելով մարդու և սիրո պատիվը, որոնց թագն ու արժանավոր գինը փեսայի բարոյական արժանիքներն ու սերն են միայն և ոչ թե ուրիշ նյութական վճարները:

Հերթն եկավ, չմոռանանք խոսել նաև Պոլսի ու ուրիշ քաղաքների ընտանեկան այս նորամուտ ուսումի ու վատթար սովորության մասին, որի սակարկության եղանակն առավել պարսավելի է, քանի որ այնտեղ, երբ հարսնախոսության ժամանակ գավառացի գյուղական ընտանիքներն իրենց աղջիկներին են վաճառքի հանում, ապա այստեղ՝ քաղաքակրթության մեջ, բնակվող ընտանիքները երիտասարդներին են վաճառքի հանում:

Ձեզ եմ դիմում, ազգի՛ դատավորներ, դատեցե՛ք ու վճռեցե՛ք՝ այս երկու վաճառահա-

նության եղանակներից ո՞րն է առավել վատթար: Երկուսն էլ հավասար ստրկությո՞ւն չեն: Սակայն չինական ընտանիքն իր ռամկավարությամբ հանդերձ, թերևս, կարդարանա քաղաքակրթության առաջ, որ կնոջ պատիվն ու արժանավորությունը բարձրացրեց ու այն թանկ գնով վաճառել ուզեց: Իսկ մեր քաղաքակիրթ ընտանիքները, երբ երիտասարդներին են վաճառքի հանում, ի՞նչ միտք ու նպատակ են ունենում, արդյո՞ք այնպես են համարում, թե տղամարդն առավել բարձր ու թանկագի՞ն է՝ մեջբերելով այն խոսքը, որով Պողոսը գնահատել է տղամարդուն՝ կնոջ գլուխ անվանելով, հետևաբար, գլխի պարտականությունը բարձր է ու պետք է թանկ վաճառել: Երանի՜ թե այդպես լիներ. տղամարդիկ ճանաչեին իրենց նախապատվության պարտականությունները, ճանաչեին ամուսնական սիրո անգին արժանավորությունն ու այն չփոխեին նյութական դրամի ու ինչքի հետ:

Բայց ես գիտեմ, ձեր նպատակն այդ չէ, ո՛վ դուք, շահավաճառ ընտանիքներ: Աղաչում եմ, մի՛ զայրացեք, որ այս անունով եմ ձեզ կոչում: Շահագիտությունը հրապարակի շուկայից ելավ ու ձեր սիրտը մտավ, սպանեց ամուսնական սերը, ամուսնությունն առևտրի փոխեց. օրիորդի չափազանց օժիտով կամ սակարկյալ գումարով և այսպիսի անարգ ու նվաստ միջոցներով եք դուք ուզում ձեր որդիների ապագա կյանքը ապահովել: Մեր իմաստուն նախահայրը միայն մի անօժիտ կնոջն՝ իբրև իր կենակից ընկեր, բավական համարեց ու նրան բարոյական կյանքի կոչեց: Դուք, Աստծու այս պարգևած կյանքը շատ չհամարելով, ուզում եք, որ կնոջ բերած նյութական կյանքո՞վ ապրեք, ուզում եք, որ կինն իր հացը, իր հանդերձը, իր հայրենի տանի՞ց բերի: Վա՜յ, որքա՞ն շատ գոհ կլինեք, եթե իր ամուսնու համար մի մեծագումար դրամագլուխ ևս հետը բերի ու նվիրի. հոգ չէ, թե սիրտն ու սերը չի նվիրի, հոգ չէ, թե կրթություն ու կնոջը վայելուչ արժանավոր ձիրքեր չունենա:

Թողնեմ ձեր ծնողներին, ուղղակի ձեզ հետ խոսեմ, ո՛վ դուք ամուսնացող հայ երիտասարդներ: Զգիտեմ ձեր հայրերը, մայրերն ու ընտանիքը ձեր ամուսնությունը շահավաճառության միջո՞ց են համարում ու ճի՞շտ են մտածում՝ առանց ձեր քրտինքի ձեր բախտը ապահովել, դուք հավանո՞ւմ եք, դուք գիջո՞ւմ ու նվաստանո՞ւմ եք այնքան, որ կնոջ հացով ապրեք, կնոջ շնորհիվ հասարակության մեջ պատիվ ունենաք, և այնժամ կինը պարծենա, թե ես հարստացրի ամուսնուս և այլն:

Եթե ասեք՝ թող մեր կանայք մեզ հարստություն բերեն, թող նրանց բարոյական արժանիքները պակաս լինեն, այդ հաշիվը ներկա աշխարհում ավելորդ է, մարդիկ, ինչպես կուզեն, թող դատեն, ուրեմն ցույց եք տալիս, որ պատասխանատվությունից ու իրավունքից զուրկ եք, պատվի զգացում չունեք: Ցույց եք տալիս նաև, որ անգործ եք, անարվեստ եք, անվաստակ եք, պարապ շրջում եք, միայն բախտի սիրահար եք, հայրենի արհեստները մերժում եք, նվաստություն եք համարում: Իբրև թե մտքով ու կրթությամբ բարձրանալով՝ ազնվացել եք. երկաթագործի, կոշկակարի ու դերձակի խանութով անցնել չեք ուզում, դեպի Բարձր Դուռն եք նայում, կառավարության պաշտոններն եք ուզում, բաղձում եք քիչ քրտինքով աշխատավարձ առնել՝ չտեսնելով նրանց վիճակը, որոնց կյանքն ու սկզբունքն այդ է միայն: Կամ քիչ զիջելով՝ վաճառականություն ու գրագիտություն եք ցանկանում: Բարի է ձեր այս ցանկությունը, միայն թե դրամագլուխն է պակասում:

Արդյոք սրա համա՞ր եք դուք ամուսնությունը սիրում: Այդ միջոցով, թերևս, կարողանաք մի դրամագլուխ ձեռք բերել ու երանի՜ թե կարողանայիք այն իմաստությամբ գործի դնել: Երանի՜ թե բախտի այս կորստյան հրապարակը մոռանայիք ու ընտրեիք շահավաճառության միայն արդար ու ապահով վաստակը:

Դուք, հա՛յ երիտասարդներ, մի սովորական խոսք ունեք, որ իբրև իրավացի փաստ եք մեջ բերում, ուստի տրտնջալով ասում եք, թե մենք հարսնացու օրիորդներից որքան էլ որ հարստություն պահանջենք, այդ դարձյալ նրանց տարապայման պճնասիրության համար է: Բայց քննենք այժմ, թե պճնասիրությունը նաև ում համար է: Պատճառաբանող կանայք քաջ պատասխան են տալիս, թե մեր պճնասիրության պատճառը միայն մեր վայելչասեր բնավորությունը կամ խաբուսիկ նորասիրությունը չէ, ինչպես ենթադրվում է, այլ ավելի շատ տղամարդկանց աչքին հաճոյասիրության կերպերով հաճոյանալը:

Ուրեմն, ստույգ է, որ դուք ևս հրապուրված եք ու իրոք սիրում եք պճնասիրությունը: Մի՞թե կանայք ապուշ են, փորձել չգիտեն: Ապա թե ոչ՝ իշխանության կշիռը ձեր ձեռքին է. չափ ու սահման դրեք, դուք տղամարդիկ եք, կնոջ տիրական գլուխն եք, հեղինակություն ունեք, հանճար ունեք, ուսյալ եք, կրթությամբ եք պարծենում, շահավաճառություն, վաստակ, գանձ, տնտեսություն, ամեն բան ձեր ձեռքում է: Աշխատե՛ք հասկացնել կնոջը, որ պճնասի-

րությունը ձեզ հաճելի չէ, հասկացրե՛ք, թե ունայնասիրություն է, կարճամտություն է, սնոտի մսխում է, տնավերություն է, վախճանը չքավորությունն է, և ի վերջո, ընտանեկան բարեկեցիկ կյանքն ու երջանկությունը կործանում է և այլն:

Հասկացրե՛ք նաև, թե կնոջ ճշմարիտ փառքն ու զարդն արտաքին փայլող ու մաշելի հանդերձով չի կայանում, այլ առավել նրա ներքին ոգու արտափայլող գեղեցկությամբ, որոնք են համեստությունը, անկեղծ ամուսնությունը, հավատարմությունը, երկյուղածությունը, հնազանդությունը, զավակների դաստիարակությունը, տնարարությունն ու տնտեսումը և այլն: Ցույց տվեք, թե առաքինի կնոջ նկարագիրն այս է, և իսկապես միայն այս է նրա ճշմարիտ գեղեցկության փառքը, որը ոչ կկեղծվի, ոչ ծաղկի նման կթոռոմի:

Իսկ եթե այնուամենայնիվ չհամոզվեն կանայք, դուք մեղավոր չեք, ձեռք քաշեք, թողեք՝ նրանք ունայն զարդի ու զեխության հետ ամուսնանան, որոնց սրտով ու հոգով անձնատուր են եղել:

Բայց դուք սպասե՛ք, հա՛յ երիտասարդներ, զեխության այս օրերը ժամանակը բերեց, զգաստության օրերն էլ դարձյալ ժամանակը պիտի

բերի, որում դուք և կանայք պիտի սթափվեք այս նոր խելագարությունից, ուրեմն և ուշ պիտի ճանաչեք ձեր անցյալի հոռի ընթացքն ու իմանաք, թե ճշմարիտ ամուսնության պայմանը սերն է, որ սերտ իրար է կապում երկու ամուսինների սրտերը: Ադամանդը, ոսկին ու այլ հարստությունները չեն կարող ամուր պահել այդ սուրբ կապը, երբ դրանք սպառվեն, իսկույն կքանդվեն այն բոլոր կեղծ կապերը, որ կա՛մ փեսայի ճոխությունը և կա՛մ հարսի հարուստ օժիտն են կապում:

Ես տեսա Հայոց Պատրիարքարանի դատարանում ու վկայում եմ, թե այդ կապերն այսօր որքա՜ն դյուրախզելի են, որովհետև երբ ամուսնական սերը նյութականի վրա է հաստատվում, նյութականն սպառվում է՝ սերը նահանջում է, իսկ երբ բնական, պարզ ու ճշմարիտ սիրո վրա է հաստատվում, մինչև գերեզման անշարժ է մնում միության կառույցը, և երբեք չի սպառվում ու չի աղքատանում սիրո հարստությունը: Երջանիկ են այդ սիրով միավորված ամուսինները, որ իրենց ընտանեկան կյանքի հիմքը միայն սիրո վեմի վրա են հաստատում՝ իմաստությամբ խորհելով, թե աշխարհի հողմերի ու հեղեղների բախման դեմ այդ կենդանի սիրո հիմքը միայն կարող է անկործանելի ու հաս-

տատուն պահել ընտանեկան կյանքի երերուն կառույցը:

Բավական համարելով այսքանը՝ ավարտում եմ հարսնախոսության ճառը, հորդորում եմ ձեզ ու աղոթում ձեզ համար, հա՛յ երիտասարդներ ու կույսեր, որ դուք զգաստությամբ խորհեք, շրջվեք ներկա կործանարար ճանապարհից, բաց թողնեք արտաքին նյութական կապերը, ճանաչեք ամուսնական սիրո բարձր խորհուրդն ու կապվեք եկեղեցու պատվիրանին վայել սուրբ սիրով միայն, որը կամրապնդի Աստծու արարող հզոր ձեռքը, որով միայն կապվեց դրախտի ընտանիքը:

Ը
ՀԱՐՍԱՆԻՔՆ ՈՒ ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԱՐՍԱՆԻՔԸ պսակի սուրբ խորհրդի հրապարակային ու հանդիսավոր արարողությունն է, ու շատ վայելուչ է, եթե ասենք՝ մարդու նոր կյանքի մուտքն ու տոնահանդեսն է, ուր հավաքվում են ազգականներ, բարեկամներ ու դրացիներ՝ շնորհավորելու և ուրախանալու: Այս մարմնավոր խմբին միանում է եկեղեցու հոգևոր խումբն ու իր օրհնությունը տալով՝ օրհնում թագավոր փեսայի ու թագուհի հարսի պսակն ու Աստվածային օրհնությամբ նվիրագործում երկու ամուսնացողների ուխտը, որ երկու լծակից ամուսիններին իբրև մի մարմին միավորելով՝ հայտարարում է, թե այսուհետև անբաժանելի են:

Միայն քահանայի ձեռքը չէ, որ կապում է պսակը: Նաև պետք է հավատալ, որ դրախտի

վճռով Աստված միացնում է նրանց, և մինչև մահ ու գերեզման մարդը չի կարող բաժանել: Այս խորհրդավոր դաշնագրի վրա, իբրև վկա, ձեռք են դնում Խաչն իր թևով, Ավետարանն իր խոսքով, պաշտոնյաներն օրհնությամբ, և սրանց հետ միաձայնելով՝ ժողովուրդը գոչում է՝ Ամե՛ն, եղիցի՛, եղիցի՛:

Դավիթն, իր սաղմոսի երգը հարսի ականջին նվագելով, հրավիրում է նրան փեսայի տուն. «Դուստր լսի՛ր ու տե՛ս, մոտեցրո՛ւ ականջը քո. մոռացի՛ր քո ժողովրդին ու քո հոր տունը, քանզի թագավորը ցանկացավ քո գեղեցկությունը» (Սաղմ. 44, 11): Իսկ Սողոմոնի բարձրախորհուրդ Երգում փեսան գովերգում է հարսին. «Ահա դու, ի՜նչ գեղեցիկ ես, ո՛վ իմ սիրելի, ի՜նչ գեղեցիկ ես. քո աչքերը նման են աղավնիների՝ հարսնաքողիդ տակ» (Երգ երգոց, 4, 1):

Եկեղեցին, այսպես ավարտելով պսակի մեծ խորհուրդը, այնուհետև ներողամտաբար թույլատրում է, որ հարսանքավորներն սկսեն իրենց պարերգությունն ու թմբուկ զարկելը: Այդ ևս առանց նշանակության չէ, որ վայելուչ կերպով բացատրում է Շնորհալի սուրբ հայրապետն իր Ընդհանրական թղթերում, թե հարսնիքի թմբուկը բարձրագոչելով ձայն է տալիս լսող ժողովրդին ու տեղեկացնում, որ հարսանիքը խավարի տակ ծածկված գաղտնի չարություն չէ, այլ եկեղեցու առաջ, լույսի առաջ, հրապարակի մեջ անպատրվակ ճշմարտություն է:

Ահավասիկ և մենք, մեր ուրախության թմբուկը զարկելով իբրև մունետիկ, բարձրաձայն քարոզում ենք. թող լսի ու տեսնի ամբողջ ժողովուրդը, որովհետև ամուսնության զավակները միայն ծնողների սեփականությունը չեն, նաև ժողովրդի իրավունքն է հիշել ու ճանաչել իր նորածին անդամներին, թե արդյո՞ք նրանք սուրբ ու պարկեշտ ամուսնության հարազատ ծնունդ են: Եկեղեցու ու ժողովրդի զավակները պետք է սուրբ ամուսնության հայտնի դրոշմն ունենան, և ժողովուրդն այդ իսկական դրոշմով ճանաչի իր զավակներին, ապա թե ոչ տարբերություն չէր լինի պոռնկորդու և սուրբ ամուսնության ծնունդների միջև:

Խորհում եմ, թե աշխարհի ուրախության այլևայլ մեծամեծ հանդեսները կարելի՞ է համեմատել հարսանիքի ուրախության հետ: Ո՛չ թագավորների թագադրության աշխարհախումբ հանդեսը, ո՛չ պալատների ու իշխանների մեծակոչ խրախճանքը և ոչ էլ ժողովրդի դասի զվարճալի խնջույքները արժանի չեն համեմատվելու: Ես այնպես եմ համարում, թե հարսանիքի սոսկ մի թմբուկն իտալական երաժշտությունից

ուրախալի է, և չինական փեսան բարձր է թա-
գապսակ թագավորից, որովհետև աշխարհի բո-
լոր ուրախությունները միայն մարդու ունայ-
նասեր մտքի անցողիկ զբաղմունք են, որում մի
պահ հաճույք, հրճվանք, փառք է զգում, բայց
սրտի ցանկության անհուն բաղձանքը երբեք
չի անցնում՝ դարձյալ գալիս ու տիրում է մե-
լամաղձիկ տխրությունը:

Իսկ հարսանիքի ուրախությունն իր սուրբ
նպատակով հանդերձ մարդու ապրելու համար
իսկապես կյանք և ուրախություն է. եթե ոմանց
կյանքն իր անչափ ցանկասեր տենչանքներով
վերջապես մաշվում ու սպառվում է, ապա ըն-
տանիք կազմողներինն անթառամ է մնում ու
իր նորաբույս ծաղիկներով զարդարում եկեղե-
ցու պարտեզը:

Թեպետ աշուն է իջնում մարդու կյանքին ու
նրան գերեզման նետում, ինչպես դեղնած տե-
ևևը ծառից, սակայն հարսանեկան օրհնությամբ
իր տոհմական ընտանիքն ու սերունդը կենդա-
նի պահող առաքինի մարդը միշտ ապրում է ու
կենդանի մնում, որովհետև նրա կյանքը հաջոր-
դաբար իր զավակներն են շարունակում:

Այժմ խոսենք հարսանիքի ուրախության
եղանակի ու պայմանի մասին: Ճշմարիտ է, որ
հարսանիքը ընտանեկան ուրախության մեծ

օրն է, և ո՞վ կարող է ասել՝ մի՛ կեր, մի՛ խմիր,
մի՛ երգիր, մի՛ պարիր, մի՛ զվարճացիր, քանի
որ այդ ամենը հարսանիքի ուրախության կա-
ևևոր պայմաններն են, միայն թե չափով, կշռով
ու պարկեշտությամբ լինեն:

Երանի՜ թե ծնողները, որ հարսանիքի կազ-
մակերպողներ ու հարսանքավորներ են, կամ որ
ազգական ու բարեկամ են առհասարակ, լավ
ճանաչեին հարսանիքի նշանակությունը, պա-
տիվն ու նրա խորհրդավոր մեծությունը, որով
թերևս մեծ զգաստությամբ կզգուշանային մեղք
չխառնել անմեղ ուրախության հետ:

Եւ դու գիտե՞ս, ընթերցո՛ղ, թե որն է այդ
մեղքը, որ մարդիկ սովորել են հարսանիքում
գործել ու մեղք չհամարել: Այդ մեղքն անչա-
փավորությունն է բոլոր վայելքներում՝ սեղանի
զեխություն, այլևայլ հանդերձանքի զեխութ-
յուն, հարբեցողության զեխություն և այլ այս-
պիսի զեղծումներ, որոնք շատ անգամ կռիվ
են ծնում, ու հարսանինքի տունը սգո տուն է
դառնում, երբեմն էլ երկու խնամիների նոր ըն-
տանեկան ազգակցական կապն է խզվում:

Հարբեցողությունը միայն կռիվ չի առաջաց-
նում, երբեմն նաև անհամեստ կերպեր ու շար-
ժումներ է առաջ բերում, օրինակ՝ անպարկեշտ
խեղկատակություն ծաղրի համար, անվայել ու

լկտի ցոփություններ, որոնք պարկեշտություն ու հարգանք սիրող ընտանիքի համար պետք է զզվելի համարվեն ու խորշեն այդպիսի կատակերգու հարսանքավորներից, որ հարսանիքի պատիվն ու ընտանեկան ուրախությունը խաղ են համարում, արհամարում են քաղաքավարության ու վայելչության շնորհը և գայթակղում պարկեշտ ընտանիքներին և նրանց դեռատի զավակներին, որոնք բնականաբար ծաղր են սիրում ու միշտ հակված են զվարճանալու:

Հոռի խեղկատակությունը տղաների համար չէ միայն հաճելի խաղ կամ զվարճություն, այլ առավել մանկամիտ մարդկանց համար, որոնց ճշգրիտ օրինակը կարելի է տեսնել թատրոններում, երբ ի վերջո մի զավեշտալի խաղ է սկսվում, ինչպե՞ս են ամենքը միասին ծաղրում: Զարմանալ պետք չէ, որովհետև մարդիկ ավելի շատ ծաղրի ու կատակի կյանքն են սիրում, քան թե լուրջ, ծանր ու զգաստ կյանքը:

Զմեղադրենք ժողովրդական ընտանիքներին, որ դեպքի բերումով են միայն իրենց հարսանիքի ուրախության օրվա այդ խեղկատակությունները սիրում, երբ աշխարհի պալատականների, իշխանների, ազնվականների հաճելի կյանքը խեղկատակություն է, և հենց դրա համար է, որ խեղկատակ աղվես ու կապիկ միմոսները նրանց դռներն են հաճախում:

Վերն ասել ու չեմ ուզում կրկնել, որ հարսանիքի տոնը չպիտի լուրջ ու անձայն լռությամբ կատարվի. եկեղեցին ներելով թույլատրում է, որ հարսանիքին մանուկները երգեն ու պարեն, քանի դեռ փեսան, ինչպես Հիսուսն է ասում, իրենց հետ է, միայն թե քրիստոնեական պարկեշտության, ընտանեկան պատվի ու վայելուչ քաղաքավարության պարտականությունները չմոռացվեն՝ կարծելով, թե հարսանիքը ծայրահեղ ազատություն և ուրախություն է նշանակում, որի վախճանը միշտ տրտմառիթ հետևանքներն են:

Ցավով ու փորձառությամբ եմ ասում, որ հարսանեկան չափազանցությունները ոչ միայն թագավորի թագ ու պսակով քողածածկ հարսի հարգանքն են քամահրում, այլև եկեղեցու սուրբ խորհրդի վեհությունից չակնածելով՝ առանց երկյուղածության են վարվում: Սա բավական չէ, շատ անգամ էլ պսակադիր սուրբ տաճարի գավթում Բաղդասարի հարբեցողության խրախճանն է սարքվում, հարբեցողների բարձրաձայն աղաղակներով պաշտոնի աղոթքի ու շարականի օրհներգության ձայներն են խանգարում:

Առհասարակ այս ռամիկ ու գռեհիկ վար-

մունքը դեռ վերջերս էլ տիրում էր Հայքի այլևայլ գավառներում, բայց ներկայումս բավականին չափավորված է, ու հայտնի է, որ այս զգաստության շնորհը դպրոցն ու ուսմունքն իրենց լույսով շատ թե քիչ տարածեցին մեր ժողովրդի մեջ: Նաև ժամանակի նեղությունը հարկադրեց հայ աղքատ ընտանիքներին ուղղել իրենց հոգի ընթացքն ու թողնել նաև յոթնօրյա հարսանիքը և այն զեխ ու շռայլ ծախսերը, որ միայն ուտելու ու խմելու համար էին կատարվում, և հարսանիքի տունն իր ամեն լիությունից դատարկվում էր:

Ո՞վ չգիտի, որ յոթնօրյա հարսանիքի պատրաստությունը թերևս բավական կլիներ մի ընտանիքը մի երկու տարի չափավոր պահելու համար: Ես չեմ հիշում եմ մեր գավառացի ազգականների թե՛ քաղաքացի և թե՛ գյուղացի ընտանիքների այն մասին, որ պարտքով հարսանիք է անում, պարտքով այդ անպետք ծախսերը հոգում: Անցնում է հարսանիքը, և ուրախությունը տևում է մի փոքր ժամանակ. փեսան, ահա, պարտավորվում է թողնել ընտանիքն ու նորահարսի ամուսնական քաղցր սերը, գնալ պանդխտության, հոգալ իր պարտքն ու միաժամանակ ընտանիքի խղճուկ պարենը հայթայթել: Երկու պսակվածների համար այս միջոցը որքա՜ն դառն է ու դժվարին. փեսան իր պանդխտության մեջ է, հարսն՝ իր սևաքող առագաստում, օրերն անցնում են սրտամաշ անձկությամբ: Նրանց կյանքը լի է ամենայն դառնությամբ, մանավանդ, երբ սիրուց զրկելուց հետո, պանդուխտ ամուսինն իր պարտականությունները մոռանում ու հացից ևս զրկում է իր վշտացած կնոջը:

Ես չեմ ուզում այս կյանքի դառնությունն իր բոլոր կողմերով նկարագրել. մեկ այլ տեղում եմ թողնում դրա տխուր պատկերը վերարտադրել: Թողնում եմ նաև, որ մեր պանդուխտ եղբայրներն, այդ կյանքի դառնությունն ինքնուրույն ճաշակելով, զգան, խղճան ու ճանաչեն իրենց ամուսնական սուրբ պարտականությունները:

Ժամանակն ու ժողովրդի զարգացումը կրճատեց յոթնօրյա հարսանիքը թե՛ գավառներում, թե՛ նույնիսկ մեր մայրաքաղաքում: Ուտելու ու խմելու անտեղի ծախսերը հետզհետե գրեթե վերջացան: Սակայն ժամանակն ու անկատար ազատ քաղաքակրթությունը զեխությունն ու շռայլությունն ուրիշ կողմերով ավելի բազմապատկեցին. հանդերձի ու նորասիրության այլևայլ պերճանքներ, ոսկե, աղամանդե ու այլ թանկագին քարերով մատանի, պսակ, ոսկե շղթա, մանյակ ու այլ եվրոպական նորանոր զարդեր մտան մեր ընտանեկան կյանք, որով

շատ ընտանիքներ, այդ ճոխ հանդերձանքի պատրաստության հնարավորությունը չունենալով, հետ են կանգնում ամուսնական կյանքից, կարծես թե ադամանդն ու ոսկյա զարդերն ամուսնական կյանքում հացի չափ կարևոր են:

Առավել զարմանալին ու ցավալին այն է, որ առանց իրենց չափն ու վիճակը կշռելու՝ հասարակ ժողովրդի ընտանիքները ևս ձգտում են այդ պերճանքներին: Կարծում են, թե ադամանդն ու ոսկյա զարդն անհրաժեշտ օժիտ են հարսին, ու այսինչ կամ այնինչ հանդերձանքն է պետք հարսանիք անելու համար:

Այդ ապրուստի կարոտ ընտանիքները միշտ այնպես են երևակայում ու երազում, իբրև թե կոշկակար, երկաթագործ, դերձակ ու արհեստավոր ժողովուրդը կարող է աշխարհի պալատականների, հարուստ ազնվականների հետ մրցել ու նույն պերճությամբ ու կյանքով ապրել:

Մենք չենք մեղադրում, գիտենք, որ մարդկանց բաղձանքն ազատ ու անզուսպ է, բայց ի՞նչ օգուտ ունի այսպիսի բաղձանքների ձգտումը, երբ մարդը բուն կյանքի հացից ու ամուսնությունից է զրկվում: Նմանապես ի՞նչ օգուտ են տալիս հարսանիքի պատրաստության այն մեծամեծ հոգսերը, երբ ամուսնությունից հետո ընտանեկան կյանքում բազում հոգսեր են ավելանում, ու հացի աշխատավորները մարմնով մաշվելուց հետո չարաչար հոգածությամբ նաև հոգի ու կյանք են մաշում: Եվ եթե հարցնես, թե՝ ինչո՞ւ ես մաշվում, նա քեզ կպատասխանի, թե՝ «Կին առա, ամուսնացա, ծախսի հաշիվը ծանրացավ, որովհետև ճոխ հարսանիք արեցի, ֆրանսիական սեղան գցեցի, թողնելով հայկական գինին՝ հարսանքավորները Բորդոյի շշերով շատ կենաց բաժակներ պարպեցին, քսան տեսակ կերակուր ու անուշեղեն պատրաստեցի և այլն: Բացի այս՝ որքա՜ն գումար վատնեցի ադամադյա և ոսկյա զարդերի ու այլ կերպասեղեն զգեստների համար: Ամբողջ դրամագլուխը գրեթե ոչնչացավ, երջանիկ պիտի լինեի, թշվառացա:

Նոր ամուսնացող խեղճ երիտասարդն ուրեմն ուշ է զղջում ու փոշմանում իր անտեղի ծախսերի համար. երանի՜ թե կանխատեսությամբ գուշակեր այդ օրն, իր հարսանիքն ու այլ ամուսնական ծախսերը և չտեսներ այդ նեղ ու դառնաբեր ապագան, որ հարսանիքի ուրախությանը հաջորդող տխուր հոգածության կյանքն է:

Վերջ տանք հարսանիքի ճառին ու խրատենք ձեզ, հա՛յ ընտանիքներ: Կանխատես ու

սրատես եղե՛ք, այդ չար ապագան հարսանիքից ու ամուսնությունից առաջ գուշակե՛ք, թողե՛ք հարսանիքի զեխության պետքերը, թողե՛ք զարդերի շռայլ պերճանքները, ճանաչեցե՛ք պատվական ու սուրբ ամուսնության ճշմարիտ պայմանները, որ ո՛չ հարսանիքի մեծամեծ պատրաստություններն են, ո՛չ ոսկին, ո՛չ ադամանդը և ո՛չ էլ շքեղ զարդերի ցուցամոլությունները: Դրանք փչի պես խեղդում են ամուսնացածների ծաղկած սերը: Մի՛ հավատացեք նրանց, որոնք այնպես են կարծում, թե կնոջ արտաքին շքեղ զարդն ավելացնում ու զորացնում է սերը. ո՛չ, այդպես չէ, փորձն ու աշխարհը թող վկայեն, որ զարդն ու պերճանքն են սերը նվաճում, այնինչ շատ անգամ ընտանիքի կյանքից ծաղիկ սերը ցամաքում ու թոշնում է, երբ կնոջ զարդն ու պերճանքը պակասում են:

Ուստի աղոթել է պետք այդպիսի ընտանիքների համար, որ զգաստանան, ամուսնության ներքին ու ճշմարիտ սերը արտաքին պաճուճանքների հետ չխառնեն, ստույգ կշռեն ու իմանան, որ զարդի պաճուճանքն ամուսնական անբիծ սիրո համեմատ կշիռ ու նմանություն չունի: Բյուր մեղադրանքների է արժանի այն կինը, որ դրժում ու մերժում է սերն ու զարդն առավել է նախընտրում, և այն կինն է բյուր գովասանքների արժանի, որի համար զարդ, պերճանք, ադամանդ, ամեն ինչ իր ամուսինն է, նրա սերն ու պատիվը:

Ուստի հայրաբար հորդորում եմ բոլոր ամուսնացածներին, որ թողնեն փուչ պերճանքները, որ տանում են սեղանի հացն, ու փոխանակ լիության՝ չքավորություն է տիրում, այնուհետև խռովություն սկսվում, որովհետև սիրո կյանքն ամրապինդ պահելու համար մի՞թե գլխավոր պայմաններից մեկն էլ հացի ապահովումը չէ:

Թ
ՀԱՐՍԻ ՈՒ ՓԵՍԱՅԻ ԿՈՉՈՒՄԸ

Այս կոչումը սուրբ է ու նվիրական. Արարչի տիրական օրենքն է, դրախտի օրհնության ձայնն է, երկու զուգակիցների միության հրամանն ու հրավերն է, որով հարսին մայրության է կոչում, փեսային՝ հայրության:

Երկու պսակվածներն այս գորովալի ու խորհրդավոր բարձր անունները նոր են ստանում, և հատկապես այն օրից, երբ աշխարհին են ընծայում իրենց անդրանիկ զավակին: Տեղին է ասել, թե այդ անդրանկածին պտուղն է իր ծնողների կնքահայրն ու անվանադիրը, և որ առաջին սիրաշարժ բառերը հայրն ու մայրն են:

Չկան աշխարհում այլ անուններ կամ զանազան վայելուչ և փառավոր տիտղոսներ, որ հավասարվեն ու համեմատվեն այս սքանչելի անունների հետ:

Թագավոր, կայսր, իշխան, ժողովուրդ, ազգ

և այլ մեծափառ անուններն իրենց բարձրանշան տիտղոսներով հանդերձ ցած ու նվաստ են սիրելի ու պատկառելի հայր ու մայր կոչումներից, որովհետև հայր ու մայր անունները բոլոր այլ անունների նախասկիզբ արմատն են:

Թագավոր, իշխան, ժողովուրդ, ազգ՝ հայր ու մայր փարելի անունների ծնողական շառավիղներն են, որ նույն միացյալ արմատից ու երկճյուղ ընից բուսնում ու սփռվում են աշխարհով մեկ:

Դու տես, թե քանի՞ հատկանիշ ու խորհրդավոր նշանակություն ունեն այդ աշխարհանազ անունները. սեր, ծնունդ, կյանք, գորով, գգվանք, գութ, որդեսիրություն, խնամք և այլն: Երկու նորապսակ ամուսինները մինչ այդ սոսկ իրենց մկրտության անունով ու իբրև զավակ էին կոչվում, իսկ այժմ այդ անուններին ավելանում են նաև հայր ու մայր կոչումները, զավակ ծնելով՝ հասարակության կյանքում բարձրանում է իրենց կոչումն ու միանում երկնային Հոր հետ, որ տիեզերքի հայրն ու հեղինակն է և իր նորաստեղծ արարչությամբ, իբրև մարդկության նախածնողներ, նախապես դրախտում ծնեց հայր Ադամին ու մայր Եվային:

Օ՜, ի՜նչ զարմանալի է. երկինքն ու երկիրը միասին են մշակում ամուսնական ու խորհրդավոր դրախտը: Երկնքի Հայրը երկնքից է օրհնում, սրանք երկրի վրա զավակ են ծնում ու մեծացնում, բայց չգիտեն, թե ինչպես: Լո՜ւռ մնա, բնագե՛տ, դու ևս չգիտես այն խոր ու անհայտ օրենքները, թե ինչպես է մանուկն իր մոր արգանդում ձևավորվում իբրև մարդ, և ո՞ր ձեռքն է, որ այդ չքնաղ պատկերն անհուն ձևերով է նկարում: Ամեն ինչ բնական է, ասում ես, բնական օրենքով է, ու վճռում ես, թե այդ օրենքները հրաշք չեն մեր տգիտության դիմաց. կամ թե այդ հավիտենական օրենքները ուղղորդող չկա, օրենքն է ինքնին հրաշագործում: Ո՛չ, այդպես չէ, դու ևս խոնարհվիր քո հպարտացող գիտությունից, և մեզ հետ խոստովանիր ու հավատա, որ միայն Երկնքի Հոր ձեռքն է մանուկների փոքրիկ հասակները վեր քաշում: Երկրի ծնողները կաթն ու հացն են տալիս, Երկնքի Հայրը՝ լույսն ու հանճարը, սրանք ձեռագործ ու շինովի հանդերձ են պատրաստում, նա՝ բնական գեղեցկությունով զարմանազան զարդարում, սրանք մեծ աշխատասիրությամբ ուսում ու գիտություն են դասավանդում, նա՝ մանկան փափուկ ուղեղի մեջ խելքն ու հանճարը զետեղում:

Ահա այսպես երկինքն ու երկիրը միանալով մշտապես արարչագործում են մարդկության

հարատևող կյանքը: Եթե դրախտի ընտանիքում մի պահ դադարեն այս արարչագործ ու մշակող ձեռքերը՝ կյանքը կմեռնի, ու մարդը կվերանա աշխարհից:

Այսքան մեծ ու այսքան բարձր է հարսի ու փեսայի մայրության ու հայրության կոչումը: Երանի՜ թե մտախոհելով՝ ճանաչեին, թե ո՞ր կոչմանն են նվիրված, ու թե ի՞նչ նպատակ ունի մարդու ամուսնական կյանքը: Շատ ծանծաղամիտ ու կարճամիտ են նրանք, որ կարծում են, թե ամուսնությունը սոսկ մարմնի հաճույք է կամ խաղ ու զվարճանք և աշխարհի շահավաճառության մի հաճոյական ձև, և կամ թե բնավ կարիք չկա հայր ու մայր անվան, աշխարհում սեփական տուն ու ընտանիք կազմելու, ամեն բան անխտիր անորոշ թող լինի, զավակները ժողովրդինը համարվեն, ժողովուրդը՝ մարդկությանը, և մարդկությունն առհասարակ աշխարհում այնպես ապրի, ինչպես անտառում անասուններն ու երկնքում թռչունները, որոնց համար չկա ո՛չ տուն, ո՛չ ընտանիք, ո՛չ տոհմական սերունդ, ո՛չ սեփականություն և այլն:

Նվաստ, անասնաբարո ու ամբարիշտ են այդ մոլորամիտ մարդիկ, որ այդպես են կարծում, դատում: Ամուսնության, հայրության, մայրության ու ընտանեկան իրավունքները ջնջել, վերացնել են ուզում մարդկային հասարակությունից: Այնուհետև այլևս զանազանություն չէր մնա խոսուն մարդկանց ու անխոսուն անասունների միջև: Այդ թյուր կարծիքը մարդկանց կյանքը հանում է բանականությունից, արատավորում է հասարակությունը, քանդում է քաղաքակրթությունն ու թողնում, որ մարդը լոկ իր զգայական հաճույքով շարժվի ու ապրի:

Եթե մարդկանց կյանքը այդքան նվաստանար, չիմանային հայրության ու մայրության պատիվը, չգիտենային, թե ո՞րն է մարդկանց կոչումը, հոգու անմահությունն ու բանականության շնորհը, ուրեմն վաղ էր պետք, որ գնային առյուծի անտառն ու աղվեսի որջը: Այլևս հարկ չեր լինի տուն շինել, ընտանիք կազմել, քաղաք հիմնել, ընկերական կյանք վարել և այլն, որոնց մասին շատ թե քիչ գրեցի ամուսնության հոդվածում:

Երկու ամուսիններից յուրաքանչյուրը, հայրության ու մայրության կոչումից բացի, դեռ այլևայլ կոչումներ ու պարտականություններ էլ ունի, որոնք, ըստ նյութերի հարմարության, կքննեմ հետևյալ գլխում, միայն թե այստեղ չեմ մոռանում նշել, որ այդ երկու նորապատվաստ արմավենիները պետք է ամենայն խնամ-

քով ու անբիծ սիրով ծրարեն միմյանց, հարսն՝ իր համեստ քողով, փեսան՝ իր բաց ճակատով: Եթե մեկն արև է, իսկ մյուսը՝ լուսին, երկուսն էլ առանց ստվերող բծի պետք է փայլեն անարատ սիրո պարզ ճառագայթներով:

Հարսի հավատարիմ նշանաբանը և բուն բարոյական ու արժանավոր օժիտը սերն է միայն, սեր, որ անխառն է, անկեղծ է ու արտաքուստ շպարված չէ, սեր, որ խանդակաթ սրտով ու հոգով միանում է սերելու և կյանքը պահելու համար և ուրիշ այլ նպատակ չունի: Եթե աշխարհի բոլոր ադամանդները, բոլոր զարդերի պերճանքները, հարստության բոլոր գանձերը նժարին դնես՝ ամուսնական սիրո հետ չեն հավասարվի: Այդ նյութական օժիտը երբեք այն արժեքը չունի, որ գրավի բնական ու բարոյական սիրո օժիտի տեղը:

Հարսի նվիրական պարտքն է, որ նյութական օժիտից ավելի հսկի իր բարոյական սիրո օժիտը, երբեք այն չկորցնի, եթե այն մի անգամ կողոպտվեց, այնուհետև, շատ դժվար կլինի վերստին վերադարձնել: Նոր ամուսիններն՝ իբրև բարոյական ճարտարապետ, պետք է սիրո հիմքն ամուր դցեն, եթե սկզբից ևեթ այն քանդվի, այլևս հազար օժիտ չեն կարող հիմնել ու հաստատել:

Ամուսնական սերն անգին է, աննման ու մահից զորավոր, իր կոչումը՝ սուրբ ու խորհրդավոր, պատկերը՝ պարզ ու մաքուր: Թող սիրո այլանդակ վիպասանները չաղարտեն նրա պայծառ երեսը: Սիրո ճշգրիտ պատկերահանը Սողոմոնն է: Վայել է, որ նրա խորհրդավոր երգը հարսն ու փեսան փոխադարձ սիրո ձայնով երգեն միմյանց համար. «Ինձ իբրև կնիք դի՛ր քո սրտի վրա, իբրև մատանի դի՛ր քո բազկին, քանզի հզոր է սերը մահվան պես» (Երգ երգոց, 8, 6): Այո՛, հզորագույն է սերը երկու ամուսնացած սիրելիների միջև. երկու շնչով են շնչում, երկու ոգով են ապրում, երկու կյանքով են զորանում, եթե մեկնումեկը չլինի՝ սերը կմեռնի, որովհետև սիրո կյանքը երկու սրտերի միությունն է:

Ուրեմն ամուսնացածների մեծ կոչումն ու պարտավորություններն այն են, որ սիրո միացնող վեմը երկուսն էլ անշարժ ու անբաժանելի պահեն: Ոչ ոք չի կարող այդ վեմը շարժել, եթե այն, ինքն իրեն շարժվելով, չգլորվի: Նոր ամուսնացածների սերը գարնան եղանակն է, նորատունկ դրախտ է, ծաղկազարդ բուրաստան է, որ ամենայն խնամքով պետք է կանաչ ու մշտադալար պահել և երբեք չթողնել, որ ներքին ատելությունը կամ օտարաշունչ նեն-

գության խորշակը փչեն ու թառամեցնեն սիրո կանաչությունն և թոթափեն ամուսնության դրախտի վարդի թուփն իր սոխակով հանդերձ, ինչպես եղավ Եդեմ դրախտում, երբ հին բանսարկուն Աստծու ընտանիքին դավեց ու մահ բերեց աշխարհ: Պետք է գիտենալ, որ այդ բարակ սև օձը սիրո ու միության հավիտենական ոսոխն ու թշնամին է:

Հիսուսն սպանեց հին օձին, բայց նրա օրինակին հետևող արբանյակները դեռ շրջում են աշխարհում ու սողալով մտնում են ընտանեկան դրախտի հարսնարանն ու հրապուրիչ լեզվով թույն թափելով՝ սիրո կյանքն ու քաղցրությունը մահվան ու դառնության են փոխում:

Ուստի ամուսնասեր փեսան, որ ընտանեկան համեստության ու հավատարմության առաջին հսկող պահապանն է, եթե կցանկանա ազատ մնալ օձերի խորամանկությունից, թող նախազգուշանա՝ հիշելով դրախտի պատմությունը, որ դրդիչ օձն այն պահին էր մոտեցել Եվային, երբ նա միայնակ էր շրջում ու զբոսնում դրախտի ծառաստանում ու մեկ առ մեկ դիտում էր գեղեցիկ ծառերի պտուղները: Նա այն ժամանակ հրապուրվեց, երբ մի նոր ծառի պտուղ տեսավ, որը գեղեցիկ էր ու հաճելի նայող աչքերին:

Աշխարհն իրավունք է տալիս փեսային, որ հսկելով շրջափակի իր հարսի ճանապարհը, բայց և փեսայի ճանապարհն ու ոտքը պիտի փակվի ու կապվի, երբ նա արձակ ու ազատ շրջում է ամենուրեք: Հավատարմությունը հավասար է ամուսնական պարտավորություններում ու իրավունքներում, և արդարությունը կբողոքի, եթե փեսան ինքը ևս պահապան չլինի իր անձին, չփակի իր աչքն օտար հրապուրանքից ու կրքի ծարավով խմի օտար աղբյուրի ջուրը՝ բավական չհամարելով իր սեփական աղբյուրը, ինչպես խրատում է Սողոմոնի առակը:

Ամուսնական հավատարմության սուրբ պարտականություններն ամենայն հավատարմությամբ պահելու համար բավական չեն միայն աչքն ու հսկողությունը, առավել ևս անհրաժեշտ են մաքուր խիղճ, պատվի զգացում, ապագայի ամոթ ու չարաղետ հետևանքներից խուսափում և այլն:

Եվ որո՞նք են այդ ընտանեկան աղետաբեր հետևանքները. գնա դատարան ու կտեսնես, որ մինչև այնտեղ է հասնում այդ ամոթալի գործերի վախճանը, որ պատահելիս երկու ամուսինների միջև սերը մեռնում է, միությունը՝ քանդվում, նախանձի կրակը՝ խանձում սրտերն, ու նրանք միմյանց հետ վարվում են անհաշտ ատելությամբ: Եվ դու տես՝ այնու-

հետև ընտանեկան վեճ ու կռիվ է սկսվում. բողոք, դատաստան, մեկը մեկից անպատկառ չարախոսություն ու երբեմն էլ չար զրպարտություն, այն է՝ բնավ չեն խնայում ամուսնական պատիվն ու ակներև են հանում ամեն ինչ՝ ընտանեկան քողի տակ թաքնված ամոթը և այլն: Հետո այս հանգամանքների վախճանն է գալիս. պատիժ, տույժ ու տան բաժանում, որով ընտանեկան քաղցր ու խաղաղ կյանքը թե՛ նյութապես, թե՛ բարոյապես ապերջանիկ է դառնում, բաժանված ամուսինների պատիվն ու վարկն աղարտվում հասարակության մեջ ու եկեղեցու առաջ:

Թեև ամուսնական կյանքում կան ուրիշ շատ դառնահամ հանգամանքներ, ինչպես օրինակ՝ աղքատություն, թշվառություն, զրկանք, զավակների, երբեմն էլ իրենց կորուստ, ստահակություն ու աշխարհի այլևայլ փորձանքներ, որոնք շատ անգամ ընտանիքները կործանում են, բայց երբ ամուսինների սերը կենդանի է, քաղցր է, այդ ամեն դառնություններն անուշացնում է, թշվառ կյանքը դրախտ է դառնում, ապերջանկությունը՝ երջանկություն:

Իսկ երբ մեռնի ու դառնանա մտերիմ լծակիցների սերը, այնուհետև աշխարհի քաղցրությունն ու երջանկությունն իրենց ամեն հանգամանքներով թե միասին էլ գան, չեն կարող դառնացած սերն անուշության փոխել:

Եթե այսպես ու այսքան աղետաբեր է ամուսնական սիրո մահն ու դառնությունը, որ իբրև օձահար թույն ամբողջ ընտանեկան կյանքն է թունավորում, ուրեմն, ո՛վ հայ հարսներ և փեսաներ, ձեր մեծ կոչումն ու հավատարմության սուրբ պարտականություններն այն են, որ անմեղորեն շրջեք աշխարհի ընտանեկան դրախտում, խղճի արթնությամբ խույս տաք այն ազատաշրջիկ մարդկանց խորամանկությունից, որ եթե ուսյալ վիպասան են՝ դրախտի օձից ավելի գիտեն խորամանկել, եթե ռամիկ ու գռեհիկ են՝ գիտեն չամաչել:

Իսկ դուք, հայ գաղթական ընտանիքներ, մանավանդ, որ քաղաքակրթության մոտ եք ապրում ու թերևս երբեմն հիշում եք հին ժամանակի հարսների քողը, յոթնամյա անխոս լռությունն ու փեսաների ոտնկայս պատրաստակամ ողջույնը, որ պատրաստ են սպասավորելու, թեկուզև ագնվական լինեն, չգիտեմ, ըստ ձեզ, ինչպիսի՞ն է հայկական ընտանիքի այս ձևը, հավանո՞ւմ եք, թե՞ արհամարհում՝ համարելով վայրենություն նոր դարի ազատ աշխարհում:

Այնպես համարե՛ք, ես կլռեմ, բայց դուք հավատո՞ւմ եք, կարծո՞ւմ եք, որ ազատ աշ-

խարհի ազատության ճշմարիտ զավակներն եք: Դու ճանաչի՛ր քեզ, իսկ քո այժմյան կյանքն ու կրթությունը ես գիտեմ. դեռ նոր ես ելել խանձարուրից, ազատություն ես կանչում, դեռ անսայթաք գետնին ուղիղ քայլել չգիտես, ելել, ազատության չվանին ես ճոճվում՝ չունենալով ձեռքիդ դաստիարակության այն ձողն ու կշիռը, որով կարողանաս աներեր խաղալ ազատության այդ բարակ լարին:

Կլսե՞ս, հայ ազատասե՛ր ընտանիք, մի քանի խրատ տամ քեզ ու ավարտեմ այս ճառը: Քեզ չեմ ասի, որ հին, թանձր քող ձգես Նորահարսի գլխին, որ նա կորանա ու չկարողանա ազատության լույսը տեսնել կամ ընտանեկան կյանքում պապանձեցնես խոսուն մարդու լեզուն, որ նա կամովին համր լինի: Չեմ ասի նաև, որ փեսան ստորակարգ սպասավորի պես գոտեբարև ծառայի:

Միայն այն կասեմ քեզ, որ ծայրահեղ ազատության չվանից վայր իջնես: Դու ինքդ գիտես, որ տակավին վստահ չես համարձակ խաղալու համար: Դու տեսել ու տեսնում ես, թե քանի՛-քանի՛ ընտանիք այդ հրապուրիչ չվանից վայր ընկան ու ջախջախվեցին: Նրանց կորստյան փորձը թող քեզ խրատ լինի:

Բայց գիտեմ ու քաջ համոզված եմ, դու մի անգամ այդ չվանին ելար՝ աշխարհի խրատն ու Ավետարանը չեն կարող քեզ վայր իջեցնել, դու այդ ազատության խաղը պիտի շարունակես՝ առանց դրա վտանգից խուսափելու, ու կասես, թե՝ «Ինձ ազատ թողեք, ազատաբար խաղամ ու խաղալով սովորեմ»:

Առաքինության ասպարեզ չես ելել, որ դա քեզ թույլատրեի ու ներեի, ոչ ոք չի հավատա, թե այդ օրինակի միջոցն ազատության մեջ քեզ կկրթի: Թերևս ասել կուզես, թե՝ «Թողե՛ք, որ մեծամեծ վնասներով ու զոհերով խրատվեմ»:

Ավա՛ղ, դեռ բավակա՞ն չես համարում թե՛ անցյալում և թե՛ ներկայում հայերի ընտանեկան զոհերը: Ավելի ապահով, բարի ու բնակա՞ն չէ, որ նախ բարվոք դաստիարակությամբ կրթվես, ազատության դժվարին արվեստի ու իր ամեն պայմանների մեջ քաջավարժ լինես, ապա վստահապես ելնես այդ ազատության չվանին ու այնժամ ցույց տաս աշխարհին, թե հայ ընտանիքը ևս գիտի պարկեշտությամբ ու առանց կործանվելու ազատության խաղ խաղալ:

Ժ
ՏՂԱՄԱՐԴՈՒ ՈՒ ԿՆՈՋ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Տիեզերքի կարգադիր Արարիչը բնության անփոփոխելի օրենքով, ինչպես աշխարհում ամեն բան կշռով ու չափով կարգադրել ու հաստատել է, նույնպես տղամարդու ու կնոջ պարտականություններն ու իրավունքները բաժանել է այն օրից, երբ մարդն աշխարհում ծնվեց:

Ոչ ոք չի կարող Արարչի կարգադրությունը շրջել ու փոխել:

Նրա իմաստությունն է, որ կնոջը կին է ստեղծել ու բնությունից նրան տվել ծնողական բուռն սեր, մեծագորով սիրտ, դյուրաշարժ զգացում, որպեսզի զավակ ծնի, մայր լինի ու մայրական սիրով ու կաթով սնուցի նրան: Եթե կնոջ սրտում չլիներ այս հզորագույն սիրո զգացումը, նա վաղուց կխուսափեր ամուսնական կյանքից՝ հիշելով երկունքի ցավն ու վիշտը:

Նախախնամության ստեղծող հանճարը կնոջը լի սիրով ու փափկությամբ է կազմել, իսկ տղամարդուն՝ հուժկու բազկով ու ուժով: Նա ևս հայր ու ծնող է, սեր ու ծնողական գորով ունի, միայն թե կնոջ ու մայրական սիրո հետ չի կարելի համեմատել:

Ուստի տղամարդ ու կին լիովին, իրենց բնական հատկությամբ ու չափով, Աստծու և աշխարհի ընդհանուր օրենքի համաձայն, պարտականություններ ու իրավունքներ ունեն, ու դա այն օրից է սկսվում, երբ սուրբ ամուսնությունը կամավոր ու ազատ ուխտով տղամարդուն ու կնոջը կապեց իրար:

Որո՞նք են այդ փոխադարձ պարտականությունները ու իրավունքները, որ, ընդհանրապես, բարոյական ու տնտեսական կյանքում հավասար արդարությամբ կայանում են երկուսի միջև:

Տղամարդու ու կնոջ բարոյական առաջին մեծ պարտականությունն ամուսնական սերն է, որ ամուսնության իրավունքով փոխադարձաբար պահանջվում է իրարից. որքան սիրի տղամարդը, նույնքան խանդակաթ սեր էլ կպահանջի իր կնոջից: Միայն այս փոխադարձ ու հավասար սերն է, որ սիրով կապված երկու ամուսիններին միասնության մեջ է պահում, ինչի մասին բավականին խոսեցինք նախորդ ճառում:

Այստեղ պետք է միայն ամուսնական ու ընտանեկան կյանքի վարման մասին խոսեմ, որի բարոյական պարտականություններն ու իրավունքները սուրբ Պողոսն այս կերպ է բաժանում. նա տղամարդուն կնոջ գլուխ է անվանում, որով իրավունք է տալիս, որ գլուխը տիրի, ղեկավարի, հրամայի և այլն: Կնոջ համար, իբրև պարտականություն, սահմանել է հնազանդությունը՝ տալով բարձր ու խորհրդավոր օրինակ, թե ինչպես եկեղեցին պիտի հնազանդ լինի Հիսուսին, նույնպես և կանայք՝ ամուսիններին:

Թող ոչ ոք այնպես չկարծի, թե իրավախոս առաքյալն, իբրև հեղինակ ու դատավոր, ինքն իրեն է վճռել ամուսնացածների պարտականություններն ու իրավունքները:

Ո՛չ, Պողոսը, որ միշտ Քրիստոսի հոգով էր խոսում, այս վճռի դասը դրախտի հին պատժական վճռից է ուսանում ու ավանդում եկեղեցուն, քանի որ Տեր Աստված, երբ հանցապարտ նախակնոջ համար պատիժ սահմանեց, որ ցավով ու տրտմությամբ ծնի իր զավակներին, ավելացրեց նաև այս խոսքը. «Քո ամուսնուն պիտի ենթարկվես, և նա պիտի իշխի քեզ վրա» (Ծննդ. Գ 16):

Զգիտեմ՝ կարո՞ղ է մարդը քննել ու այս բացորոշ խոսքից այսպիսի հետևություն անել. եթե մեր նախամայր կինն առաջին մեղապար-

տը չլիներ, անշուշտ, ազատության իր հավասար իրավունքը պահելով՝ չէր ստրկանա Ադամի տիրապետության տակ:

Բայց Հիսուսն ու Ավետարանը կնոջ կորսված իրավունքը դարձյալ իրեն տվեցին, որի համար նույն Պողոսը հայտարարում է, թե՝ «Ուրեմն խտրություն չկա... ո՛չ արուի և ո՛չ էգի, որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Հիսուս Քրիստոս» (Գաղ. Գ 28), որով ցույց է տալիս, որ բոլոր քրիստոնյա հավատացյալների պարտականություններն ու իրավունքները միևնույնն են, հավասար են Ավետարանի ազատ կրոնի առաջ: Պողոսի այս խոսքը որքան էլ կնոջն իր հին ստրկությունից հանում է, բայց չի ջնջում նրա հնազանդության պարտքը, որ բնական ու բարոյական է:

Իսկ Եվրոպայի քաղաքակրթությունը, որ դարձյալ քրիստոնեության շնորհիվ հարգեց ազատության այս սկզբունքը, չափազանց բարձրացրեց կնոջ հեղինակությունը, ճանաչեց նրա պատիվն ու իրավունքը, այնինչ արևելյան ազգերի մեջ դեռ մասամբ ստրկացած վիճակում է խեղճ կինն՝ իր ամեն իրավունքներով հանդերձ:

Իսկ երբ Առաքյալը կնոջ համար հնազանդություն է պատվիրում, այդ այնպե՞ս է արդոք, ինչպես ժողովուրդն՝ իշխանին, զինվորը՝ զորապետին, ստրուկ ծառան՝ իր տիրոջը: Ո՛չ, այդպես չէ. կինը ո՛չ հպատակ է, ո՛չ զինվոր, ո՛չ ստրուկ ծառա: Կինն ամենայն իրավունքով իր ամուսնու ազատ ընկերն ու հավասար լծակիցն է: Ուստի կինն աղախին չէ, այլ տան տիկին ու թագուհի: Թեկուզ և տղամարդը թագավոր լինի, իշխան լինի, տեր ու գլուխ լինի, բնավ իրավունք չունի ու չի կարող այնպես իշխել, ինչպես իշխում են աշխարհի այլևայլ տիրող գլուխներն իշխանական գավազանով, որովհետև ընտանեկան կյանքում ու ղեկավարման մեջ իշխանական սուր, ոստիկանություն և գավազան չկա, այլ միայն՝ սեր, խնամք ու միասնություն:

Եվ ինչպե՞ս է կարելի, որ տղամարդը իշխող լինի կնոջը, չարաչար ճնշի ու նվաճի նրա կյանքը, երբ իսկապես ճանաչի, որ կինը բարոյապես իր մարմինը, իր սիրտն ու ոգին է, և ամուսնական կապը մի թիվ է, երկուսը չէ: Եվ մի՞թե հնարավոր է, իրավացի է, որ մարդն ինքն իրեն ու իր իսկ անձի ազատությանն՝ իբրև օտարի, բռնանա, մինչև իսկ հարվածի, չարչարի ու խեղդի՝ կարծելով, թե իրավունք ունի, որովհետև ինքը զորավոր ու ուժեղ է թե՛ բազկով, թե՛ խոսքով, և դրա հետ միասին աշխարհի ատ-

յանն իր ձեռքում է, եթե կինն իր զրկանքնե-
րի համար բողոքի, ո՞վ է իր իրավունքը լսողն
ու դատաստան տեսնողը, դարձյալ ինքը՝ դա-
տավորն ու վճիռ հանողը: Այնտեղ չէ արդար
Հիսուսը, որ պաշտպանի անտեր կնոջ դատն
ու հանդիմանի փարիսեցիների անիրավությու-
նը, որ շողոքորթեցին իբրև օրինապահ՝ ատյան
հանելով մի մեղավոր կնոջ, երբ իրենք նրանից
առավել հանցավոր ու մեղավոր էին տեսնող
Դատավորի առաջ:

Սուրբ Պողոսը տղամարդու ու կնոջ դա-
տաստանի մեջ անիրավ դատավոր չէ. կնոջը
պատվիրում է հպատակ ու հնազանդ լինել,
տղամարդուն, Քրիստոսի պես սիրել եկեղեցին
ու իր անձը զոհել հանուն նրա: Բարձրախոս
առաքյալը սրանով ուսուցանում է, որ տղա-
մարդիկ Հիսուսի սիրուն ու անձնվիրությանը
հետևելով՝ նրա չափ առաքինանան, ընտանե-
կան սիրո ու ազատության համար մինչև մահ
անձնվեր լինեն:

Առանց խորհրդի չէ, երբ անձնվիրության
այս մեծ պարտականությունն առաքյալը տղա-
մարդուն է բաժին հանում, թերևս, նա այնպես
է դատում, որ աշխարհի իշխանական իրա-
վունքը, սուրը, կռվի ասպարեզը տղամարդ-
կանց ձեռքում է, ուր փառքի մրցանակը միայն

նրանք են ընդունում, ուրեմն պարտավոր են
մեռնել ընտանիքի համար, ինչպես կմեռնեին
հայրենիքի համար, իսկ բարոյական հայրենիքն
ընտանիքն է:

Միայն տղամարդիկ չեն մեռնում, կանայք էլ
են մեռնում հավատքի ու կրոնի համար: Մի՞թե
չմեռան ու չգերեվարվեցին Ե դարի հայ առա-
քինի կանայք, որոնց առաքինության հանդեսը
պատմագրելով հռչակում է սուրբ հայր Եղիշեն:
Եկեղեցին շատ կին նահատակներ ունի, ուրեմն
պետք չէ կնոջը բոլորովին տկար համարել՝
կարծելով, թե նա մի հողակերտ ու դյուրաբեկ
անոթ է: Նա երբեմն շիկացած երկաթ է դառ-
նում, երբ սուրբ կրոնի, ամուսնու ու զավակ-
ների սերն է իրեն բոցավառում ու մղում դեպի
ամենայն վտանգ:

Ամուսնական միության մեջ տղամարդն ու
կինը մի մարմին են, բայց կինը գլուխ չէ: Հա-
մաձայնվում ենք հոգեխոս առաքյալի այն կար-
ծիքի հետ, որ կնոջ գլուխն այրն է: Սակայն ո՞վ
կարող է համարել, թե ուրեմն կինը նրա ոտքն
է, պատվանդանը և այլն: Ոչ, կինը տղամար-
դու նվաստագույն մասը չէ, այլ նրա կողի բուն
միջակետն է, նրա սրտին, հոգուն մոտ, որից
Արարչապետն իմաստուն խորհրդով մի ոսկոր
առավ ու ամուսնական մարմինը լրացրեց:

Եթե տղամարդուն ամուսնական կյանքում էս տեր համարենք, մի՞թե նա իրավունք է ստանում խստությամբ իշխել, բռնությամբ վարվել, կամ կարծել, թե կինն իր ստացվածքն է կամ արծաթագին ծառան:

Եթե զորություն ունի, բուռն են իր բազուկները, մի՞թե նա իրավունք է ստանում ջարդել, փշրել իր կողի մի տկար ոսկորը, իր կյանքը վերացնել ու արհամարհել:

Եթե ինքն իրեն համարում է հանճարեղ, իմաստուն, խոհական, քաղաքագետ, աշխարհավար և այլն, ապա իր պարտքն է, որ իբրև գլխավոր բազմելով ընտանեկան գերդաստանի գլխին ու կնոջն էլ իրեն խորհրդակից առնելով՝ նրա հետ միասին ղեկավարի ընտանեկան կյանքը:

Իսկ եթե իրապես ճանաչում է, որ կինն իր կենակից ամուսինն է, ցմահ դաշնակից ընկերն է, իր գործի հավասար լծակիցն է, բախտի ու երջանկության մեջ անբաժանելի կարեկիցն է, իր մահվանն ու չիրիմին լացող ողբերգուն է, իր լքված ու որբ զավակների խնամատար մայրն է, իր գերեզմանն օրհնող և հիշատակն անմահ պահող ջերմեռանդ այրին է, ուրեմն, պետք է գիտենա, որ եթե ամուսնասեր կինն այս պարտականությունները կատարում է, այլևս որևէ պարտք չի մնում:

Երկու ամուսնացածների փոխադարձ պարտականությունները մինչև գերեզման են տևում: Վերը տղամարդուց պահանջեցինք սեր ու անձնվիրություն, դրա հետ միասին բանախոսեցինք, որ իր ուժն ու զորությունը չչափի կնոջ տկարության հետ: Պետք է իրավ ճանաչենք, որ կինը էս իր չափով ու ուժով անձնվեր լինի ու հավատարմորեն հատուցի իր փոխադարձ պարտականությունները. սեր՝ սիրո փոխարեն, խնամք՝ խնամքի փոխարեն, սիրտ՝ սրտի փոխարեն, հավատարմություն՝ հավատարմության փոխարեն:

Բացի այս՝ կնոջ համար մի առանձին պատվեր էս կա, այն է՝ առաքյալի պատվիրած կատարյալ հնազանդությունը դեպի իր ամուսինը: Որովհետև երբ տղամարդուն իրավունք չտվեցինք, որ նա բուռն գավազանով իշխի կնոջը, նույնպես իրավունք չենք տա կնոջը, և ոչ մի օրենք այդ իրավունքը չի կարող տալ, որ կինն անհնազանդ լինի:

Այո՛, կնոջ պարտքն է՝ կատարյալ հնազանդություն՝ առանց բնավ ստրկանալու. ոչ թե այն պատճառով, որ նա ընտանեկան կյանքում անուժ ու անզեն է թողնվել, այլ առավել՝ բնության ու խղճի օրենքն այս է պահանջում կնոջից:

Այս աշխարհում ուժեղներն են տիրում թե՛

բարոյապես, թե՛ ֆիզիկապես, իսկ տկարները, բնականաբար, խոնարհվում են: Նույնը տեսնում ենք նաև ընտանեկան կյանքում, որտեղ կինն ստիպված է ենթարկվել ու խոնարհվել, որովհետև ոչ միայն ուժով է տկար ու զինակիր բազուկ չունի, այլև մտավոր զորությունը ևս անհավասար է, և նույն մասի մեջ էլ երևում է իր հայտնի տկարությունը:

Սրա համար տղամարդիկ նրանց համարում են կարճամիտ, անխորհուրդ ու մանավանդ անհոգ ու անհեռատես: Բացառություն պետք է համարել միայն այն մեծ դյուցազնուհի կանանց, որոնք թե՛ հին պատմության և թե՛ նոր քաղաքակրթված աշխարհում փայլել են հանճարով ու քաջագործությամբ, և այսօր կրկին փայլում են Եվրոպայի տարբեր ազգերի մեջ իբրև դաստիարակ, իբրև մատենագիր, իբրև գործունյա ու տնտեսող կին:

Ոչ ոք չի տարակուսում, թե կինը ևս տղամարդու պես բանական ու մտավոր է: Եթե մշակվի նրա միտքը՝ նա կարող է հավասար առաջադիմել, բայց արժի նկատել, որ կինն իր տկար ոտքով մինչև մի փոքրիկ բլուրի գլուխ հազիվ կարող է բարձրանալ, ուստի նա երկնքի աստղատունը դիտելու համար չի կարող Նյուտոն ու Հերշել լինել:

Գիտությունը տաժանելի աշխատանքի վաստակ է, իսկ արդեն երկունքի վշտով չարչարված կինն հանձն է առնում այդ գիտության երկունքի ցավերը ևս կրել, բայց մի՞թե իրավացի է, որ մայրը մոռանա մանկան կաթը, զավակների սերը, գգվանքն ու բարձրագույն գիտությամբ զբաղվի: Նրա համար բավական ու շատ է դաստիարակությունը, ընտանեկան կրթությունն ու տնային տնտեսության կառավարումը:

Ճանաչելով մեր աշխարհը, մեր ժողովուրդին ու մեր կյանքը՝ հարկավոր է խոստովանենք, որ տղամարդիկ ևս պակաս կարճամիտ չեն կանանցից, և նրանց այս կարճամտությունը պիտի տևի, քանի դեռ մայրերը կարճամիտ են. ո՞վ չգիտի, որ կարճամիտից կարճամիտ է ծնվում: Լուսավոր ու քաղաքակիրթ աշխարհը սրա դարմանը միայն այն համարեց, որ նախ մայրերի կարճամտությունը կրթի ու բժշկի դաստիարակությամբ, որպեսզի նրանք կատարյալ ու ողջամիտ զավակ ծնեն:

Երանի՜ թե երկու կարճամիտ ամուսիններ չհանդիպեն իրար, որովհետև ընտանեկան կյանքը կդառնանա իսպառ: Եթե միայն կինն է կարճամիտ, իսկ տղամարդը բնագետ է ու խոհեմ, իր վրա է մնում բարոյական մեծ պարտականությունը՝ ամենայն խնամքով ու մեծ համբերությամբ հոգալ իր կենակցի կարճամտությունը բժշկելու:

Իսկ եթե տղամարդն է կարճամիտ, որ հաճախ է պատահում, հայտնի է, որ քաղցր հոգատարությամբ իր ամուսնու կարճամտությունը դարմանելու այդ պարտականությունն այնժամ իմաստուն ու խոհեմ կնոջն է բաժին մնում:

Բարի ու գործունյա կինն իր բարոյական պարտականությունները միայն արժանավոր ամուսնու համար չէ, որ կատարում է, նույնիսկ նաև անարժանի համար, որը ոչ միայն բնածին կարճամիտ է, այլև խստաբարո, դաժան ու սանձարձակ մարդ է: Այսպիսի համար ևս նա իրեն վայել պարտականությունները կատարում է, նաև միշտ ջանում է իր ամուսնու խստությունը մեղմել, որպեսզի չխռովվի ամուսնական սերը, չվրդովվի տան խաղաղությունն ու չվատաբանվի ընտանեկան պատիվը:

Հարկ չկա՝ կրկնենք, ինքնին հայտնի է, որ սիրաշահող այս պարտականությունները միայն կնոջը չեն հատկացված, որովհետև երբեմն էլ բարի տղամարդուն է պատահում չար, կամակոր, լեզվանի ու անզգամ կին, որից Սիրաք իմաստունը լավ է համարում խուլս տալ ու անապատի մեջ անընկեր ապրել: Բայց ճշմարիտ քրիստոնեության սիրո և մարդասիրական օրենքը պարտականություններ է դնում ամուսնացողի վրա, որ իր ընկերոջը սիրաշահի, մանավանդ, երբ Աստծու առաքյալը խրատում է, որ հավատացյալ ամուսինն իր անհավատ ամուսնուն չարձակի. լինեն նրանք թե՛ տղամարդ և թե՛ կին:

Նրանք որքան հնարավոր է պիտի ջանան միացյալ կյանքը չբաժանել, անբաժան ապրել ու միմյանց պակասությունների համար ներողաբար վարվելով՝ միշտ իրար սիրաշահել թե՛ ամուսնական սիրո, թե՛ ընտանեկան օգուտի ու բարիքի համար:

Թե՛ տղամարդու, թե՛ կնոջ բարոյական պարտականությունների ու իրավունքների մասին այսքանը բավական եմ համարում: Այժմ դառնամ փոքրիշատե գրելու նյութականի ու տնտեսականի մասին, որոնց միևնույն փոխադարձ պարտականություններով ու հավասար աշխատանքով պետք է վերաբերվեն երկու ամուսինները:

Երբ տեսնում եմ, որ հողագործի արտում մի զույգ ամոլակից եզներ լծված գետին են հերկում, երբ տեսնում եմ, որ միակտուր լծափայտը եզների վզին հավասար է դրված, որպեսզի հավասար քայլեն ու արորը հավասար ուժով քաշելով՝ վարեն արտը, համարում եմ, որ ընտանեկան կյանքում թե՛ տղամարդու, թե՛ կնոջ աշխատանքային պայմանները որոշելու ու չա-

փելու գործում ճիշտ այս բնական օրինակից վերցրած բարոյական օրինակը շատ պատշաճ է:

Ընտանեկան ագարակում երկու գլխավոր աշխատավորներ կան, որոնց համար լծակից բառի նշանակությունը շատ հարմար ու ճիշտ է և ցույց է տալիս տղամարդու և կնոջ հավասար կյանքն ու ընթացքը:

Տղամարդը դրսում վաստակողն է, և փոքր հասակից սկսած՝ այս է նրա աշխատանքի բաժինն ու պարտականությունները: Իսկ կինը տան տիկինն է, և նրա պարտքն է արդար ու հավատարիմ տնտեսվարությունը: Տղամարդը հաց ու հանդերձ է բերում, կինը մատակարարում է, տղամարդը շուկա է գնում, կինն զբաղվում է տնային գործերով, տղամարդը միևնույն ժամանակ զանազան դժվար արհեստներում մարմնով ու մտքով չարաչար խոնջում է, իսկ կնոջ մեծ ու առանձին արհեստը տան կառավարումն է, իմաստուն տնտեսվարությունն ու մայրական դաստիարակությունը:

Եթե իրավացի լինենք, հասարակական կյանքում տղամարդկանց գործունեության ոլորտը շատ է ընդարձակ, ծանր, դժվարին ու տաժանակիր, մինչդեռ կնոջ բաժինը միայն նեղ շենքում շրջափակված տնային աշխատանքն է:

Տղամարդը քաղաքականության մեջ ամենամեծ ու ծանր հոգսերով է զբաղվում, աշխարհ է կառավարում, զենք է առնում, պատերազմի դաշտ է գնում, արյուն է թափում, հայրենիք է պաշտպանում և այլն: Երբեմն էլ ստիպված դողություն է անում թե՛ ընտանիքի սիրո և թե՛ զավակների կարիքների համար, որով քաղաքացիական օրենքն իրեն առանձին է դատապարտում՝ կրելու բանտարկության պատիժը, թեև դողության հացն իր ընտանիքի հետ միասին էր կերել: Նաև թողնում, չեմ թվարկում այնքան զարմանալի գյուտերը, մեծաջան արվեստները, որոնք միայն տղամարդկանց հանճարի ու ձեռքի հրաշալիքներն են:

Այսպես, ուրեմն, կարծես մի կողմում այնքան են ծանրանում տղամարդու գործունեության դաժան ոլորտները, որ այդ բեռի տակ հավասար պարտականությունների կշեռքի նժարը վայրահակում ու ամուսնական միության մեջ ընկճում է կնոջը: Բայց տեսնենք, մի՞թե անզոր կնոջ վաստակն ու պարտականությունները թեթև են:

Մենք գիտենք՝ Մովսեսն ու հավատքը պատմում են, որ վշտահար կինը դրախտի օրհնության հետ մի անեծք էլ ժառանգեց, այսինքն՝ ամուսնական սիրո քաղցրության հետ ճաշակեց նաև դառը երկունքի ցավերը, որով նա դատապարտված է ծննդաբերության ցավեր

կրելով զավակ ընծայել հասարակությանը:

Զգիտեմ, կվրիպե՞մ ուղիղ դատաստանից, եթե ասեմ ու վճռեմ կնոջ համար, որ իր այս անփախուստ ցավերի պարտականությունը տղամարդու բովանդակ աշխատանքի դեմ հավասար ու շատ է: Զխոսեմ նաև, որ երբեմն էլ մայր խեղճ կինը մեռնում է երկունքի իր բուռն ցավերի մեջ, խանձարուրում լքում իր թշվառ մանկանը կամ իր հետ տանում գերեզման:

Ինչպե՞ս մոռանանք կնոջ համբերատար հոգատարությունն իր զավակների հանդեպ, որ ծնված օրից սկսած մինչև պատանեկության հասակը՝ նա սիրտ ու կյանք է մաշում, այնինչ հայրը երեխայի լացից ճանձրույթ է զգում, զայրանում ու փոխանակ փայփայելու՝ օրորոցի մոտից փախչում է:

Այո՛, խոստովանել է պետք, որ ծնողական սրտի ու գորովի մեջ կինը, միշտ պատրաստ լինելով անտրտունջ կրել զավակների ցավն ու կարիքը, առավել է, քան հայրը, մանավանդ երբ ճշմարիտ ու հոգացող մայր է ու լիովին ճանաչում է իր մայրական պարտականությունները:

Բայց արդարությունը պահանջում է, որ սա ևս խոստովանենք, որ եթե կնոջ հոգատարությունը տնային սահմանափակության մեջ է ամփոփվում, ապա տղամարդու դատողությունն արտաքին զբաղմունքների սաստիկ հոգսերից խիստ ընդարձակվում է, որոնցում, ինչպես գիտենք, կինն անգետ է, և այս անգիտության համար անխնա դատապարտում են իրեն:

Սակայն ես խոսեմ, դու դատի՛ր, ուշի՛մ ընթերցող. կնոջ անգիտությունը բնությունի՞ց է, թե՞ տղամարդիկ թողել են, որ կինն անգետ լինի ու չմտածի, թե ընտանեկան սրահից դուրս ի՞նչ կա աշխարհում ու ի՞նչ են անում տղամարդիկ:

Ես այնպես եմ կարծում, որ կնոջ անգիտության պատճառը մեծ մասամբ տղամարդիկ են եղել, որ կա՛մ տղամարդկային ինքնահավան հպարտությամբ կարևորություն չեն տվել կնոջն, ու նա սովորել է անհոգ մնալ, կա՛մ մեծամտորեն ենթակայություն ու նվաստություն են համարել կնոջը խորհուրդ տալ կամ առնել և կամ օրվա ճախորդ դեպքերը պատմել ու իրենց վիճակը ցույց տալ: Բացի այս՝ շատ անգամ սնապարծելով՝ կնոջ անտարբերությունն ավելի են ընդարձակել:

Ուստի, կնոջն իր անգետ վիճակից հանելու ու ընտանեկան խնամատարությամբ կրթելու համար տղամարդիկ պետք է նրան արժանի համարեն իրենց հետ խորհրդակցելու և ամոթ ու նվաստություն չհամարեն իրենց վիճակը ճիշտ

ասել ու խոստովանել:

Եթե տղամարդկանց իրավունքն է ընտանեկան ու տնային գործերում բանիմաց լինել, մի՞թե կնոջ իրավունքը չէ արտաքին իրերի մասին տեղեկություն ստանալ ու գիտենալ, թե այլ մարդիկ ինչպե՞ս են գործում աշխարհի կառավարման ու առևտրի մեջ:

Ստույգ է, որ տղամարդու ու կնոջ աշխատանքները վերը գրածի պես են հատկացվել յուրաքանչյուրին, բայց ընդհանուր խորհրդակցության ժամանակ երկուսն էլ պարտավոր են իրենց հաշիվները տալ. մեկը՝ վաստակի համար, մյուսը՝ տնտեսվարության: Առանց այս հաշվի՝ երկու ամուսինների պարտականությունների ու իրավունքների կշիռը խառնվում է: Շատ անգամ երկու կողմի պարտազանցությունները թաքցվում են, այնուհետև միշտ կեղծելով՝ տղամարդն ու կինը ջանում են իրար խաբել, ներքին վիճակն իրարից պահել ու արտաքուստ ցույց տալ: Բայց մինչև ե՞րբ. կարիքի դժբախտ օրը հասնում է, ու նրանք ստիպված խոսում են. մեկը խոստովանում է, թե առևտրի մեջ կորցրեցի, գանձարանի մեջ դրամ չմնաց, մյուսը, թե՝ «Տաշտի մեջ հաց չկա, մառանը պարպված է, սնդուկիս միջի թանկագին օժիտը վաղուց ծախսել եմ՝ իմ այլևայլ պետքերը հոգալու համար»:

Ուրեմն, պարտազանց է տղամարդը, որ իր կյանքի ու գործի վիճակը թաքցնելով՝ չի թողել, որ իր կենակիցն իր հետ հավասար հոգա ընտանեկան կյանքի մասին: Պարտազանց է կինը, որ իր ամուսնու հոգս կիսողը չի կարող լինել:

Պարտազանց է տղամարդը, որը ծույլ ու խուսափող է իր բաժին աշխատանքում, որ մոռանում է ընտանիքի հացը, կամ դեգերում է հարբածների հետ, կամ անառակ կյանք վարելով՝ վատնում է իր հացն ու զրկում ընտանիքը:

Պարտազանց է կինը, որ աշխատող ու գործունյա չէ, որ իր ամուսնու դառը քրտինքով վաստակած առատ հացն ազնվությամբ ու խնայողությամբ չի տնտեսում, այլ նենգությամբ թաքցնելով կամ զեխությամբ շռայլելով ու առանց մտահոգվելու, թե ծովում ու ցամաքում անդուլ տքնելով ու տառապելով իր ամուսինն ինչ տաժանակրությամբ է այդ հացը վաստակել՝ իզուր վատնում է: Ես չեմ ուզում հիշել, թե ընտանիքի կարիքներից պարտադրված՝ տղամարդիկ ինչպես են երբեմն անպատիվ միջոցներ գործադրում, առևտրական գործերում խարդախություն անում ու ընտանիքը թշվառությունից ազատելու համար ուրիշ ըն-

տանիք թշվառացնում և այլն: Ոմանք էլ երբեմն հուսահատությունից անձնասպան են լինում՝ գերադասելով մահվամբ իրենց աչքը փակել, քան տեսնել ընտանիքի ողորմելի կյանքն ու թշվառությունը:

Պարտազանց է տղամարդը, որ իր խիղճն ու պատիվը մեռցնելով՝ իսպառ մոռանում է ծնողական գութը, տունն ու ընտանիքը: Թողնում է կենակից ամուսնուն և ընտանեկան պարկեշտ կյանքը, գնում ու ապրում է անառակ հասարակության հետ, վատնում իր ամեն ինչը՝ կյանքը, պատիվը, հարստությունը: Վերջապես, ավելի ու ավելի խրվելով՝ նա մի օր մեռնում է օտար փողոցների անկյունում՝ առանց ընտանեկան սգի, ու չի արժանանում փառավոր թաղման ու հայրենի գերեզմանի:

Բյուր անեծքի է արժանի այնպիսին, որ ուրանում է ընտանիքը, որին Պողոսը հավատուրաց ամբարիշտ է կոչում: Այո՛, այդպիսին նախատինք է ոչ միայն ընտանիքի, այլև մարդկային հասարակության համար ու շարունակ նզովք է ընդունում ընտանեկան տաճարից, որ կրճատվի այնպիսի կյանքը, նա շուտ հեռանա աշխարհից:

Ամուսնական կյանքում տակավին շատ ու բազմապիսի են տղամարդու ու կնոջ իրավունքները, պարտականություններն ու պարտազանցությունները, բայց մենք, այսքանը միայն հիշատակելով, շատ ենք համարում ու թողնում ենք, որ պակաս մնացածի մասին կենակից ամուսիններն իրենք ուսումնասիրեն, ճանաչեն ու գիտենան իրենց պարտականություններն ու խորշեն բոլոր պարտազանցություններից:

ԺԱ
ՄԱՅՐ ԵՎ ԴԱՅԱԿ

Երբ նորածին մանկիկը լույս աշխարհ է գալիս, ո՞վ է նրա կաթնատու սնուցիչը. մայրն է միայն, որ երկունքով ծնեց նրան: Մայրական այս պարտականությունը այնքան պարզ ու բնական է ծնողական սրտի ու սիրո համար, որ ո՛չ վարժապետ է պետք, ո՛չ դաս. բնությունն այն իր բուռն սիրով է ուսուցանում: Մոր արգանդից լույս աշխարհ եկած մանկիկը, առաջին անգամ աչքերը բացելով, իր մորն է տեսնում: Նա դեռ անլեզու, անխոս մանուկ է ու չի կարող իր ցանկությունները բացատրել: Իր կարկամ լեզուն լացն է միայն, այդ անորոշ ձայնով է նա ամեն բան խնդրում՝ կաթ, գուրգուրանք ու խնամք: Կաթն իր կյանքն է, գուրգուրանքն ու խնամքը մայրական պարտականություններ են, որ մանկիկը միայն իր ծնողից է խնդրում, քանի որ ուրիշ ոչ ոքի չի ճանաչում: Մանուկն իր անզոր իրավունքը լացով է պատճառաբա-

նում՝ բանտարկված խանձարուրի մեջ:

Եվ երբ նա կամաց-կամաց աճում ու մեծանում է, նրա թոթովախոս լեզուն առաջինը «մայր» անունն է արտասանում: Անշուշտ այս անվան, ինչես նաև հայր անվան բնական ուսուցիչը մայրն է: Ո՜հ, որքա՜ն աքանչելի է բնության այս դպրոցը, որ գգվասեր մոր անուշ գիրկն է. մանուկն իր քերականության առաջին դասը այդ կենդանի բնության դպրոցից է սկսում:

Ուստի երբ ամուսնացող կինը զավակ է ծնում և մայր անունը ստանում, ինչպես նաև իր ամուսինը՝ հայր անունը, այդ ինքնին հայտնի է բության և աշխարհի օրենքի առաջ, թե ինքն ու իր ամուսինն են իրենց զավակների արարիչն ու տերը: Այս բնական իրավունքը մի անխուսափելի պարտականություն է ծնում ծնողների համար, և նրանց նվիրական պարտքն է ապահովել մանկանը կաթով, սննդով և հագուստով:

Ահա այստեղ առանձին միայն մայրական պարտականությունների մասին պիտի խոսեմ, իսկ հայրական պարատականությունների մասը բաց կթողնեմ, քանի որ սրա հետ կապ չունեն:

Մոր և մանկան կամ ծնողի ու ծնվողի միջև այն օրից է պարտականությունն ու իրավունքը սկսվում, երբ մայրը ծնում է, մանուկը՝ լույս աշխարհ գալիս: Այո՛, այն օրից պարտականությունն ու իրավունքը մանկան հետ միասին ծնվում են. մանկան անդրժելի իրավունքն է կաթ խնդրել, և մոր բնական պարտքն է կաթ տալ, քանի որ մեծագույթ Արարչապետը միայն այդ պարտականության համար է յուրաքանչյուր ծնող մոր կրծքից երկու ստինքներ կախել: Որքա՞ն մեծ է Նախախնամողի մտահոգությունը, որ կաթը մանկան հետ է ստեղծում, և այդ պահից սկսում են մոր ստինքների երկու աղբյուրները բխել, և կաթնածարավ մանուկը բաց է անում իր բերանը կաթի աղբյուրների առաջ:

Ուստի Աստված և բնության անփոփոխ օրենքը պարտավորեցնում են մորը, որ իր ծնած զավակին ինքն իր մայրական կաթով կերակրի: Ոչ մի մայր չի կարող այս պարտականությունը եղծել. թե՛ բնության օրենքը և թե՛ բնական սերը անաղարտ գծեր են մոր սրտում ու կրծքի վրա:

Այն մայրը, ով մոռանա այս ծնողական պարտականությունը և եղծի այս օրենքը, այդպիսի մայրը անգութ, զրկիչ և պարտազանց է, լինի թե՛ թագուհի, թե՛ իշխանուհի կամ թե՛ քաղաքացի ու շինական, աշխարհի որ դասից ուզում է լինի, նա չի կարող արդարանալ: Երկնքի Նախախնամության դատավորի առաջ մի՞թե ար-

ժանի է մի կին մայր կոչվելու, երբ ստինքները լի են կաթով, և նա մանկանը օտար կաթին ու օտար գրկին է հանձնում և ինքնակամ թողնում է, որ ցամաքի ու կտրվի բնատուր կաթը: Զգիտեմ՝ դա աշխարհի հարուստների ոսկիների համար ազնվականության շնորհ ու նշա՞ն է, որ մայրական այդ մեծ ու առաջին պարտականությունը նվաստություն են համարում, կարծես թե ամոթ է այն իրենց տիկնությանը և կամ այնպես են դատում, թե երեխային կաթ տալը աղախնի պաշտոն է, և այդ ստնտու դայակների համար է միայն:

Մարդկային հասարակության ընտանեկան կյանքում եթե որևէ անսովոր գեղծարարություն կա՝ այս է, եթե որևէ գրկանք կա՝ այս է, որով մայրերը իրենց իսկ զավակներին ճնշում են: Եթե բանական մարդը անբան անասունների առաջ նվաստանում ու ամաչում է՝ սրա պատճառով է: Որովհետև բնության իմաստուն Արարիչն ինչպես մարդու, այնպես էլ բոլոր կենդանիների համար գուրթը հավասար է բաշխել:

Թող մայրերը տեսնեն, որ առյուծն անտառում իր կորյունին է խնամում, կովն՝ իր հորթուկին, մաքին՝ իր գառնուկին, հավն՝ իր ճտերին, ճնճղուկն՝ իր ձագերին, այլևս իրավունք ունի՞ մայրն իր կաթով չկերակրել իր զավակին,

որ իր հոգու հատորիկն է, կամ չխնամել այն հարազատ ծաղկին, որ իր ծոցից է բուսնել, իր արմատի ծիլն է: Ինչպիսի ձեռք է այն մոր ձեռքը, որ պոկում է այդ մատաղ ծիլն իր բնածին արմատից և այն օտար արմատի հյութով է ուզում կերակրել:

Ծծկեր մանուկը բողոքում է այս զրկանքների դեմ, միայն այն ժամանակ է ներելի մոր համար, երբ ինքը տկար է, վատառողջ և կամ կաթի աղբյուրները ցամաքել են: Բացի այս պատճառներից՝ չկա մեկ ուրիշ զորավոր պատճառ, որ իրավունք տա ծնող մորը իր մանկանը ուրիշ մոր կաթով կերակրել, որին դայակ են ասում, և ես ճիշտ եմ հասկանում այդ բառի նշանակությունը, այն է՝ կաթ վաճառող կին:

Դայակը ևս, անշուշտ, նորածին զավակի ծնող է. ո՜հ, մի տառապյալ մայր է նա, որ ծայրահեղ կարիքից դրդված՝ իր մանկիկին հանձնում է մեկ այլ մոր՝ ցածր վարձատրությամբ, իսկ ինքը գնում ու դեգերում է հարուստների տները, որպեսզի իր կաթն ավելի բարձր գնով վաճառի, որ իր մանկան արդար իրավունքն է: Խեղճ որդեզուրկ կինը պարտավոր է իր դայակության վարձի մի մասը վարձված կնոջը տալ, իսկ մնացած մասով իր ընտանեկան ապրուստը հոգալ: Ձեզ եմ թողնում, հայ ճշմարի՛տ մայ-

րեր, դուք դատեցե՛ք՝ այս երկու մայրերից ո՞վ է ավելի հանցապարտ, կարիքավոր դայա՞կը, որ չքավորության պատճառով վաճառում է իր կաթը, թե՞ հարուստ տիկինը, որ սննդարար կերակուրներից լիանում ու հագենում է, և զեղուն ստինքներից աղբյուրի պես կաթ է հոսում, իսկ նա անխղճաբար փակում է կաթնաբուխ ակները: Բարեսիրտ տիկինը երկու գրկանքն էլ միասին է գործում. մի գրկանքը իր ընծին մանկան հանդեպ, մյուս գրկանքն էլ դայակի մանկան հանդեպ, որի բաժին կաթը դրամով գնում է: Ո՜հ, աղքատ մոր կաթը իր խեղճ տղայի կյանքն է, արդյո՞ք տիկին մայրն իր մանկան կյանքը չի՞ զոհում: Այո՛, այդպես է աշխարհի օրենքը, երբ հզորները ճնշում են անզորներին, զարմանալի չէ, որ տիրոջ և տիկնոջ երեխան բարուրից սկսի հաղթել ու ճնշել ծառային՝ դայակամոր երեխային:

Ավա՛ղ և ա՜հ, որքա՞ն անբնական, որքա՞ն դաժան և որքա՞ն անարդ ու դժվարին է դայակի կյանքն ու վիճակը, որի մայրական սիրուն ու քնքշանքին բռնանում է թշվառությունը, մինչև որ ստիպում է դժբախտ կնոջը թողնել իր արգանդից ծնվածին և գնալ ու անասունների կաթի պես վաճառել իր կաթը, որով թերևս կարողանա երկու կյանքն էլ միաժամանակ պահ-

պանել և երբեմն նաև իր ամուսնու կյանքը, որ կա՛մ կյանքում ծույլ և անաշխատ անպիտան է, կա՛մ էլ ընտանեկան պարտականությունները մոռացող մոլորամիտ մարդ է, որը կնոջ ձեռքին է նայում և նրա վաստակով ու հացով ապրում:

Թողնենք այս պարագաները, որ տկար կնոջ համար շատ ծանր ու դառն են, ավելի դառնագույն մի հանգամանք կա, որ ի ներքուստ տանջում է մանկամայր դայակի սիրտն ու ոգին: Ո՜հ, բնական ու մայրական սիրո գորովն է այդ, որ շարունակ մորմոքում, կտրտում է ծնողական աղիքները, երբ տեսնում է օտար մանկանը իր գրկում, իսկույն մտովի պատկերացնում է նրան, ով իր մայրական կաթից ու գրկից զրկված է: Նա կենդանի մայր է, քար չէ, այնքան է վշտանում ու դառնանում սրտի ցավերից, որի անհարին[1] դառնության չափը միայն մոր սիտը կարող է զգալ ու չափել:

Ով որ մայր է, թող, հետաքրքրությունից դրդված, առանձին քննի դայակամոր ցավակիր սիրտը, թե որո՞նք են նրա տխուր մտածումները, թեպետ նա արտաքուստ ուրախ ու զվարթ է երևում, գուրգուրելով փայփայում է մանկիկին, տիկինը հավատում է, թե իրոք

[1] Այսինքն՝ մշտապտև, հարատև:

մայրական սիրով է սիրում, չգիտի, որ խեղճ դայակի սիրտը արյունով ու ցավով է լցված: Մայրության և որդեսիրության բուռն գորովը միշտ հուզում է նրա սիրտը և շարժում հոգին, որ իր հարազատ զավակի հոգուց է կախված. ամեն րոպե հիշում ու տխրում է:

Այժմ, որպես ապացույց ասածիս, պատմեմ այն, ինչ որ մի ականատես և բարեսիրտ տիկին պատմեց, և ես լսեցի:

Մի օր մանկամայր տիկինը դայակի սենյակ է մտնում այն պահին, երբ նա տղային կաթ է տալիս, և տեսնում է, որ դայակի աչքերից կաթ-կաթ արտասուք է հոսում մանկան երեսին:

Տիկինը հարցնում է.

- Իմչո՞ւ ես լալիս, և ի՞նչն է պատճառը:

Դայակը թեև առաջին անգամ ծածկել է ուզում սրտի ցավը, բայց երբ տիկինը ստիպում է, նա հարկադրված խոստովանում է:

- Ինչպե՞ս խոսեմ, տիկի՛ն, և ինչպե՞ս բացատրեմ սրտիս դառնությունը,- պատասխանում է դայակը,- անմայր մանկիկիս հիշեցի և լալիս եմ ու միշտ լաց եմ լինում քեզանից գաղտնի ու առանձին. գուցե տեսնես և մտածես, որ ցավակիր մոր սիրտը դառնացնում է կաթի քաղցրությունը, և կամ այս աղի արտասուքի կաթիլները, որ աչքերիցս կաթելով՝

թափվում են կրծքիս վրա, և մանուկը ծծում է այն կաթի հետ: Աղաչում եմ, մի՛ զայրացիր, տիկի՛ն, դայակի կյանքը թշվառ է, ամեն անգամ երբ հիշում եմ նրան, մտատանջվում եմ, թե արդյո՞ք իմ վարձակալ դայակը զավակիս կաթ տալիս է, թե՞ իր զավակի համար իմ զավակին է գրկում, որովհետև մի քանի տարի առաջ սիրասուն զավակներիցս մեկը, կաթնազուրկ լինելով, մեռավ: Գիտե՛ք, տիկի՛ն, այն կանայք, որոնց մեր զավակներին հանձնելով՝ մեր տնից-տեղից հեռանում ու գալիս ձեր զավակներին ենք կաթ տալիս, ա՜հ, այդ անկարեկից կանայք մի՞թե մոր պես խնամում են մեր զավակներին: Ո՛չ, շատ անգամ կաթնակարոտ մեռցնում են, երբեմն նույնիսկ խեղճ տղային խեղդում են, երբ կա՛մ օրորոցի մեջ լացեցնելով, կա՛մ շնչարգել անելով: Զհիշեմ նաև այն, որ երբեմն էլ բոլորովին անգոհ լինելով՝ առանց հսկողության են թողնում մանկիկին, որի պատճառով տարբեր վտանգներ են պատահում: Բայց իրավունք չունեմ այդքան մեղադրել այդ կարիքավոր կանանց, որոնք մեզ նման թշվառ են, աղքատության ու չքավորության պատճառով ստիպված են երկու ծծկեր երեխաներին միաժամանակ կերակրել, կարծես թե երկվորյակ են:

Վշտամայր դայակի խոսքերն ու արտասուքը

խիստ սրտառուչ են, որի մասին մարդ կարեկցելով պետք է խորհի, և առավել ևս տիկին մայրերը պետք է զգան ու խորհեն, թե ինչքա՞ն դառն ու դժվար է կերակրող դայակի վիճակը, երբ նա շարունակ այրվում է իր զավակի սիրուց:

Երանի՜ թե այդ բարեսիրտ տիկինը հետաքրքրությունը բավարարելուց հետո իր մայրական սրտով ու գորովով չափեր դայակի սերը, իմանար ու հավատար, որ նա ևս իր նման մայր է, սիրտ ունի, աղիք ունի, որ գալարվում է՝ միշտ հիշելով իր հոգու հատորիկ զավակին, և մայրաբար կարեկցելով, դայակի մանկիկին ևս բերել տալով՝ իր զավակի հետ կերակրել տար, և այդ ժամանակ ազնվամիտ տիկինը իսկապես առաքինի մայր կհանդիսանար ընտանեկան կյանքում:

Ես չգիտեմ՝ գթասիրտ կանայք կարո՞ղ են մի անգամ փորձել ու իմանալ. թե դայակի սրտի վրա այս մեծ շնորհն ի՞նչ ազդեցություն կունենա: Ինձ այնպես է թվում, որ դայակի սիրտը այդ ժամանակ մեծ երախտագիտությամբ կլցվի, զվարթ և ուրախ հոգով, ամենայն հավատարմությամբ պետք է խնամի տիկնոջ զավակին ոչ թե միայն վարձի, այլ ավելի շատ իր զավակի սիրո համար՝ զգուշանալով, որ դժգոհության առիթ չտա, որ միգուցե դրա համար իր սիրասուն զավակին աչքից հեռացնեն:

Խնդիր է նաև այն, որ երբ դայակի սիրտը լի է ուրախությամբ, արդյոք այս բարոյական սրտահաճո վիճակը ազդեցություն չի՞ ունենա նրա կյանքի ու առողջության, հետևաբար նաև կաթի շատության ու զեղման վրա: Սույն կետը ևս թողնենք բժիշկներին, թող նրան որոշեն:

Գիտեմ՝ այս անսովոր կարեկցության դասը խիստ դժվարին կարող է թվալ ազնվական տիկիններին, որոնք, թերևս, զրկանք կհամարեն իրենց զավակների համար կամ այնպես կկարծեն, որ մի առողջ և առույգ դայակ չի կարող երկու մանկիկներին միասին կերակրել:

Այս մասին լռում եմ, բնությունը թող պատասխան տա. շատ անգամ մի մայրը երկու զավակներ է ծնում, երկուսն էլ մի մոր կաթով են ապրում ու մեծանում, և մի՞թե Նախախնամությունը չի նախատեսել, որ երկվորյակ ծնվածների կաթը բավարարելու համար մոր սրտի վրա երկու ստինքների աղբյուր է բացել և երկու կաթնաբուխ պտուկներ կախել նրա կրծքերից:

Ինձ քաջ հայտնի է, որ այս դժվարալուր խորհրդածությունը զառանցանք է համարվում ներկա ժամանակի և ընտանեկան փափկության առաջ. մեր փափագն ու սկզբունքն է, որ բնա-

կան օրենքը տիրեր, Ավետարանի գթությունը թագավորեր, երբ աշխարհում այնպես են մտածում, որ տղամարդկանց գութը պակաս է, գոնե տիկին մայրերը գթասիրտ լինեին ու ճանաչեին իրենց մայրական պարտականությունները: Յուրաքանչյուր մայր ու ծնող իր զավակին սնում է այն կաթով ու այն սիրով, որ միայն Նախախնամությունն է հաստատում ծնողական անհրաժեշտ պարտականությունները: Ամեն ծնող պրատագանց է, եթե այս պարտականությունը խղճի մտոք չի կատարում: Թող չխոժոռվեն հայ տիկնայք, մենք չենք ասում, որ դայակությունը մեր ընտանեկան կյանքից խպառ վերանա, հարուստ, ազնվական ընտանիքների մայրերը կրծքով կերակրեն, այլ ուզում ենք այս ասել. երբ կյանքը մոռացնել է տալիս այդ պարտականությունը, գոնե դայակին կարեկցեն, որ աղքատ ու տանջված կին է, իրենց պես մի մայր է:

Ուստի քանի որ աղքատությունը բռնավոր է, աշխարհի բոլոր չքավոր ընտանիքները ստիպված են նրա լծի տակ խոնարհվել: Աղքատությունը ոչ միայն տղամարդկանց է պանդխտության տանում, այլև կանանց ու մայրերին, որոնք անկախ իրենց կամքից՝ ստիպված են թողնել իրենց կողակից ամուսիններին և անուշիկ զավակներին

և գնալ ու դեգերել ազնվականների դռները, որպեսզի աղախին լինեն, դայակ լինեն՝ իրենց և ընտանիքի կարիքները հոգալու համար:

Այսպես երբ աղքատ ընտանիքները խիստ կարիքներից մոռանում են իրենց երկունքի զավակներին: Մյուս կողմից էլ նոր աշխարհի նոր ժամանակի փափկասուն տիկինները ճշմարիտ մայրական պարտականությունները մոռանում են և անգամ խիստ ձանձրանում են կերակրելու իրենց արգանդից ծնվածին, կարծես թե մայրական խնամքը նվաստ ու անպատիվ աշխատանք է:

Երբ ընտանիքի մայրերը բուն ծնողական և բնական այդ պարտականություններից խորշում են, այլևս ի՞նչ է մնում իրենց անելու: Լսի՛ր, պատմեմ քեզ. նրանք գիտեն անգործ կյանք վարել և երբեք չձանձրանալ, որոնց առհասարակ պատել է հեղգությունը, մեղկությունը, դատարկ և ունայնախոս ընկերական հարաբերությունը, նրանք գիտեն անպատեհ այցելություններ հնարել, զվարճանքներ կազմակերպել, եկեղեցի գնալ՝ ոչ թե Աննայի ջերմեռանդությամբ աղոթելու, այլ ավելի շատ իրենց ցուցադրելու, իրար տեսնելու և բամբասանքի նյութեր հավաքելու:

Թողնենք այս, մի՞թե այդպիսի մայրերը

իրենց համար ժամանակի շռայլ զեխության մեջ սիրտ ու հոգի մաշելը չեն աշխատանք համարում, որին էլ անձնատուր են եղել, այլևս ո՞ւր է մնում, թե հիշեն տանտիկնության ու մայրության պարտականությունները՝ տան մասին հոգ տանել, զավակներին բուն մայրական կաթով կերակրել և այլն:

Հապա, ո՛վ դուք հայ ազնվական տիկնայք, ես ցանկանում եմ, որ դուք ձեր բարեկեցիկ կյանքի մեջ ձեր մայրական պարտականությունները դարձյալ չմոռանաք, երբ ձեր ամուսիններից ոմանք ժողովրդին հարստահարում են, դուք էլ աղքատ մայրերին չհարստահարեք՝ նրանց զավակների կաթը հափշտակելով: Դուք ինքներդ ձեզ մի խաբեք ու համոզեք, թե կաթի գինը կամ դայակի վարձը վճարում եք, հստակ իմացե՛ք՝ այդ վարձը, եթե հազար անգամ ավելի էլ վճարեք, կաթին չի փոխարինի: Եվ մի՞թե կարծում եք, որ աղքատ մոր կաթը անչափ էժան է, երբ դուք ձեր կաթը նույնիսկ ձեր զավակին եք խնայում:

Ես հավատում եմ, որ մայրերը ի ծնե փափուկ սիրտ ու խիղճ ունեն, զգուշացե՛ք, որ այն չխեղդեք փափուկ կյանքի փշերի մեջ, զգուշացե՛ք, որ դայակի զավակին կաթնասովից չմեռցնեք, եթե աստվածավախ ու արդար մայրեր եք, պետք է

երկնչեք ու հիշեք, որ այդ աղքատ ու տառապյալ մորը տեր ու դատավոր կա, որ գուցե նրա՝ կյանքից զրկված զավակի արյունը ձեզանից պահանջի, և դուք այդ ժամանակ պարտքի ու պատասխանատվության տակ մնաք: Ուստի ես աղոթում եմ, որ դուք ճշմարիտ մայրեր լինեք և հեռու մնաք այս դատաստանից:

ԺԲ
ԶԱՎԱԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանեկան կամ տնային դաստիարակչական վարժարանում ովքե՞ր են այն բնախոս ու մեծ վարժապետները, որոնց բնությունից հանձնվել է զբաղվել իրենց զավակների կրթության հոգատարությունը:

Այդ աշխարհը գիտի, և բնությունն ինքնին ուսուցանում է, թե ընտանեկան դպրոցում օտար մանկավարժ չկա, այլ միայն նրանք են հեղինակ ու դաստիարակ, որոնց պատկառելի ու քաղցր անունը հայր ու մայր է կոչվում:

Այո՛, մանուկները մի ճշմարիտ ու նախախնամող բարի հայր ևս ունեն երկնքում, որ իրենց ստեղծում ու լույս աշխարհ է բերում, երկնքից անձրև ու արև, երկրից հաց ու ջուր բաշխելով՝ պահպանում ու սնուցում է մանուկների կյանքը, նրանք աճում ու զարգանում են, և մենք

տեսնելով զարմանում ենք, որ տհաս մանուկը բարձրահասակ մարդ դարձավ:

Ուստի արդար չափով չափենք ու բաժանենք Երկնքի Հոր խնամքն ու ծնողների պարտականությունները: Արդ, երբ շունչն ու կյանքը Երկնքի Հորից է, սքանչելի պատկերն ու կերպարանքը՝ Երկնքի Հորից, արևը, անձրևը, հացն ու ջուրը՝ Երկնքի Հորից, հասակն ու աճումը՝ Երկնքի Հորից, այլևս ի՞նչ է բաժին մնում երկրավոր հորն ու մորը, եթե ոչ միայն դաստիարակությունը:

Եվ ի՞նչ է ծնողական դաստիարակությունը. ուրիշ ոչինչ, այլ միայն կույր ծնված զավակների աչքը դեպի բարին բանալը, սիրտն ու հոգին առաքինությամբ կրթելը, որպեսզի տեսնեն աշխարհն ու մարդկային կյանքը, լույսն ու խավարը որոշեն, բարին ու չարը ճանաչեն և ամենակարևորը Աստծուն ճանաչեն ու հավատան, կրոնն ու ճշմարտությունը ընդունեն:

Եվ ճի՞շտ է արդյոք, որ մանուկներն, առհասարակ, կույր են ծնվում. ո՛չ, ահա տեսնում ենք, որ պայծառ աչքեր ունեն, տեսնում ու խաղում են հրապարակներում: Եթե մանուկներն ի ծնե կույրի պես աշխարհ գան, այլևս ինչո՞վ են մեղավոր նրանց ծնողները, մի՞թե ծնողները կարող են Հիսուսի պես ձեռքը դնել ու հրաշագործելով կույրերին լուսավորել:

Այդպես է, հայրերն ու մայրերը հրաշագործ չեն, նրանք մարմնով կույրերին չեն կարող բժշկել: Այնինչ մեր խոսքը մանուկների մտավոր կուրության մասին է, որոնց բժշկության լույսը ծնողների դաստիարակության ձեռքում է, ու այդ ձեռքը պարտավոր է, որ անդուլ, անդադար գործի ընտանեկան կյանքում ու մշակի նրա ծառաստանի նորատունկ ծաղիկները: Այդ ձեռքերի պարտքն է, այո՛, որ խլի մանուկների սրտից անպիտան ու խոտան բերքը, նրանց տեղը սերմանի ու տնկի ճշմարիտը, բարին ու օգտակարը:

Մենք հավատում ենք, և Դավիթը վկայում է, թե Աստված առանձին-առանձին է ստեղծում մարդկանց սրտերն ու զետեղում նրանց գլխում հանճարի ամանը: Բայց գիտենք նաև, որ այդ կենդանի ամանն ի սկզբանե, երբ մարդը մանուկ է ու երեխա, դատարկ է: Ո՞վ առաջինը մի փոքր կլցնի այդ անբավ դատարկությունը թե՛ բարի և թե՛ չար գաղափարների նյութերով: Հայտնի է, որ այդ դատարկ ամանին մոտ ու մերձավոր ձեռքը միայն ծնողների ձեռքն է, ինչ որ ուզեն, այն կարող են լցնել, թե՛ բարի, և թե՛ չար:

Ահավասիկ, բարու ու չարի սկիզբն այստեղ է, ապա թե ոչ, որտեղի՞ց են մարդկային հա-

սարակության մեջ ավելանում բարի ու չար մարդիկ: Մի՞թե դրանց սկզբնաղբյուրն ընտանեկան կյանքը չէ: Ես այստեղ վկայաբերում եմ Հիսուսի վճռական խոսքը, որ մարդու սիրտը բարի ու չար գանձերի աղբյուր է համարում. «Բարի մարդը իր սրտի բարի գանձերից բարին է բխեցնում, իսկ չար մարդը չարն է բխեցնում» (Մատթ. ԺԲ 35, Ղուկ. Զ 45):

Ուստի մարդն ինքնաբերաբար չի կարող միտք արտահայտի: Մարդն, իր մանկությունից սկսած, իր սրտի գանձարանում հետզհետե ընդունում է թե՛ բարին, թե՛ չարն, ու ինչ ընդունում է նախապես, միայն այն է արտաբերում դուրս՝ թե՛ բարին, թե՛ չարը նույն կերպ:

Մանուկը քանի դեռ մանուկ է, չարն ու բարին որոշել չգիտի: Ինչ որ իր ծնողների բերանից լսի ու ինչ օրինակ նրանց կյանքում տեսնի, այն էլ միշտ բարի կկարծի: Բայց մի՞թե ծնողներն իրենց որդիներին չարը կկամենան, թեկուզ և իրենք չար լինեն: Այս մասին է խոսում Հիսուսն իր Ավետարանով. թե՝ «Դուք, որ չար եք, գիտեք բարիք պարգևներ տալ ձեր որդիներին» (Մատթ. Է 11, Ղուկ. ԺԱ 13) և այլն:

Ավետարանի այս ակնարկությունը, որ երկնավոր Հոր ու երկրավոր ծնողների բարիքները համեմատելով՝ ցույց է տալիս, թե որքան

առավել ու գերագույն են Երկնավոր Հոր տված բարիքները, միաժամանակ էլ ցույց է տալիս, որ երկրավոր ծնողները միայն բարիքի մատակարար լինեն այս առօրյա կյանքում, նաև գիտենան անցավոր բարիքներ պարգևել իրենց որդիներին, ինչպես օրինակ՝ հարստություն, գանձ, հայրական ժառանգություն ու աշխարհի այլևայլ նյութական բարիքներ:

Մեծապես կսխալվեն այն ծնողները, եթե այնպես հավատան, որ այս նյութական բարիքներն, առանց հոգեկան ու բարի դաստիարակության, մնայուն ու ճշմարիտ բարիք են որդիների համար: Ո՛չ, մենք կյանքի փորձից տեսնում ենք, որ հարուստ մեծատունների զավակները, երբ առանց հիմնավոր դաստիարակության հայրենի մեծագանձ փարթամության ժառանգորդ են եղել, և որոնց կյանքից ու վարքից պատմությունը շատ օրինակներ է հանում մեր առաջ, այդպիսի անդաստիարակ ժառանգորդները ի վերջո աղքատացել են, ագնվական ծնվելով՝ ստրուկ են մեռել, և փոխանակ իրենց տոհմական անունը հարատև փառքի մեջ բարձր պահելու՝ այն ջնջել են անարգությամբ ու անհիշատակ, անանուն գնացել են աշխարհից:

Ուստի հետամնաց զավակների համար ստույգ, հիմնական ու հարատևող բարիքը

միայն ճիշտ դաստիարակությունն է, առանց այս ճշմարիտ պայմանի՝ նրանք, ինչպես Իմաստունն է ասում, ծնողական փտած արմատից բուսած փուտ շառավիղներ են, որոնք, թեպետ առժամանակ, անպտուղ ծաղիկներով են զարդարվում (Իմաստ. Սողոմ. Դ 3-4): Իսկ մարդիկ, աչքախաբ լինելով, այնպես են կարծում, թե այդ ընտանեկան գերդաստանը բախտավոր ու երջանիկ է. մոտից անցնում ու երանի են տալիս՝ այն համարելով իբրև Լիբանանի բարձրացած անտառ: Անցնում են, ապա ետ դառնալով՝ տեսնում են, որ այն այլևս գոյություն չունի. ընտանի շառավիղներն արմատախիլ են, մեծագանձ փարթամությունը վատթար կյանքի մեջ փչացել է, հայրենի շեն տունն անշեն ավերակ է դարձել, եթե մնացել է մի մնացորդ ճիռ[1], այն ևս ավերակ տան փողոցի անկյունում նստած հաց է մուրում՝ անցորդներին վկայելով, թե ես քանդեցի հորս տունը: Այս է ահա վախճանն անդաստիարակ զավակների, և այս է արդյունքն ու պտուղը նյութապաշտ ու ագահ ծնողների:

Ո՞վ կհավատա, թե աշխարհի բոլոր թշվառ աղքատներն էլ դառն ու դժբախտ դիպվածներից են մուրացկան դարձել: Ո՛չ, այդպես չէ, մարդիկ պատմում ու վկայում են, և ես նույնիսկ ներկա կյանքում տեսնում ու ճանաչում եմ նրանց, որ հայրենի տան ապարանքի բարձր պատշգամբից իջել, խոնարհվել են մինչև գետնի փոշին՝ կարոտ մնալով անգամ մի կտոր չոր հացի: Անշուշտ, նրանք, այդ անբախտ վիճակին հասնելով, ուշ են սթափվում, ինչպես այն կրտսեր անառակ որդին, որի մասին մեզ ասում է Հիսուսը, և կամ թե այն չարաժառանգ զավակը, որի մասին հին իմաստասերները պատմում են, թե հայրենի տան բազմագանձ հարստությունը շռայլաբար վատնելով, մի օր առվի եզերքը նստած, չոր ու ցամաք հացը ջրի մեջ թաթախելով՝ պարկեշտաբար ուտում էր, բարոյական իմաստասեր Սոկրատը, նրան այնտեղ տեսնելով, ասում է. «Պատանի, եթե դու այդպես ապրեիր, այժմ խորտիկ կճաշակեիր»:

Աշխարհի հասարակական ասպարեզում՝ ջրերի եզերքին, որքա՞ն կան այնպիսի ապերջանիկ զավակներ, որոնք իրենց շռայլ կյանքի պատճառով ազնվական բարձրությունից ընկել են թշվառության մեջ, որով իրենց հայրենի տան տոհմական փառքն իրենցով վերջացել է:

Այսպես է, տան ճրագը մշտապես վառ չի մնա և շուտ կմարի, երբ դաստիարակության լույսով չի վառված: Ուրեմն զավակների ապա-

[1] Այսինքն՝ սերունդ, ճյուղ *ծնթ. խմբ.*:

գա կյանքը ծնողների դաստիարակությունից է կախված. եթե ի սկզբանե մատաղ զավակները բարի և ճիշտ դաստիարակություն են ստացել, այլևս տարակույս չկա, որ հայրենի տան ճրագը մշտավառ կմնա, և առհասարակ ընտանեկան բարեկեցիկ կյանք կվարեն:

Սակայն գոնե փոքրիշատե գրենք, թե ընտանեկան կյանքում ի՞նչ և որքա՞ն են ծնողների կրթական դասերը, և կամ բարի ու ճիշտ դաստիարակության պայմանները:

Ծնողական դաստիարակության մեջ առաջին մեծ դասն ու առաջին մեծ գիտությունը կրոնն ու աստվածապաշտությունն են, և նրա միակ դասագիրքը Աստվածաշունչ մատյանն է: Թեպետ բարձր ու վսեմ են աստվածապաշտության գաղափարները, մանուկները չեն կարող ըստ արժանավույն ըմբռնել: Ինչպես արդի դաստիարակ մատենագիրներից ոմանք, փորձից ելնելով, ասում են՝ խիստ ապաժամ է մանուկների անզոր միտքը դեպի երկինք հանել, երբ դեռևս իրեն շրջապատող երկրի բաները չգիտի:

Ես ընդունում եմ այս կարծիքը, բայց ես այստեղ չեմ խոսի այն դասերի մասին, որ դպրոցական ուսման հետ ավանդում են կրոնուսույց դասախոսները, ես կխոսեմ կրոնի նախակրթության մասին, որ դաստիարակության շենքի առաջին հիմնաքարն է, և որ միայն ծնողների ձեռքը պիտի այդ երկնային արքայության հիմնաքարը դնի ու հաստատի մանուկների սրտում: Զեմ ասի նաև, որ ծնողներն, իբրև աստվածաբան վարդապետներ, ճառեն կրոնի բարձրության մասին: Ո՛չ, ծնողների դասերը շատ պարզ ու բնական են. մանուկը, երկինքն ու աստղերը տեսնելով, ըմբռնում է աներևույթ Աստծուն, նա, երկիրը, ծառերն ու ծաղիկները տեսնելով, հետաքրքրվում է, հարցնում է, ուզում է իմանալ, թե ո՞վ է երկինքն ու երկիրը զարդարող Արարիչը: Մանուկը, շատ անգամ իր սրաբիբ աչքերը տիեզերքին հառելով, ինքն իրեն ուշադրություն է դարձնում և ուզում է իմանալ՝ ի՞նչ է արևը, ի՞նչ է լուսինը, ի՞նչ են աստղերը և ի՞նչ է աշխարհը, ծովը, ցամաքը:

Մանուկն իր այս հարցաբանության մեջ ապացույց չի խնդրում ծնողների դասերից, սխալ էլ լինեն, նա ուղիղ ու կատարելապես հավատում է, բավական է, որ ծնողները ձանձրույթ չզգան ու հեռատեսորեն պատասխանեն մանկան հարցերին:

Կրոնի ու աստվածապաշտության դասերը դժվարին ու անըմբռնելի չեն, մանուկներն ու պարզամիտները հավատով այն շուտ են ըմբռ-

նում, քանի որ Աստծու հայտնությունը երեխաների համար է, ինչպես Հիսուսն է հայտնում. «Գոհություն եմ հայտնում քեզ, Հա՛յր, որ ծածկեցիր այս բանը իմաստուններից ու գիտուններից ու հայտնեցիր մանուկներին» (Մատթ. ԺԱ 25, Ղուկ. Ժ 21): Այո՛, Հիսուսի հայտնությունը ավելի շատ սիրում էին գալիլեացի տխմար ձկնորսներն ու գյուղացի բոկոտն, փոշոտ մանուկներն էին, որ վազում էին նրա գիրկը, իսկ գրագետ դպիրներն արհամարհելով անցնում էին:

Ծնողական դասերում բնավ հարկավոր չեն ճարտարախոսություն, փիլիսոփայություն, այլ մանկական հասակի համեմատ գիջելով՝ հարկավոր է պարզ, ընտանի ու սիրալի խոսքերով ավանդել կրթությունը՝ գիտենալով, որ երեխաների դաստիարակության մեծ պայմանը ծնողական գորովն ու բնական սերն է, միայն թե այդ սիրո մեջ չգեղծանեն ծնողները կամ չափազանցությամբ և կամ խիստ ու անհոգ սառնությամբ:

Դաստիարակության եղանակի մեջ այս երկու կերպի վարմունքներն էլ միօրինակ վնասակար են, քանի որ չափազանց սերը չափազանց ազատություն ու համարձակություն է առաջացնում երեխաների դյուրազգաց ու անհաստատ բնավորության մեջ՝ այլևայլ հոռի կրքերով հանդերձ, որով նրանք լինում են կամակոր, ինքնահավան, զայրացկոտ և սաստիկ պահանջող:

Իսկ չափազանց խստությունը ճնշում ու ջլատում է երեխաների բնավորության աշխույժ ու զվարթ ոգին, որով բթանում է միտքը, սիրտը թանձրանում ու որդիական գորովն սկսում է թմրել: Շատ անգամ էլ դառնանում, բարկանում են ծնողների դեմ, մանավանդ երբ ծնողները դաժան անարգանքով ու բրածեծով տակավին դաստիարակության հին փորձն են փորձում:

Հոռի դաստիարակության զավակներն այս կերպ վրեժ են լուծում իրենց խստասիրտ ծնողներից, և իրենք ևս գիտեն, որ օրինակ առնելով՝ խստապարանոց են լինում ու մոռանում են ծնողական մեծ երախտիքը՝ մոր անուշ գրկարանի կաթն ու հոր սեղանի հացը:

Զարմանք չէ, որ այս անարգ դաստիարակության արգասիքը նույնն է, և խստությունն ուրիշ խստություն է ծնում: Քանի որ ծնողները միայն մարմնով չեն ծնում իրենց զավակներին, այլ ծնում են նաև բնավորությամբ. ընտանեկան կյանքում զավակները բնականաբար սովորում են իրենց ծնողների բնավորությունից ու փոխ են առնում օրինակից: Արժվի չափ

սրատես են մանուկների աչքերը, քաջ գիտեն իրենց ծնողների կյանքն ու շարժումը և, ըստ այնմ, ընդունում են թե՛ չարը և թե՛ բարին ու հետևում դրանց:

Ուստի ծնողների ամենամեծ ու սեփական պարտականությունն է, որ բնախոս ու մտավոր դաստիարակությունից առավել բարի գործերի օրինակով դաստիարակեն իրենց զավակներին: Թող համոզվեն բոլոր ծնողները, որ մի բարի օրինակն առավել ազդու ու տպավորիչ է, քան հազար խրատը, և սրա բնական պատճառն այն է, որ մեր աչքի զգայարանը շատ զգայուն ու ներընդունակ է, և այն ներս է ընդունվում ու տպավորվում մեր սրտում ու հոգում:

Մանուկները դեռ պատանի ու երիտասարդ հասակում երբ ընտանեկան կյանքից դուրս արտաքին ընկերության մեջ են մտնում, շատ չարօրինակ գայթակղություններ են տեսնում ու կամ խորշում են, կամ ընդունում, բայց այն է ամենից ավելի չարագույն գայթակղությունը, որ մանուկներն ընտանեկան կյանքում են ընդունում, և առավել ևս չար է այն, եթե բուն ծնողների օրինակից են ընդունում: Երանի՜, հազար երանի այն ծնողներին, որ մշտարթուն հսկում են իրենց կյանքն ու անձը, որպեսզի երբեք գայթակղություն ու չար օրինակ չտան իրենց զավակներին: Իսկ վա՜յ և եղո՜ւկ այն անզգույշ ծնողներին, որոնք ընտանիքն ու մանուկներին իբրև չմարդ համարելով՝ իրենց պարսավելի կյանքն ու վարմունքը ցուցադրում են նրանց, արտաքին ու օտար գայթակղությունից ավելի իրենք իսկ գայթակղություն են լինում զավակների ու ընտանիքի համար ու նրանց ապագա կյանքը մանկության մեջ մեռցնում:

Հիսուսն ամեն գայթակղություն տվողի համար սոսկալի պատիժ էր սպառնում ու բարվոք էր համարում, որ նրանք շուտ հեռանան աշխարհից, ու էշի երկանք կապելով նրանց պարանոցին՝ ծովը գցեն, թող մինչև անդունդ սուզվեն, ու ծածկվի նրանց չարօրինակ պատկերն ու հիշատակը մարդկանց աչքից, որ այլևս չկարողանան տեսնել ու գայթակղվել:

Ստույգ հավատացեք, ո՜վ դուք ընտանիքի ծնողներ, որ պատասխանատու եք Աստծու և միաժամանակ մարդկային հասարակության առաջ, եթե չար զավակ թողնեք աշխարհին. ձեր գնալուց հետո ձեր մեղքը պարանի պես ձգվելու է ձեր ետևից, որով և ոչ միայն սոսկ մի ընտանեկան կյանք եք եղծանելու, այլև ժողովուրդ, ազգ ու հայրենիք:

Այսպես, ինչ որ հոռի դաստիարակությունը քանդում է, ուղիղ դաստիարակությունն է շի-

նում, և չինող բարոյական ճարտարապետները միայն ծնողներն են՝ ընտանեկան կյանքով ու տված դաստիարակությամբ:

Ոչ ոք թող այնպես չհամարի ու այնպես չհավատա, թե չարության գայթակղությունն ինքն իրեն եկավ մեր աշխարհ ու եղծեց, ապականեց մարդկային հասարակությունը: Ո՛չ, չարությունը ծնողներն աշխարհ բերեցին ու ավանդեցին իրենց զավակներին, զավակները՝ թոռներին, ու, այսպես չարության ժանտ ու ապականիչ սերմերն, ընտանեկան շրջանից սկսելով, տարածվեցին ու ծավալվեցին մարդկային հասարակության մեջ:

Այստեղ ես չեմ խոսի սկզբնաչար նախանձի մասին, որով առաջին մահն ու գայթակղությունը մեր աշխարհ մտան, այլ կխոսեմ այն բոլոր նորածին գայթակղությունների մասին՝ ակներև տեսնելով, որ մարդիկ դրանք ծնեցին ու բխեցրին իրենց սրտի չար գանձից ու կարծում են, թե չարությունն ինքն իրեն է ծնունդ առել՝ առանց մարդու ձեռքի, քանզի Քրիստոս ասաց. «Վա՜յ այն մարդուն, որի միջոցով կգա գայթակղությունը» (Մատթ. ԺԸ 7, Ղուկ. ԺԷ 1):

Ուստի ծնողներն ամեն ջանք ու խնամք պետք է տանեն՝ բարի մշակմամբ ընտանեկան պարտեզից խլելու և չքացնելու չարասերմ բույսերը, գիտենալով, որ միայն իրենք են իրենց պարտեզի դարմանող մշակները, ուրիշ ոչ ոք չկա:

Հույժ սխալվում են այն ծնողները, որ զավակների դաստիարակության պատասխանատու բեռը դպրոցի ու մանկավարժների վրա են դնում, որոնց պարտականությունը միայն ուսուցանելն է, որովհետև մանկավարժները միայն մտքի հետ են խոսում, սրտի ու հոգու հետ գործ չունեն: Այդպիսի ծնողները թերևս այնպես են կարծում, թե առանց ծնողական սիրո կամ հեղինակության՝ ընտանեկան կյանքից դուրս դաստիարակություն կա աշխարհի երեսին, և կամ օտար վարձու մարդը, որքան էլ բարի ու հավատարիմ լինի, կարող է իր բնույթով այնպես սիրել ու կրթել, ինչպես գորովասիրտ ծնողները, միայն որոնց էլ բնությունը տվել է ծնողական սրտի բուռն սիրո բնական զգացմունքը:

Եթե հնապաշար մտքով ծնողներն այնպես են մտածում, որ իրենք միայն զավակ ծնեն, իսկ դպրոցը դաստիարակի, ուրեմն Հիսուսի ասած ավետարանական վճիռը երկբայելի է, որով նա հովիվների համար ասում է. « Քանի որ վարձկան է և ոչխարների համար հոգ չի անում» (Հովհ. Ժ 13):

Եվ դուք հավատո՞ւմ եք, ո՛վ հայրեր ու մայ-

րեր, որ ձեր ընտանեկան գավիթում ծնված այն մատաղ գառների համար ձեզանից բացի ու ձեզանից ավելի հոգատար սիրտ ու ձեռք կա աշխարհում: Բնավ ո՛չ, դուք կզղջաք ու կխաբվեք, եթե այդպես կարծեք, քանի որ եթե յուրաքանչյուր հայր ու մայր նույն ծնողական գորովով կարողանար բնականորեն սիրել ուրիշի ծնած զավակին, այստեղից մի ուղիղ հետևություն անելով՝ կասեմ, թե ուրեմն խորթ մայրը ծնել է: Եվ եթե տակավին չեք համոզվել, ապացույց եք խնդրում, ուշի ուշով նայեցեք այն երկու մանկաբեր կանանց բողոքն ու դատաստանը, երբ առաջին անգամ Սողոմոնն ատյան ելավ ու Սուրբ Գրքում արձանագրեց այն իմաստուն վճիռը, որից աշխարհի դատավորներն ապշում են:

Իմացե՛ք նաև՝ ընտանեկան դաստիարակության մեջ կատարյալ կրթությունը ծնողների կենդանի կյանքն է, և ոչ թե դպրոցը: Այդ գործնական կյանքը որքան ուղիղ վարի, ուղիղ շավիղով քայլի, այլևս ո՞վ կտարակուսի, որ զավակները կշեղվեն ծնողների ուղղագիծ շավիղից:

Որքա՞ն զարմանալի է, և արժի, որ ապուշ համարենք այն ծնողներին, որոնք, կիրթ կյանքի ուղղությունից շեղվելով, միակողմանի են

քայլում և պահանջում են, որ իրենց զավակներն ուղիղ քայլեն. շատ հարմար է խեչափառի առակը, որ խրատ է տալիս իր ձագերին ուղիղ քայլել: Ճարտար ձագն իսկույն պատասխան է տալիս. «Հայր, ես քո շեղ քայլելն եմ տեսնում»:

Արդ, եթե ճշմարիտ ու գործնական կրթությունն ընտանեկան կյանքում միայն ծնողների անխոտոր շավիղն ու ուղղավար կյանքն է, ուրեմն ավարտելով իմ ճառն՝ այս խրատն ավանդեմ բոլոր ծնողներին, որ նախ՝ իրենց կյանքն ուղղեն, ապա՝ իրավունք ստանան իրենց զավակներին խրատելու, քանի որ իրենք, երբ կրոնի պարտավորությունների մեջ գաղջ ու մեղկ են, թող չսպասեն, թե կիրակի առավոտ զավակներն իրենցից կանուխ եկեղեցի կգնան, եթե զեխ ու շռայլ են, թող չհուսան, թե նրանք սակավապետ ու խնայող կլինեն, եթե հարբեցող ու անառակ են, ո՞վ կակնկալի, որ որդիները պարկեշտ ու համեստ կլինեն, եթե անգործ, անաշխատասեր են, ո՞վ չգիտի, որ զավակներն ավելի ևս անհոգ դատարկաշրջիկ կլինեն և այլն:

Ահա այսպես ծնողների հոռի կյանքը զավակներին է թափանցում իբրև ժառանգական հիվանդություն. նույնպես և բարի ծնողների

առաքինի կյանքն է ժառանգություն մնում որ-դուց որդի, որով թե՛ ընտանիքի և թե՛ ազգի ու ժողովրդի համար բարի գավակներ են պատ-րաստում, ու ճշմարիտ հայրն ու մայրը բարի դաստիարակ են հանդիսանում աշխարհում, որոնց հիշատակը լի է օրհնությամբ:

ԺԳ
ԶԱՎԱԿՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մանուկ կաթնակերը, որ թեպետ դեռ իմա-ցականություն չունի, բայց բնազդի բերմամբ մոր գրկում առաջին անգամ զգում ու ճանա-չում է սերը: Մանուկը, եթե չեմ սխալվում, մոր միջնորդությամբ ու վկայությամբ է ճանաչում նաև իր հորը: Եվ ահա այս ճանաչման մեջ է ծնվում ծնողասիրության զգացումը, և որքան ինքն աճում ու զարգանում է, այնքան իր սրտի մեջ պետք է մեծանան ծնողասիրության պար-տականությունները:

Եվ որո՞նք են այդ պարտականություննե-րը. ահա, մեկ առ մեկ բացատրեմ քեզ: Նախ և առաջ բնական ու աստվածային պարտակա-նություն է ճանաչել, որ իր կյանքի ու գոյութ-յան պատճառն իր ծնողներն են, եթե չլինեին ծնողները, ինքն այս աշխարհում ո՛չ լույս պի-

տի տեսներ, ո՛չ արև, ո՛չ մարդ պիտի կոչվեր ու մարդկային հասարակության դասին դասվեր՝ պիտի մնար չգոյության մեջ՝ անծնունդ ու անանուն:

Այո՛, զավակների պարտքն է ճանաչել ծնողին ու համեմատել ծնողական ծայրագույն սերը. աշխարհում ուրիշ ոչ ոք՝ ո՛չ եղբայրը, ո՛չ քույրը, ո՛չ բարեկամը, ո՛չ ազգականը և ո՛չ իսկ ամուսինը չեն կարող այնքան գորովով սիրել ու խանդաղատել իրենց, տալ անձն անձի ու հոգին հոգու փոխարեն, ինչպես ծնողները: Ուստի ծնողական սիրո այս մեծ իրավունքը նույն փոխադարձ սերն է պահանջում զավակներից, որ սրտանց պետք է հատուցեն ու չմնան պարտական:

Ճանաչել ու հպատակվել է պետք ընտանեկան կյանքի ու տնային փոքրիկ թագավորության մեջ, որովհետև բարձր ու փառավոր է ծնողների իշխանության աթոռը: Թեպետ և նրանք ստրուկ լինեն, աղքատ լինեն ու իբրև չինական խրճիթի մեջ ապրեն, դարձյալ միշտ մեծ են ծնողները, որ քաղցր ու անբռնազբոս սիրով են հրամայում, որոնց արժի կամակատար հնազանդություն մատուցել, ինչպես տիեզերքը Աստվածապետական աթոռի առաջ: Բնավ չկա մի օրենք ու իրավունք, որ զավակներին

ազատ ու անհնազանդ դասի ծնողների բնական ու պարտավորեցնող իշխանությունից՝ բացառությամբ միայն հավատքի, Խաչի ու Ավետարանի, երբ իրենց հավատացյալներին եկեղեցի է կանչում. այնժամ հարկավոր է թողնել ու մերժել ծնողների սերն ու հրամանը հանուն Հիսուսի առավել սիրո, ըստ այնմ, թե՝ «Ով իր հորը և կամ մորը ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ» (Մատթ. Ժ 37, Ղուկ. ԺԴ 26):

Ճանաչել է պետք նաև, թե որդիները որքա՞ն են երախտապարտ ծնողներին, որոնք ոչ միայն երկունքի ցավերով ծնել են իրենց, այլև բազմադիմի չարչարանքներ, տառապանքներ ու զրկանքներ կրելով՝ պահել ու դարմանել են: Որդիները պետք է փոխհատուցեն, երբ ծերությունը հասնի կամ վաղաժամ հիվանդություններ ու փորձություններ շրջապատեն նրանց: Այս դառն տառապանքների մեջ ո՞վ պիտի մխիթար լինի ծնողների սրտին, եթե ոչ զավակները, որոնց անհրաժեշտ պարտականությունն է ամենայն սիրով հոգ տանել ծնողների մասին մինչև գերեզմանի դուռն ու ձեռքով հողը դնել նրանց խոնջացած գլուխն ու աշխատած անձը:

Բարեծնունդ ու օրհնյալ զավակները մինչև ծնողների վախճանը միշտ հոժարափույթ են բո-

լոր պարտականությունները կատարելու: Բայց ներկայիս հայ ընտանեկան կյանքում շատ անգամ երևում են անխրատ, ապիրատ, անգութ, աննվեր, ստահակ, ծնողներին անհնազանդ, անհավան ու անառակ զավակներ, որոնք, հոր ու մոր անչափելի երախտիքը, խնամքը, գուրթն ու սերը ոտնահարելով, հեռանում են հայրական տնից, ուր որ մոլեգին կիրքն է իրենց տանում: Նրանք անձնատուր են լինում վատաբարո ընկերներին ու անառակ կյանք ու վարք են վարում: Եվ ինչպես ճշգրիտ նկարագրում է Ավետարանի առակը, նրանք՝ իբրև ծառա ու ստրուկ, խոզարած են լինում: Զեխ ու զազիր կյանքի մեջ թավալվելով՝ ոչ միայն վատնում են հայրենի ժառանգությունը, այլև առհասարակ անարգ ցանկության ու վատթարության մատնվելով՝ կորցնում են հոգին, մարմինը:

Զգիտեմ՝ կա՞ն արդյոք այդ անառակ դասից ոմանք, որ անառակ որդու օրինակին հետևելով՝ մտաբերեն հայրենի տունը, հացալից սեղանն ու որդիության ազատ կյանքը, ետ դառնան այդ չարավար, տղմալից կյանքից, զգաստանալով գան խոնարհվեն ծնողների գթի առաջ ու վերստին ստանան իրենց նախկին փառքն ու պատիվը:

Զգիտեմ նաև, թե այսպիսի դարձող ու զղջացող անառակների համար պիտի գտնվե՞ն այնպիսի վեհանձն ու որդեսեր ծնողներ, որ նմանվելով Երկնային Հորը՝ ընդառաջ գնան ու ողջագուրվելով համբուրեն անառակ զավակի կորացած պարանոցը, թե՞ աններող խստասրտությամբ ծնողական սիրո ու գթի դուռը փակելով՝ թողնեն, որ օտարից մերժված թշվառ զավակը, հայրենի տան դռան առաջ ընկած, Ղազարոսի նման անտերունչ ու սովատանջ մեռնի: Եվ ի՞նչ կանեն այնժամ փառասեր ու խստասիրտ ծնողները. իսկույն կհաշտվեն անշունչ դիակի հետ, մեծ պատվով ու շուքով հուղարկավորության հանդես կկազմակերպեն ու անառակ որդուն՝ իբրև մեծատան զավակ, կթաղեն:

Դու մի՛ կարծիր, ընթերցո՛ղ, թե այսպիսի եղերական դեպքեր ու անառակ զավակներ չկան հայ ազգի մեջ, եթե խելոք լինես, մեր ազգային կամ ընտանեկան կյանք մտնես ու շրջես, պիտի տեսնես, կարդացո՛ղ, շատ անառակ որդիներ, մանավանդ Բյուզանդիոնում ու այլ ծովեզրյա քաղաքներում, ուր որ կարծում ենք, թե քաղաքակրթությունը, դպրոցն, ուսումն առաջ են գնացել: Այո՛, դա այդպես է, բայց անդաստիարակ առաջադիմությունը մեր ընտանեկան կյանքը չի բարվոքում, ինչպես քսան տարուց ի վեր՝ մինչև այսօր, թե՛ փորձով, թե՛ օրինակով, մենք տեսնում ու համեմատում ենք ազգի

անցյալն ու ներկան:

Այժմ դառնանք, բարի զավակների ուրիշ պարտականությունները հիշեցնենք: Այո՛, բարեժառանգ զավակները շատ պարտականություններ ունեն ծնողների հանդեպ, թե՛ կենդանության ժամանակ թե՛ մահվանից հետո, թե՛ երկրում, թե՛ երկնքում: Օրհնյալ ու գովելի են այն բարեհիշատակ ծնողները, որ իրենց հերթին այդ սուրբ պարտականություններն անթերի են կատարում: Նրանց կյանքն ու վախճանը միշտ բարի կլինի աշխարհում ու ընտանեկան բարեկեցիկ երջանկության մեջ, ինչպես խրատատու Սողոմոնի առակախոսության հորդորում. «Պատվիր հորդ և մորդ, որ բարիք լինի քեզ» (Ելք Ի 12), իսկ հայր ու մայր անարգողների համար, ընդհակառակը, նզովք է կարդում. «Ով անարգի հորն ու մորը՝ նրա աչքերի բիբերը խավարեն» (Առակ. Ի 20): Ո՜հ, որքա՜ն խստությամբ է դատում Սողոմոնն այն ապաշնորհ զավակներին, որ ապերախտ են ծնողական սիրո դիմաց: Ինքն անաչառ արդարությամբ է նրանց հատուցումը վճռում. այդպիսի չարահիշատակ զավակները կուրանան, լույս ու արև չտեսնեն, խավար աչքով շրջեն աշխարհում, որպեսզի հավատարիմ ու հնազանդ զավակները տեսնեն ու սոսկան:

Ուրեմն, ո՛վ դուք, որ աշխարհում հայր ու

մայր ունեք, ընտանեկան կյանքի և ծնողական գրկարանի մեջ եք ապրում թե՛ մեծ և թե՛ փոքր, թե՛ անդրանիկ և թե՛ կրտսեր, թե՛ քույր և թե՛ եղբայր, առհասարակ ձեզ հորդորելով՝ համառոտեմ ճառիս միտքն ու ձեր պարտականությունները, ուշադի՛ր եղեք: Գիտե՞ք՝ ո՞վ են նրանք, որ ձեզ կյանք տվեցին, աշխարհ բերեցին: Նրանց անունները հայր ու մայր են կոչվում ու ձեր ծնողներն են:

Դուք պարտավոր եք նրանց սերը սիրով փոխհատուցել, դուք պարտավոր եք նրանց կաթն ու հացը Հակոբ նահապետի պատրաստած խորտիկով փոխհատուցել, որպեսզի արժանապես ժառանգեք Իսահակ հոր օրհնությունը:

Դուք պարտավոր եք ամենայն անկեղծությամբ խոնարհվել ձեր ծնողների առաջ, հնազանդությամբ լսել, մեծարանքով ընդունել այն բոլոր հրամանները, որ ձեզ և ընտանեկան կյանքի համար բարի ու օգտակար են:

Դուք պարտավոր եք ողջակեզի փայտը շալակել, անդիմադարձ գնալ մինչև Բեթելին լեռն ու թողնել, որ այնտեղ ձեր թևերը կապվեն, ինչպես Իսահակինը սուրբ նահապետ Աբրահամի առաջ: Ինչպես վերը մի անգամ հիշեցի, միայն Ավետարանի խոսքը կարող է այդ պարտականության պինդ կապը քանդել, եթե Աբրահամը

թողնի հավատքն ու վերադառնա Խառան՝ իր հայր Թարայի տուն, և պաշտի հայրենի կուռքը, իսկ Իսահակը խաչը գրկի, մնա Բեթելում և Գողգոթայի գլխին:

Երբ կծերանան ու կզառամեն ձեր ծնողները, դուք պարտավոր եք մխիթարող որդի ու ծերության ցուպ լինել, ամենահոժար սիրով խնամել, դարմանել ու երբեք չտրտմեցնել իրենց: Դարձրեք ձեր աչքը նաև Քամի ժպիրհ ու հայրածանակ օրինակից, Նոյի պարկեշտ ու երկյուղած որդիների պես ծածկեցեք ձեր ծնողների ամոթույքը, որ ընտանեկան տան պատիվն է, զգուշացեք, հորն ու մորը բամբասողներն Աստծու ու մարդկանց առաջ շատ մեղապարտ են:

Դուք պարտավոր եք դարձյալ հայրենի տան փառքը, ճրագը, տոհմական ազնվականությունը նույն ճոխության ու փառավորության մեջ պահել և միշտ ջանալ երբեք չաղարտել ճշմարիտ ազնվականության պատիվը: Եթե բախտը ձեզ այնպիսի վիճակի մեջ դներ, որ դուք աղքատ ծնողների զավակ լինեիք, շատ է, թե նրանց բարոյական առաքինությունը ժառանգեք, որ ադամանդից, ոսկուց ու կորստական հարստությունից ավելի մեծ է: Իմացե՛ք նաև՝ այն ազնվականների զավակները, որոնք հայրենի տան հարստությունը դյուրապես են ժառանգում, այնքան էլ մեծ ու գովելի չեն, փառքն ու պարծանքն ավելի են, երբ ձեր ազնվականությունը ձեզանից է սկսվում, և դուք իրավամբ հայրենի տան հիմնադիր ազնվականն եք լինում: Եվ որքա՞ն են գորովանքի արժանի այն վատ, ծույլ ու անվաստակ զավակները, որոնց Սողոմոնը հրավիրում է, որ գնան մրջյունի աշխատանքը տեսնեն: Նրանք թեպետ պարծենում են, թե իրենք ազնվականների զավակներ են, բայց վատթար ու վատնիչ տնտեսվարումով իրենցով են վերջացնում հայրենի տան ազնվականությունը, հանգցնում տան պայծառ ճրագը: Նրանք, որ նախկինում տեր էին, դառնում են ծառա և ստրուկ: Մուրացկանի պես շրջում են, ու երբեմն էլ եկեղեցին նրանց համար հանգանակություն է անում՝ ծանուցելով, թե ճոխ հարստությունից սնանկացած արժանավոր ու թշվառ մի անձ է, խնդրում է՝ եկեղեցու մեջ ծածկեն իր անունը, երբ ինքը հրապարակում բացեիբաց մուրում է: Դուք այնպես մի կարծեք, թե բոլոր դժբախտները երկրի կամ աշխարհի պատուհասներից են սնանկացել. ո՛չ, դրանց մեծ մասի անկումը իրենց իսկ վարած անչափավոր կյանքից է:

Բավական եմ համարում ձեզ համար այսքանը, ո՛վ հավատարիմ զավակներ, մտապահեցե՛ք

ինչ որ գրեցի, լիովին հատուցե՛ք ձեր ծնողների պարտքերը, որքան Աստված, օրենքն ու բնական ծնողասիրության գութը ձեզ պարտավոր կդասեն: Հիշեցե՛ք Հիսուսի խոսքը. «Ինչ չափով որ չափում եք ձեր ծնողներին, նրանով պիտի չափվի ձեզ համար և ինչ որ ցանի մարդը, նույնն էլ կհնձի (Հմմտ. Մատթ. Է 2, Մարկ. Զ 24, Ղուկ. Զ 38, Գաղ. Զ 8): Սողոմոնի առակը խրատում է ձեզ, որ դուք ձեր հոր ու մոր օրհնությունը միաժամանակ ժառանգեք (Հմմտ. Առակ. Ա 8): Բավական չէ, որ միայն հայրն օրհնի, այլ նաև մայրը, քանի որ եթե մայրն անիծի, տան հիմքերը կխախտվեն:

Ժառանգեցե՛ք ուրեմն երկու բերանի օրհնությունը, որպեսզի ձեր կյանքն ու վախճանը միշտ բարի ու բարգավաճ լինի:

ԺԴ
ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՀՆ ՈՒ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Նրանք, որ ծնվում են աշխարհում, մեռնելով գնում են աշխարհից: Հայրերն ու մայրերը գնում են, զավակներն են նրանց փոխարինում: Բնական կարգն ու օրենքն այս է, թեպետ շատ անգամ մահվան տապարն առանց խտրության հատում է մատաղատունկերը ու թողնում հաստաբուն կաղնիները:

Ո՞վ են այդ հինավուրց կաղնիները, որոնք բարձրանում են ընտանեկան ծառաստանում ու իրենց համասփյուռ հովը տարածում իրենց շառավիղների վրա: Նրանք հայրերն ու մայրերն են, որոնց երբ իր տապարն առած՝ մահն է մոտենում, ծերունի նահապետն, այն տեսնելով, երբեք չի սոսկում այդ դաժան տեսիլքից, այլ գոտեպնդված՝ իր հայրական օրհնությունն է պատրաստվում տալ ընտանիքին ու ապա վերջին շունչը փչել:

Ինչպես տեսնում ենք Ծննդոց Գրքում, մի քանի նահապետներից աստվածապաշտ Աբրահամի մահվան մասին այսպես է պատմվում. «Մեռավ երջանիկ ծերության մեջ, զառամյալ, ալևորած տարիքում և գնաց միացավ իր նախնիներին» (Ծննդ. ԻԵ 8): Գրեթե բոլոր նահապետներն էլ, զառամյալ ծերությամբ ու բնական մահով էին մեռնում, ու դրա պատճառը նրանց անըստգյուտ կյանքն էր, ողջախոհ ու անարատ վարքը, պարզ ու սակավապետ սեղանը, հողագործ մշակության անխարդախ վաստակը և այլն, և ամենից ավելի Աստծու օրհնությունը, որ բարգավաճ լինեին իրենք:

Նահապետական կյանքում ծերերի օրհնությունը հայրական ու պապենական մի պարտականություն էր: Երբ դաշտային վրանի տակ նահապետի վերջին օրերն էին հասնում, նա ցանկանում էր վերջին ընթրիքը վայելել իր զավակների ձեռքից, և ավելին՝ անդրանիկից, ինչպես տեսնում ենք Իսահակ նահապետի վախճանը, որ կանչելով Եսավին՝ ասաց. «Որդյա՛կ, ահավասիկ, ես ծեր եմ ու պիտի մեռնեմ, դու առ քո նետաղեղը, գնա որսի, մի փափուկ որսիկ բեր ինձ, խորտիկ շինի, ուտեմ ու օրհնեմ քեզ» (Հմմտ. Ծննդ. ԻԷ 7): Բայց ինչպես ծեր նահապետի ցանկությունն որդիներին օրհնելն էր, այդպես էլ որդիների համար հույժ նախանձելի էր հոր օրհնությունը կանխապես ժառանգելը, ուստի ճարտար Հակոբն իր մոր խրատով փութաց ու թեև կրտսերն էր, հաջողեցրեց իբրև անդրանիկ ժառանգել Իսահակի օրհնությունը:

Իսկ Հակոբ նահապետի օրհնությունն իր որդիներին շատ նշանավոր է, որ տասներկու նահապետներին կանչելով, անդրանիկից սկսած մինչև կրտսեր որդին՝ օրհնում է ու այս օրհնության նյութն իրենց կյանքից առնում ու, ըստ այնմ, հարմարեցնում է իր խոսքերը, միաժամանակ իբրև մարգարե՝ նախապես գուշակում նրանց ապագա կյանքն ու վախճանը:

Բարի նահապետը, որ սուրբ ողջախոհության նախանձավոր էր, չի մոռանում անդրանիկ Ռուբենի ոճիրը, որ հանդգնել էր իր հոր անկողինը ելնել, ուստի այս ակնարկությունն է անում նրա համար. «Ջրի նման մի՛ եռա» (Ծննդ. ԽԹ 4), որով թերևս այս ակնարկությունն է անում, թե՝ նկուն ու անզոր լինես՝ իբրև սառած ջուր, չեռաս կյանքիդ մեջ, ինչպես նոր ու զորավոր գինին ամանի մեջ: Նույնպես չի մոռանում Շմավոն ու Ղևի եղբայրների ոխակալ վրեժխնդրությունը, որոնք իրենց քրոջ բռնաբարության համար խորամանկությամբ

սուր հանեցին ու Սյուքեմի բնակիչներին անխնա կոտորեցին: Սրա համար մինչև իր մահվան օրը բարկացող մարդասեր նահապետը զայրանում է ու իր օրհնության մեջ ասում. «Եղբայրներ Շմավոնն ու Ղևին անիրավություն գործեցին կամովին: Խորհրդին նրանց մասնակից չի լինի անձն իմ... Անիծյալ լինի ցասումը նրանց, քանզի հանդուգն էր, անիծվի նրանց ոխն ու մոլուցքը, քանզի սաստիկ էր» (Ծննդ. ԽԹ 5, 7): Կամենում եմ այս կարգի մեջ առաջ բերել Հուդայի օրհնությունը, որ շատ նշանավոր է. նա առյուծ է անվանում կորյունին ու ասում, թե՝ «քո ձեռքը թշնամիների թիկունքի վրա զորանա և այլն (Ծննդ. ԽԹ 8-9):

Այստեղ հասկանալ է պետք, թե այդ երջանիկ նահապետները, որքան որ բարի ու արժանավոր զավակների համար բարձր ու փառավոր օրհնություն էին տալիս, անեծք հիշելով՝ չար ու ստահակ որդիներին նույնիսկ մահվան պահին հանդիմանում էին, ու այդ հանդիմանությունը ևս, թափանցելով նրանց սրտերը, նահապետի մահից հետո օրհնություն էր դառնում, ուղղում ու զգաստության էր տանում, որովհետև բարի ու առաքինի հոր գերեզմանն ու հիշատակը հողի տակից էլ խոսում ու դաստիարակում է կենդանի զավակներին:

Օրհնության շնորհը ոչ միայն ժառանգ զավակներին է խրատում ու պահում, այլև դարից դար, սերնդեսերունդ հաստատ է պահում հայրենի տունն ու գերդաստանը: Այս մասին է վկայում առակախոս իմաստունը. «Հոր օրհնությունը հաստատում է որդու տունը, իսկ մոր անեծքը՝ հիմքից խախտում» (Սիրաք. Գ 11): Սողոմոնի այս վճռական խոսքն ակնարկում է, որ մոր անեծքն էլ նույն զորությունն ունի, ինչպես հորը: Բարի է, եթե զավակներն իրենց ծնողներից միատեսակ օրհնություն են ժառանգում: Մի օրինակ բերենք. եթե մի հայր իր մահվան օրը բարի տեսնի իր զավակներին ու արժանի համարի իր օրհնությանը, իսկ մահվանից հետո չարանան որդիները, և մայրը, որ դեռ կենդանի էր, անիծի նրանց, անշուշտ այս պարագայում վերջին անեծքն առաջին օրհնությունն իրավամբ կհերքի, որովհետև անեծքն ու օրհնությունն Աստծու արդարության ձեռքն է, որ առաքինի որդիների գլխին երկնքից ցող է թափում, իսկ անբարի ու չարաժառանգ զավակների գլխին՝ կարկուտ ու հարված:

Արժի նկատել այս. եթե ծնողները բնական գթով ու սիրով օրհնեն ապիրատ զավակներին, ես չեմ հավատա, որ այդպիսի օրհնությունը հաճոյական կթվա Երկնքի Հորը, որ թեպետ չարերի ու բարիների վրա իր մարդասիրության

անձրևը հավասար է թափվում, բայց երբեմն էլ իր արդար ցասումը գործի դնելով՝ քանդում է ամբարիշտ մարդկանց տունը, ինչպես քանդեց ու արյունով լվաց Աքաաբի ու Հեզաբելի տունն ու ավերակների մոխրով ծածկեց Թագավորին ու Թագուհուն: Արդարության դատավոր Աստված միշտ այդպես է դատում, իսկ ըստ Սողոմոնի դատավճռի, թե՝ «Տիրոջ անեծքն՝ անբարիշտների տանը, օրհնությունը՝ արդարների հարկին» (Առակ. Գ 33):

Ուրեմն, ո՜վ դուք ծնողներ, որ արժանացել եք հայր ու մայր վեհ անուններին, որ աշխարհում տուն ու ընտանիք եք կազմել, եթե կցանկանաք, որ ձեր վախճանից հետո ձեր տունը, ձեր գերդաստանը, ձեր ամբողջ ժառանգությունն ու ձեր գործը հավերժ մնա, ձեր անունն ու հիշատակն աշխարհում օրհնությամբ հիշվի, ստույգ ու ճշմարիտ օրհնության պատրաստեք ձեր զավակներին: Անհոգ զանցառությամբ մի՛ սպասեք՝ ձեր այս նվիրական պարտականությունը ձեր մահվան տագնապի օրը կատարելու, երբ անբարբառ են լինում մարդու շրթունքներն ու բերանը, այլ հենց խանձարուրից ու օրորոցից սկսեք ձեր օրհնության դասերը, այսինքն՝ ծնողական դաստիարակությունն ու խրատը, որ լի ու զեղուն օրհնություն են բերում ողջ տանն ու ընտանիքին:

Ուստի ավանդում եմ ձեզ անանց օրհնության այս կտակը: Դուք այնպես օրհնեցեք, որ նրանք երկնքի իմաստությունը ճանաչեն ու բարձր համարեն, չպարծենան անցավոր աշխարհի իմաստությամբ:

Օրհնեցե՛ք, որ նրանք հայրենատուր սուրբ կրոնը, հավատքը, սուրբ հայրերի ավանդությունն անարատ ու անեղծ պահեն, սիրեն Հայաստանյայց Եկեղեցին, չբաժանվեն Թադևոսի ու Լուսավորիչ Հոր հոտից ու փարախից: Օրհնեցե՛ք, որ նրանք Ավետարանը գրկեն և սովորեն նրա սիրո դասերը, սիրեն եղբորը, ընկերոջը, լինեն մարդասեր: Օրհնեցե՛ք, որ ազգը սիրեն, հայրենիքը սիրեն ու չմոռանան նրա հին, անշուքացած փառքն ու հիշատակը, հիշեն նրա կիսակործան տաճարները:

Օրհնեցե՛ք, դաստիարակեցե՛ք, որ նրանք ուսում սիրեն, գիտություն սիրեն, դպրոց սիրեն, գիրք սիրեն, առաջադիմությունը պատվեն:

Օրհնեցե՛ք և ուսուցանե՛ք, եթե քաղաքացի են, նոր աշխարհի այլևայլ արհեստերը սովորեն, անխարդախ լինեն վաճառելու և գնելու մեջ: Իսկ եթե շինական են, հող սիրեն, մաճ սիրեն, աշխատանք սիրեն, հայրենի նվիրական ու սեփական հողերից մի բուռ անգամ չզիջեն:

Ի վերջո, օրհնեցե՛ք, որ նրանք ամուսնասեր լինեն, տնաշեն ու տնարար լինեն, բարի ու ազնվական ընտանիք կազմեն, որով միայն հնարավոր կլինի, որ ազգային կյանքը բարվոքվի, բարձրանա նրա համբավն ու փառքը:

Հիմա մեզ մնում է, և խիստ արժի, որ դուրս ելնելով աշխարհիկ ընտանեկան կյանքից՝ նահապետական օրհնության հետ հիշել նաև այն սուրբ հայրերին, որ եկեղեցու որդիներին իբրև հոգևոր ծնող են համարվում, որոնց օրհնությունն առավել բարձր ու համատարած է ընդհանուր եկեղեցու բոլոր զավակների վրա:

Զգիտեմ՝ մեր Հայաստանյայց Եկեղեցու որդիներն առհասարակ ժառանգեցի՞ն մեր սուրբ հայրերի օրհնություն, և կամ նույն երանելի հայրերը թե՛ բնական մահով, թե՛ նահատակությամբ երբ գնացին աշխարհից, արդյոք օրհնեցի՞ն հայրենի աշխարհն ու այնպես հեռացան: Ո՛չ, պատմությունը վկայում է, որ այդ չնաշխարհիկ հայրերից ոմանք, որ Քրիստոսի հոտի անձնազիր հովիվներն էին, հույժ խռովեցին, շրջեցին իրենց դեմքը ապաշնորհ որդիներից ու վշտալի սրտով մտան գերեզման. սուրբ Գրիգորը Սեպուհ լեռան գլխին, անշուշտ, աղոթում ու օրհնում էր հային, բայց միաժամանակ լալիս էր այն ապիրատ որդիների համար, որ դավաճանեցին սուրբ Տրդատին. Արիստակեսը Ծոփաց աշխարհում մի հայրադրուժ իշխանի ձեռքով խողխողվեց, Հուսիկն ու Դանիելը նույնպես՝ հավատամերժ Տիրան թագավորի ձեռքով: Հապա մոռանա՞նք Ներսես Մեծին ու Սահակ Պարթևին, որոնցից մեկը թույնով լի բաժակն ինքնակամ խմեց ու դառնությամբ անիծեց այն ապերախտ գլխին, որի համար հույների կայսրությունից թագ էր բերել, իսկ մյուս սուրբը՝ Սահակը, նախարարների անխորհուրդ կամակորության ու մատնության համար մի՞թե մինչև գերեզմանի դուռը չողբաց ու չհառաչեց:

Ահա այսպես մեր պատվական սուրբ հայրերն աշխարհից գնացին: Թեև նրանք, Հիսուսի հեզությանը նմանվելով, իրենց հալածողների ու սպանողների դեմ նույն ձայնով աղոթեցին. «Հայր, ներիր սրանց...» (Ղուկ. ԻԳ 34), բայց առանց օրհնելու՝ հեռացան, որովհետև անխրատ ու անհնազանդ որդիները չկամեցան նրանց օրհնությունը ժառանգել, որով քանդվեց մեր տուն ու տեղը:

Եթե հավատում եք, հայի՛ որդիներ, թե Աստված այսպիսի դատաստան տեսավ ու դատեց, ուրեմն անցյալի մեղքը ներկայում քավելով՝ սթափվենք՝ միշտ ժառանգելու հավատարիմ

ու անձնադիր հայրերի ու հովիվների ճշմարիտ օրհնությունը, երբեք երախտամոռ չլինել նրանց, այլ ըստ Պողոսի խրատի՝ հարգել եկեղեցու ընտիր, վաստակավոր ու տքնող մշակներին, որոնց թիվն օրըստօրե միշտ պակասեց, ու հայ եկեղեցու հունձերն այսօր մնացին անմշակ: Երանի՜ թե աղաչող հավատացյալ որդիները չպակասեին, որով թերևս գթար Տերն ու լսեր նրանց աղաչանքը:

Այսքան համառոտ հիշատակությունը բավական է եկեղեցու հայրերի օրհնության մասին. այժմ դառնանք նույն ընտանեկան նահապետների օրհնությանն ու ավարտենք այս գլուխը՝ հորդորելով, որ ամեն ընտանիքի բարեկեցիկ զավակները թե՛ բնական պարտականությամբ, թե՛ Սուրբ Գրքի հոգետու խրատներով պարտավոր են իրենց ծնողների օրհնությունն արժանապես ժառանգել՝ հեռու ու անմասն մնալով այն բոլոր ապերախտություններից, որ ստահակ, անհնազանդ ու անժառանգ որդիները հատուցում են իրենց ծնողներին, որոնց կյանքն ու վախճանն աշխարհում դառն ու կարճատև են, և երբեք նրանք երկարակյաց չի լինում:

ԺԵ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՏԱԿ ՀԻՇԱՏԱԿ

Ընտանեկան կյանքում իրենց վերջին օրհնությունից հետո ծերունի նահապետները ևս մի վերջին անհրաժեշտ պարտականություն ունեն, այն է՝ կտակը, կյանքն ու հիշատակը, և ապրում են նրանք հազարավոր տարի և նույնիսկ գերեզմանում:

Կտակը հստակ նշանակում է այն սուրբ ավանդն ու հանձնարարությունը, որ իր կենդանության օրոք մարդը մի ուրիշ կտակատար անձի է ավանդում, որ այն իր մահից հետո աննենգ ու անվրեպ հավատարմությամբ կատարվի: Կտակարար անձը շատ անգամ էլ իր կտակն ինքն է կենդանության օրոք իր ձեռքով կատարում և կամ փոխում այն: Նա անբռնադատելի է այս իրավունքի մեջ, որովհետև կտակը միայն իր ազատ կամքից կախում ունի: Բայց ինչպես վկայում է Պողոս առաքյալը. «Մահվանից հետո կտակը հաստատուն է»

(Եբր. Թ 17), այն չի կարող խախտել կամ կամայականորեն փոփոխել աշխարհի թագավորների միասնական հրամանը:

Թե՛ Սուրբ Գրքի և թե՛ ազգային պատմության մեջ նայելով՝ տեսնում ենք, որ կտակը երկու կերպ է ավանդված՝ կա՛մ իբրև բարոյական պատվեր և կա՛մ նյութական նվեր: Նյութականի օրինակներ շատ ենք տեսնում մեր վաղեմի ու արդի հիշատակարաններում, որ բազմաթիվ աստվածապաշտ անձիք՝ թե՛ այրեր, թե՛ կանայք, իրենց սեփական կալվածքներից կամ հարստության գանձերից կտակելով, նվիրել են եկեղեցիների, վանքերի շինարարությանն ու հարատև պայծառությանը, որոնց տերն ու ժառանգորդը, առհասարակ, համարվում է ժողովուրդը: Եթե հետազոտենք մեր նախնիների ձեռագիր հիշատակարանները, բազմաթիվ վանքերի ու տաճարների արձանագրությունները, պիտի գտնենք, որ դրանց մեծ մասը կտակների շնորհիվ կառուցվել են առանձին-առանձին իշխանավոր ու հարուստ ընտանիքների ձեռքով: Ո՞վ չի հավատա, որ Անիի հազար ու մի եկեղեցիները կտակների ու հիշատակված օժանդակությամբ են կառուցվել, որոնց անունները դեռ նշմարվում են ավերակ ու կիսակործան տաճարների վրա. ոմանք, դա տեսնելով, զարմանում ու այսպես են մտածում, թե հայոց ճոխությունն ու երկրի գանձերը վանքերի ու հոյակապ տաճարների շինությունների համար են սպառվել:

Իսկ բարոյական կտակն ու պատվերը, որ խառն է լի օրհնությամբ ու դառն անեծքով, այդ ևս սքանչելի կերպով տեսնում ենք Սուրբ Գրքում:

Աբրահամ նահապետն, իր վախճանի մոտ կասկածելով, թե գուցե ինքը կանուխ մեռնի, ու Իսահակ որդին մոռանա հայրենի տան ազգակցությունն ու պանդուխտ երկրում օտարի հետ ամուսնանա, կանչում է իր հավատարիմ ծառային ու կտակ է պատվիրում, որ Իսահակ որդու համար քանանացիների երկրից ամուսին չընտրի, և ուխտով երդում է առնում նրանից, որ չդրժի այդ կտակը: Աբրահամից սովորած Իսահակը նույնպես նույն կտակով պատվիրում էր Հակոբին՝ քանանացիների երկրի աղջիկներից չառնի, այլ միայն իր մորական տան ազգակցությունից ընտրել իրեն ամուսին: Հովսեփ նահապետի կտակը շատ նշանավոր էր, որ ցանկությամբ խնդրում ու ասում էր. «Երբ Տեր Աստված այցելությամբ կհանի Իսրայելի տան ժողովրդին Եգիպտոսից, դուք հանեք և իմ ոսկորներն այն երկրից ու տարեք ամփոփեցեք իմ հայրերի չիրիմների ծոցը» (Ելից Ծ 25):

Նահապետների կտակից հետո առավել մեծ ու նշանավոր էր Մովսեսի կտակը, որ միայն Աստծու օրենքներն ու պատվերներն էին, և որ իր վախճանից առաջ նա կրկնելով ավանդում էր Հակոբի տանն ու ընտանիքին, ամբողջ Իսրայելի ժողովրդին: Երկնքից օրհնություն էր ցողում օրինապահ որդիների գլխին, և անեծք ու նզովք էր սպառնում նրանց, ովքեր ըմբոստանալով պատվիրանազանց կլինեին:

Իսկ մեր բարեգութ Հիսուսի կտակը լի էր ամենազեղուն օրհնությամբ, որ վերջին ընթրիքի իրիկունը ավանդում էր իր սիրելի խմբին ու բոլոր հավատացյալներին. նրա սուրբ կտակը սերն էր, որ միշտ կրկնելով՝ ավանդում էր, և կտակագիրն Ավետարանն էր:

Հիսուսն այս կտակագիրը թողեց ոչ թե մի ընտանիքի կամ ազգի համար, ինչպես Մովսեսը, այլ համայն եկեղեցու ընտանիքին ավանդեց իր հայրապատվեր կտակը, որ լի է երկնատուր օրհնությամբ, որովհետև նրա սուրբ ու անդրժելի կտակապատկերն իր ավանդած հավատքն է, ընկերասիրությունն է, համատարած խաղաղությունն է, կարեկից համբերությունն է, թողությունն ու ներողությունն է: Եթե մահկանացու մարդկանց կտակը մահից հետո այդքան հաստատուն է, ապա որքա՞ն հաստատուն է անմահ Աստվածորդու կտակը, որ խաչի արյունով և նոր հավիտենական ուխտով է կնքված:

Ուստի թե՛ Մովսեսը, թե՛ Հիսուսը, թե՛ առաքյալները և թե՛ եկեղեցու սուրբ հայրերը ինչ որ ավանդել են, եթե այն անեղծ ու հաստատուն չպահեն՝ եկեղեցու ընտանիքը պարտական կմնա:

Թողնենք այս բարոյական կտակը, որ մեր մասնավոր առարկայից բարձր է, դարձյալ խոսենք նյութականի մասին, որ աշխարհի բախտավոր ու հարուստ ընտանիքների համար մի անհրաժեշտ պարտականություն է:

Մարդը՝ թե՛ այր և թե՛ կին, երբ հիշի իր օրահաս վախճանն ու մտաբերի, թե ինքը մահկանացու է ու պիտի մեռնի և թողնի այս աշխարհը, ընտանիքը, սիրելիներին, գանձ, հարստություն ու շատ կալվածքներ, իմաստուն ու արդար տնտես է նա, եթե ցանկանա իր մահվանից հետո ևս ապրել: Եվ ինչպե՞ս կտակով ու բարի հիշատակով, այսինքն՝ իր սեփական հարստությունից բաժին հանի ազգին, բաժին հանի աղքատ ընտանիքներին՝ առանց երբեք զրկելու իր տունն ու ընտանիքը: Երջանիկ կլիներ ազգը, երջանիկ կլիներ մեր հայրենիքը, եթե ազգի բոլոր գանձատեր անձինք չմեռնեին առանց կտակի ու հիշատակի:

Սակայն շատ բուռն է մարդկանց մոլեգին ագահությունն ու մինչև վերջին շունչը կապում է մարդկանց սիրտն ու հոգին. նա կհամաձայնվի հոգին տալ, քան թե գանձն ու ստացվածքը. նա իր անգին հոգու փրկության համար երբեք չի ցանկանա փոքր-ինչ գանձ ծախսել, թեկուզ և հնար լիներ հոգին նորից վերադարձնել: Ուստի ագահ մարդու կտակն ու անհագ տենչն այն է, որ իր գանձն իր հետ գերեզման տանի ու թաղի: Եվ ճշմարիտ է սա, ապա թե ոչ, ի՞նչն է պատճառը, որ աշխարհի ագահներն իրենց գանձերը շատ անգամ անհատակ հողի տակ են թաղում, ուր նաև իրենց քարաժեռ սիրտն են թաղում, ինչպես սրտագետ Հիսուսն է վկայում. «Ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մատթ. Զ 21, Ղուկ. ԺԲ 34):

Ագահ մարդուց ոչ մի գանագանություն չունեն նաև այնպիսի մարդիկ, որ չափազանց ընտանեսեր լինելով՝ վաղվա ու ապագայի համար հեթանոսաբար են հոգում, իրենց ամեն ջանքն ու վաստակը միայն իրենց գերդաստանի համար են պատրաստում: Բնավ հոգ չէ նրանց համար հասարակական պարտականությունը կամ ազգի կարիքավոր ընտանիքը: Եկեղեցի, դպրոց, կտակ ու հիշատակ՝ այս ամենը նրանց ու նրանց նմանների մտքից հանված է: Նրանք նախախնամությանը չեն հավատում և ուրանում են Երկնային Հոր խնամքը, որ ճնճղուկի բնի ընտանիքը չի մոռանում: Այնպիսիները, որ թեպետ իրենց ժլատության ձեռքը դեռ մինչև գերեզմանն կծկում են, բայց նրանց պատժելու համար ժառանգորդ ընտանիքը ամենայն շռայլությամբ բացում է իր ձեռքն ու ողջ հարստության գանձն անխնա վատնում, որով և ճոխ մեծատան ընտանիքը կարիքավոր մուրացիկ է դառնում. անցյալից նման բազմաթիվ օրինակներն է պատմությունն ավանդում, ներկայում մենք մեր աչքով ենք տեսնում:

Կտակարարության պարտականությունը միայն մեծատուն ընտանիքների համար չէ. ազգի բոլոր անհատ անձինք առանձին իրենց կտակն ունեն: Արծաթով և անարծաթ կղերներից մեկը թող իր արծաթը կտակի, մյուսն՝ իր գիրքն ու խրատը: Թող կտակեն նրանք եկեղեցու որդիներին, որ պինդ պահեն հայրենատուր հավատքն ու հայրերի ավանդությունները: Թող կտակեն նրանք հայ գաղթական զավակներին, որ, ուր լինեն, Արարատն ու Էջմիածնի Կաթողիկեն չմոռանան: Թող կտակեն նրանք սուրբ Ղևոնդյանց ու Վարդանանց խաչն ու անձնվիրությունը: Թող քաղաքացին իր ընտանիքին արհեստ, գործ, առևտուր, տնտեսություն, խնայողություն ու բարոյական կյանք կտակի:

Իսկ չինական աշխատամաշ ծերունիներն

այս կտակը թող ավանդեն ընտանիքներին, որ սիրեն հին նահապետական պարզ կյանքը, սիրեն երկրագործությունը, հողն ու մաճը, երբեք չվաճառեն իրենց կյանքի ու հարստության մշտաբուխ աղբյուրը, այսինքն՝ հայրենի երկիրն ու գետինը:

Իսկ դուք ի՞նչ պիտի կտակեք, հայրենիքի կարոտ խեղճ պանդո՛ւխտ հայեր. երբ օտարության մեջ կհասնի ձեր վերջը, օ՜, մահ ու գերեզման կտակեցե՛ք ձեր զավակներին ու եղբայրներին: Այո՛, նզովքով կտակեցե՛ք, որ նրանք հայրենի հողում ու երկրում տքնեն ու աշխատեն. երբ մեռնեն, թող իրենց գերեզմանն իրենց արտիկը լինի, թող այստեղ չգան, ուր բեռնակիր եք լինում՝ ձեր ազատ եղն ու մաճը թողնելով, և շատ անգամ բեռան ծանրությունից ձեր ոսկորները ճարճատում են ու ձեր հուժկու բազուկները թուլանում, երեսնիվայր թավալվում եք փողոցի սալահատակի վրա, ձեզ բարձրացնում ու թաղում են անհիշատակ շիրիմների մեջ, ուր չեն եղել ու չկան ընտանեկան գերեզման, ձեր պապերի ու տատերի խաչքարերն ու ոսկորները:

Իսկ դո՛ւ՝ հեգ Արծիվդ Վասպուրական, քո կտակն ի՞նչ է, եթե մահը քեզ պանդխտության մեջ նետահարի, կասեմ. «Օրհնյալ լինի Տիրոջ կամքը», ու կավանդեմ կտակս իմ սիրելի, հավատարիմ ու մտերիմ ազգին, որ ինձ տանեն և հանձնեն Վարագա խաչքարերի տակ գտնվող հողին, ուր շիրիմս ու ոսկորներս թերևս խառնվեն Եղիշեի նման սուրբ հայրերի շիրիմներին, և ես՝ մեղապարտ մեռյալս, արժանի լինեմ հարության՝ ննջելով Քրիստոսի հավատով ու հույսով:

ԺԶ
ՏԱՆ ԵՐԵՑՆ ՈՒ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես Ամենայն Հայոց Հայրապետը, որպես ողջ հայության ծայրագույն հովիվ, տնտես է բոլորի հայ գերդաստաններից յուրաքանչյուրին, այդպես էլ տաներեց քահանաները ընտանեկան և առտնին եկեղեցու փոքրիկ հոտի փոքրիկ հովիվներն են, որոնց էլ միայն հանձնված են ընտանեկան հոգևոր պետքերը հոգալ ու սպասավորել: Թեպետ իր կղերական եպիսկոպոսի իշխանության տակ ստրուկ է համարվում ու նույնիսկ ժողովրդի մեջ ըստ արժանավույն մեծարված չէ, մանավանդ մեր բարեկարգ ժամանակի մեջ, որում եկեղեցու վաղեմի օրենքներն ու կանոնական վճիռներն այլափոխված են: Բայց տաներեց քահանայի հովվական պարտականություններն ու կոչումը շատ մեծ, շատ նվիրական ու շատ անհրա-

ժեշտ հոգևոր գործունեության ծառայություն են, որովհետև նրա սեփական պարտքն է ընտանիքի նորածին երեխաներին սուրբ եկեղեցու մկրտարանի ջրով մաքրել ու որդեգրել Աստծուն: Նրա պարտականությունն է ամուսնության սուրբ պսակ դնել, ընտանեկան գաղտնի ու հայտնի վերքերը դարմանելով բժշկել: Նրա պարտականությունն է սուրբ ու ջերմեռանդ աղոթքով մահվան ծանր ստվերի տակ հեծող հիվանդին կազդուրել ու հավատով զորացնել հոգին: Նրա պարտականությունն է ննջեցյալին հողին հանձնել և Խաչով ու Ավետարանով կնքել նրա գերեզմանը: Նրա պարտականությունն է սգավոր ընտանիքի սուգը չափավորել, խրատել, որ հեթանոսաբար չողբան՝ հանդերձյալ կյանքի հույս ու հավատ չունենալով: Նրա մեծ պարտականությունն է աղքատ ու չքավոր ընտանիքներին ոչ միայն սոսկ մխիթարական խոսքերով սփոփել, այլ իբրև ճշմարիտ հայր՝ նաև նյութապես հոգալ նրանց պետքերն ու կարիքները, հարուստ ու ողորմած ընտանիքներից հայթայթելով՝ կերակրել թշվառ տնանկի կարիքավոր զավակներին:

Նրա մեծ ու վեհագույն պարտականությունն է երկրում, իբրև երկրային հայր, հոգ տանել բոլոր ծխական ընտանիքների մասին ու

մանավանդ նրանց պատահած թշվառության մեջ՝ Հիսուսի նկարագրած գորովալի գթության տիպարը լիովին անձնավորել. բանտ գնալ՝ բանտավորի կապանքը դյուրացնելու, հիվանդատես գնալ՝ սուրբ Պողոսի թաշկինակով նրա քրտինքը սրբելու, դեղ ու ճար գտնելու, թե քաղցած է՝ հաց տալու, թե ծարավ է՝ ջուր տալու, թե մերկ է՝ հանդերձ և այլն: Եթե այսպես վարվի տաներեց հովիվը, եթե իր այս պարտականությունները խղճմտությամբ կատարի, հիրավի, այնժամ իսկապես Աստծու քահանա կկոչվի՝ լինելով կատարյալ, ինչպես երկրային հայրը:

Տակավին մի մեծ, ամենից առավել պարտականություն էլ ունի տաներեց հովիվը, որը չպետք է մոռանալ, և ո՞րն է. տնային հոգևոր դաստիարակությունը, որ պետք է զուգահեռ ընթանա ծնողների դաստիարակության հետ: Ես այնպես եմ կարծում, որ կրոնի ու հոգևոր դաստիարակության պարտականությունը դպրոցի վարժապետինը չէ, դա տաներեց քահանայի բաժինն է, որ իբրև տնային եկեղեցու սպասավոր՝ պարտավոր է ու ընտանեկան սեղանին ինքը պիտի բաշխի ու մատակարարի հոգևոր դաստիարակության հացը, և այդ հացը միմիայն Ավետարանն է, ամբողջ Սուրբ

Գիրքը, որ Կենաց խոսքն է, ու նաև վարդապետների դյուրալուր խրատները, որոնք առհասարակ Սուրբ Գրքի մտքերի բացատրությունն են պարզապես:

Ճիշտն ասած՝ ընտանեկան հոգևոր վիճակն ու կյանքն այն ժամանակ են եղծվում, երբ տաներեց քահանան տգետ է ու անուս, որ իր ծառայության համար բավական է համարում Սաղմոսը, Շարականն ու Մաշտոցը, որ միայն եկեղեցու խորհուրդներն ու ծխական կարգերը կատարելով՝ քահանայության բարձր պաշտոնի մյուս պարտականություններն կարևոր չի համարում: Տաներեց քահանայի տգիտությունը շատ մեղադրելի է. թերևս այդ մեղադրանքը փոքրինչ թեթևանար, եթե բարի ու անբասիր վարքով ու գործնական ընտիր օրինակով քողարկվելով՝ տգետ քահանան ծածկեր իր տգիտությունն ու խոսքի փոխարեն միայն օրինակը քարոզելով՝ տգիտությամբ այնքան վնասակար չէր լինի ընտանեկան կյանքին: Բայց երբ գիտուն թե տգետ տաներեցը եղծվում է իր վարքի ու պաշտոնի մեջ, երբ բարի օրինակի փոխարեն գայթակղության չար օրինակ է տալիս, այնուհետև բարի ու աստվածավախ ընտանիքների համար հոգեպես մեծ վտանգ է, ու եթե չգիտեն ուրիշ մի արժանավոր հովվի, ստիպված են

առանց քահանայի մնալ, Աստծու հովվությունը խնդրել:

Սակայն արժանավոր ու անարժան պաշտոնյաների մեջ պետք է ընտրություն անել: Երբ այդ իրավունքն ու ազատությունն ընտանիքի ձեռքն է, թող մտածեն և նոր ընտրեն տաներեց քահանային, և եթե գտնեն այդ արժանավոր ու պատվական պաշտոնյային, պետք է նորից պատվի արժանացնեն, հատկապես որի համար իսկ պատվիրում է Առաքյալը:

Եթե ընտանիքի իրավունքն է տաներեց քահանայից պահանջել այն, ինչ որ քահանայության պաշտոնի ու կարգի վայելուչ պարտքն է, նույն տաներեց քահանայի իրավունքն է պահանջել իր ծառայության ու հոգևոր աշխատանքի վարձը: Տերն ասում է, թե՝ «Մշակն արժանի է իր վարձին» (Ա Տիմ. Ե 18), և ո՞վ կարող է ժխտել, թե դա իրավունք չէ: Առաքյալը հաստատում է այդ իրավունքը. «Ո՞վ երբևէ զինվորություն կանի իր ծախսերով» (Ա Կորնթ. Թ 7), և ուրիշ խոսքով դարձյալ նույն բանն է կրկնում. «Նրանք, որ սեղանի սպասավորներն են, սեղանից էլ վայելում են» (Ա Կորնթ. Թ 13):

Արդ, ընտանեկան սեղանի պաշտոնյան տաներեցն է ու պետք է, որ սեղանի հացից լիապես կերակրվի: Իսկ եթե զրկվի, անհատուցում ու

անվարձ մնա նրա հոգևոր աշխատանքը, նա, հոգոց հանելով, կկատարի իր ծառայությունն, իսկ ընտանեկան փարախի փոքրիկ հոտը պարտական կմնա իր հովվին, փոխանակ պարտքի դիմաց՝ կաթից կաթ ու բրդից բուրդ վճարեր: Եվ այնժամ տաներեց քահանայի վարձը կտրող ընտանիքը մի՞թե իրավունք ունի տրտնջալ ու միշտ գանգատվել, թե մեզ հովվելու ու մեր հոգևոր պետքերը հոգալու բարի հովիվ ու արժանավոր պաշտոնյա չունենք:

Բայց դուք, ո՛վ ժողովուրդ ու հա՛յ ընտանիքներ, մի՛ բարկացեք, որ ասում եմ՝ ձեր տրտունջն անարդար է: Ժողովրդի ընտիր որդիներից ո՞վ հանձն կառնի քեզ համար հովիվ ու տաներեց լինել, երբ դու արժանավորի ու անարժանի մեջ ընտրություն չունես: Դու Ավետարանի ազատ զինվորին ու եկեղեցու պատվարժան պաշտոնյային չքավորության լծի տակ ճնշել, ստրկացրել ես ու դեռ սպասում ես, որ նրանք վեհանձն ու ազնվական կերպով շարժվեն. ձրի շնորհը ձրի տան, չագահանան, անաչառ լինեն, ճշմարտախոս լինեն, սուրբ լինեն, բարի վարքով փայլեն, բարի օրինակ հանդիսանան, օրենքի նախանձավորը լինեն, թե հանցապարտ լինես՝ քեզ կշտամբեն, թե չուղղվես՝ հեթանոս համարեն, թե հանդգնես Թեոդոս

կայսեր նման ձեռքդ արյունով լի եկեղեցու գավիթը մտնես, իբրև Ամենակալի ահարկու հրեշտակ՝ Ամբրոսիոս քաջ հովվի պես քո դեմ կանգնեն ու եկեղեցու գավթից քեզ արտաքսելով՝ մերժեն:

Ահավասիկ իմ դատաստանն այս է: Ես գիտեմ՝ դուք չեք հավանի, կասեք, թե այդ խստություն է, հավատաքննություն է, անցավ այն դարը, պետք է, որ մեր տաներեց քահանաները հոգևոր կատարելությամբ հանդերձ քաղաքակիրթ ու քաղաքավարի լինեն, ճանաչեն ժամանակն ու ժամանակի պահանջները, բարեկամ լինեն առաջադիմությանը և նույնը համոզեն ու հորդորեն մեր ընտանիքներին:

Ուրեմն, ըստ ձեր կարծիքի, եթե ընտանեկան կյանքի շահն ու կարիքը այդպիսի հոգևոր ժիր մշակ է պահանջում իր արտի ու անդաստանի համար, ապա այլևս ինչո՞ւ եք վարանում, ինչո՞ւ եք երերում, ճանաչեցե՛ք, որոշեցե՛ք և բարի ու առաքինի ընտանիքներից ընտրեցե՛ք այն արժանավոր անձին: Քահանայացուն երկնքի հրեշտակներից չէ, մարդկային ընտանեկան սեռից է, և ընտանիքն է ծնում նրան: Ձեր իրավունքը ձեր ձեռքում է, լավ անձանց ընտրեցե՛ք ու ապա առաջարկեցե՛ք եպիսկոպոսին, թող ձեռքը դնի ու օրհնի ձեր քահանային:

Բայց երբ դուք պիտանի ու պատվավոր, ուսյալ ու արժանավոր անձանց թողնում, անպատիվ, տգետ ու անարժաններին եք առաջ տանում, ընտրում ու վկայում եք հենց եպիսկոպոսի ու եկեղեցու առաջ, եթե ճիշտ կերպով հարցաքննություն է լինում, ու ժողովն ու եպիսկոպոսը նրանց ձեռնադրության արժանի չեն համարում, ես գիտեմ ու տեսել եմ, թե որքան եք խստանում ու կամակոր համառությամբ գործի դնելով ստահակ միջոցներ՝ վերջապես անարժան անձին քահանայության պատվին եք արժանացնում: Եվ այնուհետև, երբ մտաբերելով զգում եք, թե սխալվել եք, զղջում եք, տրտնջում ու սկսում եք ձեր ընտրած ու հավանած կղերին դատել ու բամբասել: Եվ շատ անգամ էլ, ոմանց անարժանությունն առիթ համարելով, անարգելով, ոտնահարելով, վատաբանելով՝ աշխարհի առաջ ծաղրուծանակի եք ենթարկում ամբողջ եկեղեցիական դասին: Զգիտեմ՝ կարծում ու հավատո՞ւմ էիք, թե այդպիսով կուղղեք նրանց, որոնց անուղղությունը քահանայությունից առաջ էր բնավորված, և դուք դա հաճախ էիք տեսել. փորձը ձեր աչքի առաջ էր, ու նրանց դուք քաջ գիտեիք ու ճանաչում էիք:

Բայց թույլ տվեք, որ անաչառորեն խոսեմ: Մի՞թե դուք, իբրև թե կարեկցելով, մարդասիրության պատրվակով ձեր բարեկամներին հաց ու գործ ճարելու համար չաշխատեցիք իրենց քահանա ձեռնադրել տալու, իսկ հետո, իբրև մեծ վարձ ու առաքինություն համարելով, պարծենալով՝ խոսում եք. «Խեղճի ընտանիքը թշվառությունից ազատեցիք» և այլն: Այդպե՞ս է, մի ընտանիք իր թշվառ վիճակից ազատելու համար ուրիշ ծխական ընտանիքներ թշվառացրիք հոգեպես: Զգիտեմ՝ եկեղեցու գերագույն դատավորի առաջ ո՞րն է առավել դատապարտության արժանի, եպիսկոպո՞սը, որ աչառեց ու ձեռնադրեց, թե՞ ժողովուրդը, որ նրան ընտրեց ու քահանա դարձրեց:

Այժմ մի կողմ թողնեմ այս մասը՝ մտադիր լինելով այլ տեղում ավելի ընդարձակ խոսել, և ժամանակն իսկ այդ է պահանջում, քանի որ երկու կողմից էլ՝ կղերի ու ժողովրդի, շատ անարդար տրտունջներ են բարձրանում, որոնք աչքի տեսածով դատելով՝ առանց դատաստանի ու քննության բամբասում են իրարից:

Իսկ մենք, որ նույն կղերների դասի նվաստն ու հետինն ենք, նախ հորդորում ենք բոլոր տաներեց քահանաներին, որ ճանաչեն իրենց սուրբ պարտականությունները, հիշեն, որ պատասխանատու են նրա առաջ, որ սպառնում ու հաշիվ է պահանջում հովիվներից՝ թե՛ մեծ, թե՛ փոքր, և տաներեցն էլ իր տան հաշիվը պիտի տա:

Նաև հորդորում եմ այն բոլոր հայ ընտանիքներին, որոնք եթե խղճի մտոք գիտեն, թե հոգևոր ու արժանավոր պաշտոնյան անհրաժեշտություն է, ուրեմն աչառելով թո՛ղ անընտրող չլինեն, թո՛ղ խոտանն ու անպիտանը բաց թողնեն, ընտրեն ու իրենց բարի որդիներին ընծայեն Աստծու եկեղեցուն՝ արդար Աբելի պես արդարապես որոշելով Աստծու բաժինը, և ոչ թե ժլատ ու խնայող Կայենի պես Աստծուն բաժին հանեն անարգն ու անպետքը:

Արդ, ո՛վ հայ ընտանիքներ, ճառս այս խոսքով ավարտեմ. եթե տաներեց քահանան ձերն է, ձեզ համար է ու ձեր հոգևոր մշակն է, ձեր բարին դուք ինքներդ ճանաչեցե՛ք, ձեր մշակին ընտրելիս արժանավորին ընտրեցե՛ք, ուսյալին ընտրեցե՛ք, հավատարիմին ընտրեցե՛ք, և եթե տակավին ձեր մեջ կա՝ հրեշտակակրոնին ընտրեցե՛ք, և քանի որ ընտրության այս իրավունքը ձեր ձեռքում է, դուք այսօր ու հավիտյան իրավունք չունեք գանգատվելու:

ԺԷ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԿԱՌԱՆՔՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանրապես ընտանեկան պատկառանքն ու ազատությունը՝ երկուսն էլ մարդու համար բնությունից տրված ազատ կամքի ու բնական զգացման օժիտ են, միայն թե մարդը պարտավոր է դրանք օրենքով վարել և ոչ թե ծայրահեղ ազատավար մոլությամբ կամ նախապաշարյալ հնությամբ:

Մեր հին ընտանեկան կյանքի սաստիկ պատկառանքն ու ամոթխածությունը, որ կնոջ գլուխն ու երեսը թանձր քողով էր ծածկում ու նրան փակում տանն ու վրանի տակ, և նորահարսը պարտավոր էր յոթնամյա լռություն պահպանել իբրև պահք, անշուշտ արդի աշխարհում շատ պարսավելի վարմունք է:

Իսկ հին աշխարհի նահապետներից մեր հայրենիքում դեռ շատ կան, նրանք դատապար-

տում են աշխարհի ընտանեկան կյանքի ծայրահեղ ազատությունը, որ իսպառ բարձրացնում է պատկառանքի քողն ու շուքը, կնոջն ազատ թողնում ընտանեկան ասպարեզում՝ նույնիսկ իր հարսանիքի օրը լեզուն բացի, խոսի, պարի, իբրև հարսնավոր՝ զվարճանա ու նրանց հետ խնջույքի սեղանին հրճվի ու երբեմն էլ ծիծաղի, որովհետև, ըստ Պլատոնի սահմանումի, մի՞թե կինն էլ ծիծաղող մարդ չէ:

Ճիշտն ասած՝ երկու աշխարհի ծայրահեղ վարմունքներն էլ ուղիղ բանականությամբ ու բարոյական օրենքով չափազանցություն են համարվում: Ափսոս, որ դժվարագույնն այս աշխարհում միջին ու ուղիղ ճանապարհով քայլելն է: Մարդիկ սովորել են չափազանցել ու իրենց կրքերից դրդվելով՝ շեղվում են միշտ աջ կամ ձախ: Միջահասահման ուղիղ ճանապարհի վրա խիստ սակավ մարդիկ են հաջողություն գտնում. նրանք, համեստ ընտանեկան կյանքի ուղղությունը պահելով, չեն շեղվում ու միշտ հետևում են բարոյական օրենքին ու բնական խղճի գիտակցությանը, որոնք լույս են ու մարդուն միշտ դեպի լույսն ու ճշմարիտն են առաջնորդում:

Թողնենք հին ու նոր աշխարհի ծայրահեղություններն՝ ստույգ խոստովանելով, որ ամոթի զգացումն ու պատկառանքը մարդու ընտանեկան կյանքի սեփական վայելուչ զարդն ու պատիվն են: Այն ընտանիքը, որ ամենայն համեստությամբ հագել է այս չքնաղ զարդերը, երկնքի ու աշխարհի առաջ միշտ պատկառելի է հանդիսանում:

Ընտանեկան պատկառանքն ամենայն մեծարանքով նախ պետք է հարգվի ու պահվի նույն ընտանեկան շրջանում, ուր բարձրաթոռ բազմում են ծերունի նահապետն ու մայր տիկինը, որոնց պարտավոր են պատվել ու մեծարել և որոնցից պետք է պատկառեն բոլոր զավակները, հարսները, թոռները, առհասարակ, ողջ գերդաստանը:

Պետք է իմանալ նաև, որ պատկառանքը միայն փոքրերի պարտականությունը չէ, նույնիսկ մեծերն էլ պարտավոր են զգուշավոր պատկառանքով վարվել փոքրերի հետ, որովհետև երբ մեծերը պատկառանքը թողնում են, իզուր է պահանջել, որ փոքրերն ամաչեն: Եվ եթե մեծերը ջանան ուղղել նրանց, նրանք քաջ գիտեն դարձյալ խեչափառի առակը մեջ բերել՝ ցույց տալով, թե մեծերն իրավունք չունեն հանդիմանալու, քանի որ իրենց միակողմանի քայլերով փոքրերին օրինակ են ծառայում, երեխաների ներկայությունը բանի տեղ

չղնելով՝ վարվում են անզգույշ, խոսում են ան-պատկառորեն, քայլում են ծուռ, և զարմանա-լին այն է, որ երբեմն էլ նույնիսկ զայրանում են, եթե փոքրերն իրենց նման են շարժվում ու գործում:

Հիրավի, ընտանեվարության մեջ, եթե մաս-նավորապես թվենք, շատ անպատշաճ վարմունք-ներ են լինում, բայց ամենից ավելի տպավորիչն ու թունավորիչն անպատկառ պահվածքն է ան-մեղ երեխաների առաջ: Նրանք խիստ արագ են այն ընդօրինակում. թող հոռի ու չար լինի, ոչինչ, փույթ չէ, որովհետև նրանք միամիտ են ու տեսնելով հավատում են՝ մեծերն ինչ գոր-ծում են, բարի ու անվնաս է:

Տղամարդիկ, որ առավել ազատ վարվելա-կերպ ունեն թե՛ ընտանեկան հարկի տակ, թե՛ դրսում, ամոթի զգացումը ավելի շատ կանանց սեռին են վերագրում, որի շատ օրինակներ տեսնում ենք նահապետական կյանքում. Աբ-րահամի վրանի տակ երբ երեք հրեշտակները հյուր են գալիս, Սառան, որ պառավ ու մեծ տիկին էր նահապետի տանը, պատկառում է տեսնվել հյուրերի հետ, բայց խորանի ետևում պահվելով՝ ականջ է դնում, երբ հրեշտակներն, ավետիս տալով, խոսում են ծնվելիք զավակի մասին: Նույնպես և Ռեբեկան, մինչ բացերես, ուղտի վրա նստած, Խառանի երկրից Աբրա-համի տուն էր գնում, հանկարծ տեսնում է իր Իսահակ փեսացուին, որ դաշտում զբոսանքի էր ելել. իսկույն ուղտից վար իջնելով՝ քողա-վորում է երեսը՝ պատվելով ու մեծարելով իր նորատես ամուսնուն:

Պատկառանքի այս հին քողը գրեթե չորս հազար տարուց ի վեր դեռ մեծ խնամքով պա-հում են մեր հայ հարսները, այնինչ գաղթական հայ ընտանեկան կյանքի նոր ազատությունը ջանում է այն վերացնել, ինչպես որ արդեն մի կողմ է թողել պատկառանքի շատ ձևեր, որոնք հայկական հնության ու կյանքի մի-մի հատկա-նիշ էին:

Բայց հին աշխարհի ընտանեկան խիստ պատկառանքի դեռևս տիրող այս վաղեմի սո-վորությունը, որն ինչպես գրեցի, կնոջն՝ իբրև մի խուլ ու համր էակի, ճնշում է անխոս լռութ-յան մեջ, նոր քաղաքակիրթ աշխարհում ո՛չ ընտանեկան առաքինություն է համարվում և ո՛չ ազգային գովելի հատկություն, որովհետև աշխարհի ու ազգերի նոր փոփոխությունների, գիտության ու ազատության հետ, անշուշտ, բնական է, որ ընտանեկան կյանքն էլ իր հին վիճակից փոխվի, և այս հեղափոխության մեջ տղամարդիկ, իրենց կանանց զրկանքից ազա-

տելով, նրանց էլ կրթության ու դաստիարակության բաժին տվեցին: Առաջին անգամ, երբ կինն «այբ» գիրն արտասանեց, ինքնին լուծեց իր համբությունը: Կինը կարդաց ու ճանաչեց իր իրավունքը, բողոքեց ու հռչակեց աշխարհի առաջ, թե ինքն էլ իր ընտանիքի մայրն է, պետք է խոսի և տղամարդկանց շրջանում հավասար աթոռ ունենա: Կինը, եթե իր ամուսնու ազատ ու ճշմարիտ կենակիցն է, արժի, որ աշխարհի կյանքը ճանաչի, մարդկային հասարակության հետ մտերմանա, խորհել իմանա, մտածել սովորի, փոքրիշատե վերահասու լինի այն ամենին, ինչ որ մտավոր ու բանական մարդու բնական ու ազատ իրավունքն է պահանջում:

Սակայն մեր դարի պատկառասեր ու պարկեշտ նահապետներն ու մամիկները, երբ նոր աշխարհի ասպարեզ են մտնում, անհնար է, որ չգայթակղվեն չարաչար ու երբեմն էլ բարկանալով, գայրանալով՝ չտրտնջան. թե՝ «Վա՜յ մեզ, ի՞նչ ժամանակի հասանք, ամոթն ու պատկառանքն աշխարհից վերացան, կինն ընտանեկան լռարանից[1] դուրս եկավ, լեզուն բացեց, ճարտասան դարձավ, քողն ու լաչակը գցեց ու քողի փոխարեն հյուսկեն վարդածաղիկը վարսակալ դրեց, հրապարակ ելավ ու հասարակության մեջ

[1] Այսինքն՝ ձայնազուրկ վիճակից:

մտավ, մեզ հավասար պատիվ ստացավ, նա համարձակ խոսում է, համարձակ վիճում, դատում ու պատասխանում, և այլն: Մի խոսքով՝ անմռունչ կինը խոսուն բանադատ դարձավ, կարդալ, գրել սովորելով, լեզվագետ լինելով՝ նա ճգնում է մեզ հետ խորհրդակից լինել, աշխարհ կառավարել, օրենք տալ, սահմանադրություն գոչել: Թերևս մի օր ավելի ևս առաջ գնա ու մեզ հավասար քվե տալու իրավունք խնդրի, թողնի ընտանեկան ամեն հոգս ու կյանք, թողնի ամուսնական սերը»: Ավա՜ղ, այն ժամանակին, երբ աշխարհի կարգն ու օրենքը պետք է խանգարվեն, յոթ հազար տարվա վաղեմի ընտանեկան կառույցը քանդվի ու կնոջ այս անպատշաճ առաջադիմությունը մղի իրենց ծայրահեղ ազատության, այնուհետև ո՞վ կարող է զսպել իրենց. աշխարհի բոլոր տերությունները, եթե միաբանվելով դաշնակցեն, մի՞թե կարող են թումբ քաշել նրանց զորության ու արշավանքի դեմ: Ո՞վ է տարակուսում, թե այսպես անկարգ կլինի ապագան, որի ստույգ նշանները ներկան այժմ իսկ ցույց է տալիս, ու մենք հավատում ենք Զորաբաբելի մեծ վկայությանը, թե կինը զորավոր է ու կտիրի (Ա Եզր. Դ 13), իսկ եթե կինը մինչ ուսում ունենալը զորեղ էր, որքա՞ն առավել պիտի զորանա, երբ ուսման ու ազատության զենքով

զինվորվի:

Զգիտեմ՝ կլսե՞ս, խոհե՛մ ընթերցող, մեր դարի ծեր նահապետների այս նախանձելի պատասխանը, կընդունե՞ս, որ այն շատ հարցերում իր ստույգությունն ունի: Մեր կյանքի ապագան միշտ ներկայից է սկսվում, ու ապագայում, որ ներկայից է ծայր առնում, ծերերի մարգարեությունը վաղ թե ուշ պիտի կատարվի: Մի բան կա միայն, որ այս ճախորդ մարգարեության երազը դեպի բարին է ուղղվում, և այդ բանը, որ հազար անգամ կրկնել ու դարձյալ կրկնում եմ, կանանց սեռի ճիշտ ու պատշաճ դաստիարակությունն է:

Ամբողջ աշխարհն այսպես է դատում. երբ նոր ազատության իրավունքը կանանց գլխից վերցրեց պատկառանքի ճնշող քողը, պետք է նրա ամոթխած ճակատը քողավորի ճշմարիտ ու պայծառ դաստիարակությամբ, և եթե հին մթության քողն ստվեր էր գցում, թող լույսի քողով կինն իր աչքը բացի ու տեսնի աշխարհի գործերը: Առանց այս պատսպարող քողի՝ կնոջ ծայրահեղ անդաստիարակ ազատությունն իրեն դեպի խավար է տանում, և երբ կնոջ ոտքը սայթաքի, ողջ ընտանեկան կյանքն իր հետ կկործանի: Այո՛, ուղղել է պետք կնոջ ընթացքը, որ այդ վտանգավոր խորխորատից

ետ պահի: Անհրաժեշտ է նրա միտքն ու հոգին մշակել և ապա թողնել ազատ, որպեսզի զորանա կինն ու իր թույլ ոտքով կարողանա ազատության մեջ անսայթաք ու անխոտոր քայլել, և ճշմարիտ դաստիարակության մայրեր լինելով՝ նոր ընտանիք, նոր կյանք կազմեն հայ ժողովրդի համար: Երջանիկ օրեր կլինեն այն օրերը, երբ հայ տիկնայք ու կանայք հին պատկառանքի շնորհի հետ նոր դաստիարակության լույսով էլ փայլեն և այնժամ միայն իսկապես կարող են նմանվել Եվրոպայի կրթված ու խելացի կանանց, ապա թե ոչ սոսկ արտաքին կեղծ երևույթով, քաղաքավարի շարժման կերպերով, պերճ հագուստների նոր-նոր ձևերով, առանց մայրենի լեզվի մի քանի ֆրանսերեն բառեր ասելով, հայի հին պարը մոռանալով, նոր պար խաղալով, մեր հայրենի կամ մայրենի անուշ երգերը թողնելով ու օտար եղանակներ նվագելով՝ հայ ընտանեկան կյանքը դեպի լավագույնը չի փոխվի, այլ ավելի կվատթարանա՝ հին ու նոր զեղծումներն իրար խառնելով, որով հետին ազատությունը թերևս ավելի չար լինի, քան առաջինը, և այնժամ իրավունք չունե՞ն պատկառասեր ընտանիքները նզովել նոր աշխարհի ծայրահեղ ազատությունը ու դարձյալ բարվոք համարեն կնոջը հասարակական

հրապարակից հանել և այնտեղից տանել, հին նահապետական վրանի տակ փակել ու թանձր քողով ծածկել նրա գլուխը, որ այլևս արև ու ազատություն չտեսնի:

Մոռացե՛ք այդ, մոռացե՛ք, ո՛վ դուք գաղթական հայեր, դուք, որ կես ու կեղծ լուսավորությամբ հրճվեցիք, առանց ընտանեկան դաստիարակության՝ կնոջն, ամոթխածության համեստ քողի տակից հանելով, աճապարեցիք դպրոց տանել, և ինչ որ իրեն պետք չէր, դուք այն ուսուցանեցիք, իսկ ինչ որ պետք էր, դուք կա՛մ չիմացաք, կա՛մ ավելորդ համարեցիք ու միայն աղոտ, կիսախավար լույս տվեցիք ու արձակեցիք:

Կինը, մի անգամ ազատություն գտնելով, ճամփա առած, գնում է, ուր որ իրեն տանում են հրապույրն ու հաճույքը: Կինն իր կորստյան ճանապարհը չի նկատում, կույր-կույր գնում ու իր ուժով իր ետևից քաշում-տանում է իր խեղճ, կապված ամուսնուն: Չկա բնավ մի զորություն, որ կնոջ քայլերը կասեցնի. նա պիտի շարունակի այդ խոտորնակ ճանապարհը: Ո՞վ կարող է կրկին անգամ շղթայել նրա ոտքը, երբ նա ազատության իրավունքն իրեն զորավիգ է առել: Չգիտեմ՝ ի՞նչ ճար ու դարման եք սրա համար մտածում, ո՛վ դուք տղամարդիկ, որ ընտանիքի տեր ու կառավարող եք, խորհո՞ւմ եք իրեն վերստին դնել այն հին պատկառանքի բանտում, կապել ձեռքն ու ոտքն ու խսպառ փակել նրա առաջ ազատության դուռը:

Այդ դարմանը, որ դու խորհում ես, այսուհետև անհնարին ու անօգուտ է, դու չես կարող վերստին ետ դարձնել աշխարհի ու ժամանակի անիվները, որոնք անդիմադրելի ուժով առաջ են գնում, մանավանդ Եվրոպայի հոսանքները, որ մի բախումով քո հին բանտերն ու շղթաներն առհասարակ խորտակում են:

Ուրեմն, մի ճար, մի դարման է միայն քեզ մնում, այն է՝ կնոջ հոգին ու միտքն իսկապես կրթել ուղիղ դաստիարակությամբ, թող այնուհետև իր կիրքն, իր հաճույքն ու իր ազատությունը նա ինքը չափավորի, ինքն զգա ու ճանաչի իր մոլորամիտ շավիղը: Աշխարհի բոլոր ողջամիտ իմաստասերները, բարոյախոս բժիշկները կնոջ հիվանդության միակ դեղ ու դարմանն այս են համարում:

Ո՛վ դուք հայ դաստիարակներ, որ թերևս ավելի, քան ես, ճանաչում եք հայ ընտանեկան կյանքն ու վիճակը, թե ինչպե՞ս հին պատկառանքի մեջ նա առողջ էր, նոր ազատության մեջ հիվանդացավ, և եթե կա ու գիտեք ուրիշ դեղ ու ճար՝ հոգացե՛ք ու գրեցե՛ք հիվանդի համար, թող կարդան, սթափվեն բոլոր ընտանիքների հայրերը, որ հուսախաբ եղած՝ դար-

մա՛ն, դարմա՛ն են աղաղակում:

ԺԸ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄԸ

Այս աշխարհում մարդկանց ընտանեկան վիճակը միշտ անստույգ ու անհաստատ է ու այնպես է վիճակից վիճակ փոփոխվում, ինչպես տարերքի շարունակվող եղանակները: Շատ հարմար է, որ ասենք՝ ընտանեկան վիճակն այնքան ելևէջներ ունի, ինչքան ջերմաչափի աստիճաններն առավոտից մինչև երեկո:

Աշխարհի տարերքը բնական ու մշտնջենական օրենքով է շարժվում ու փոփոխվում. արդյոք այնպե՞ս պետք է համարենք, թե մարդու ընտանեկան կյանքն էլ նույն մշտնջենական օրենքի տակ է փակված, միայն թե ուրիշ պայմաններով, ինչպես օրինակ՝ Աստվածապետական օրենքը սահմանել է, որ մարդ իր հացն իր երեսի քրտինքով վաստակի (Ծննդ. Գ 19),

ուստի եթե թե՛ քաղաքացի, թե՛ հողագործ մշակից մեկն արհեստով, մյուսն արորի մաճով չաշխատեն, ընտանեկան սեղանի հացը կպակասի, և զավակները սովալլուկ կտանջվեն: Ուրեմն՝ հացն աշխատողինն է, իսկ ծուլացող մշակի բաժինը՝ սովամահությունը:

Իբրև ճշմարիտ քրիստոնյա ու անթերահավատ հավատացյալ՝ պարտավոր ենք հավատալ, որ աշխարհ կառավարող Նախախնամությունն իր անփոփոխելի օրենքով մեր վիճակը փոփոխում է բարձրությունից դեպի խոնարհություն, խոնարհությունից դեպի բարձրություն: Բայց երկնքի արդարության ատյանն այն ժամանակ է օրենքի այդ վճիռը գործի դնում, երբ մարդը մեղանչում է նրա բնական օրենքի ու պատվիրանի դեմ, որով հայտնում է, թե մեր վիճակի փոփոխությունը մեր մեղքով է առաջ գալիս, ու մեղքը մեր ազատ կամքից է ծնվում: Եթե այսպես է, ուրեմն ընտանեկան չարիքի ու աղետի, ինչպես նաև բարեկեցիկ երջանկության նախապատճառը դարձյալ ինքն՝ ընտանիքն է:

Սակայն աշխարհն ու ժամանակը միշտ աղետաբեր օրեր են ունենում, որոնք ազդում են ընտանեկան վիճակի վրա. որն այսօր ճոխ է, վաղը աղքատանում է, որն այսօր երջանիկ է, վաղն ապերջանիկ է, որն այսօր բարձրապատիվ

է, վաղն անպատիվ ու արհամարված է: Եթե պարզ հայեցողությամբ նայենք, մեզ այնպես է թվում, թե ընտանիքին վրա հասած չարիքները շատ անգամ հեռավոր պատճառներից են առաջանում, ինչպես օրինակ՝ երկնքի ցասումների անարգել պատուհասներից, երկրի անարդար կառավարությունից, արշավանքներից, պատերազմներից, համաճարակներից և այլ այսպիսի կոտորածներից ու պատահարներից, որոնք, առհասարակ, սոսկալի ու կորստալի պատուհասներ են, խոտի նման հնձում են ու սպառնում մարդկային հասարակության ընտանիքին՝ հարուստին և աղքատին միասին ու անխտիր գերեզման իջեցնելով՝:

Հիրավի, շատ ահավոր ու դաժան են այս արտաքին փորձանքները, բայց ընտանիքի համար առավել սոսկալի, առավել մահաբեր են ներքին, ամենօրյա սովորական պատուհասները, որ մարդիկ իրենց ազատ կամքով ու ձեռքով են պատրաստում: Արտաքին պատուհասները մարդկանց ձեռնահասությունից վեր են, մարդը չի կարող խույս տալ կամ դիմակայել նրանց, որովհետև ո՞վ կարող էր Իտալիայի Վեզուվ լեռան հրաբխի բերանը փակել, որ հռչակավոր Պոմպեյը մոխրով չծածկվեր, և ո՞վ կարող է ամպերին հրաման տալ, որ բարկաճայթ կարկու-

տով ու հորդահոս անձրևով գյուղերն ու քաղաքները չողողեն:

Իսկ ներքին պատուհասներն այդպես չեն, ու մեր ազատ կամքի ու հրամանի տակ լինելով՝ մենք կարող ենք դրանց առաջ թումբ քաշել, արգելել, որ մեր տունն ու ընտանեկան սրահը չողողեն: Արտաքին պատուհասն աշխարհի վրա է միայն փորձանքներ թափում, իսկ ներքինը նոր քաղաքակիրթ աշխարհում գրեթե համաշխարհային պատուհաս է, որ Արևմուտքից ելնելով՝ իր արշավանքներն դեպի Արևելք է շարունակում, և իբրև համաճարակային հիվանդություն՝ նրա մահացու ցավը տիրում է մեր ընտանիքների սրտերում. նրանք այս ծյուրախտից կամաց-կամաց մաշվում են ու չեն զգում:

Այժմ պարզապես սկսենք բացատրել այս հաճոյական ախտի տեսակները, որոնց սիրահարված են մեր կարճամիտ ընտանիքներն ու մահ գրելով՝ տարաժամ մեռնում են: Քանի՞սն են այդ ներքին ախտերի տեսակները. ուշադրությո՛ւն դարձրու, մի երկու բառով ես քեզ ասեմ. այս է՝ զեխ ու անբարոյական կյանքն ու ըստ Սուրբ Գրքի՝ չափազանց հեշտասիրությունը և այլն, որոնց այլևայլ ճյուղերն ահավասիկ թվեմ քեզ:

Բազմախորտիկ սեղանի ու գինարբեցության

ցանկություն՝ առանց գիտենալու ու հաշվելու, թե տաշտի մեջ որքա՞ն հաց, մառանի մեջ որքա՞ն պաշար ու կարասի մեջ որքա՞ն գինի կա: Հանդերձի ու նորասիրության ցանկություն՝ առանց մտածելու, որ նրանց աշխատանքն ու պատրաստումը մեր երկրի ու մեր ժողովրդի աշխատանքի արդյունքը չեն, մեր հանճարի գյուտը չեն և մեր գործարաններից չեն ելել, ճիշտն ասած՝ մենք արժանի չենք այդ պերճությունները վայելելու: Եվ գիտե՞ք, թե որքան թանկ գնով ենք գնում՝ առանց երբեք հոգալու մեր ընտանեկան պարենը: Մի՞թե ես չեմ ճանաչում ու տեսնում այն բազմաթիվ ընտանիքներին, որոնք իրենց երեխաների բերանից հացը կտրելով՝ նախ նորասիրության անպետք պետքերն են հոգում. ես չե՞մ ճանաչում ընտանիքն անպատվող այն անհոգ հայրերին, որ պարտքը չվճարելով՝ վարկն ու պատիվն են կորցել, և փոխանակ ընտանեկան ցանկությունը զսպելու և չափավորելու՝ իրենք էլ նույն ցանկության հոսանքից մղվելով՝ գնում հասնում են մինչև այն կետը, ուր հուսահատ չքավորությունն է տիրում: Երանի՜ թե պճնասեր ընտանիքն այդ զգալի փորձից սթափվեր ու այնուհետև սովորեր չափավորել իր կյանքն ու ունայնասեր ցանկությունը:

Նորասիրության ցանկության հետ հիշենք

նաև մեծածախս շինություններն ու թանկագին կահ-կարասիները: Մենք գիտենք, որ թագավորին պալատ է պետք, իշխանին՝ ապարանք, քաղաքացի ժողովրդին՝ չափավոր տուն, և դաշտաբնակ շինականին՝ խրճիթ: Մեր ազգում մենք տեսել ու տակավին տեսնում ենք այն կարգի ընտանիքներ, որոնց դրամագլուխը միայն իրենց կյանքն ու ապրուստն է երաշխավորում թե՛ արհեստի, և թե՛ առևտրի մեջ: Արդյոք անմիտ սնափառությո՞ւն չէ, երբ այդպիսիններն, անխորհուրդ նախաձեռնությամբ իրենց դրամագլուխը տան շինության և կահ-կարասիների համար են վատնում, որով շահի ու վաստակի աղբյուրն սկսում է նվազել: Այնժամ այդ տուն շինողները տրտունջում են, թե՝ «Մեր ժամանակը դառն ու անհաջող է, վաստակ չկա, առևտուրը դադարել է, անցյալը շատ լավ էր, քան թե ներկան»: Բայց հետո, ուրեմն, նրանք գղջում ու խոստովանում են ու քննադատելով իրենց անմտությունը՝ ողբում են, որ ցուցամոլ պերճության համար դրամագլուխը վատնեցին: Եվ ի՞նչ է անում հետո հոյակապ տան փառասեր ընակիչը, երբ տեսնում է, որ հասարակության մեջ իր վարկն ու պատիվը պակասել է, ու մեծաշեն տան սեղանի հացը նվազել է, մյուս կողմից էլ՝ անհոգ ընտանիքի

նորասիրության անհագ ցանկությունը երբեք չի պակասել, ու արագ գալիս հասնում է այն անպատեհ ժամը, որ տանտերն իր ձեռքով շինած տունը վաճառքի է հանում ու կես գնով վաճառելով՝ վճարում է իր կուտակված պարտքերը. երանի թե մի փոքրիկ մաս մնար, որով նա կարողանար կրկին դրամագլուխ կազմել ու շարունակել իր առևտուրը, և միշտ անցյալը մտաբերելով՝ սակավապետ տնտեսությամբ բարվոքեր իր ընտանեկան կյանքն ու զգաստանալով այլևս չգնար իր հին ճանապարհով, որի վախճանը հայրական տունը և ժառանգական ստացվածքը վաճառել տալն է ու իր անվարկ, անպատիվ մնալը, այնուհետև կամա թե ակամա խոնարհվում է սակավապետ տնտեսության վարժապետի առաջ ու խնայողության, պարկեշտության, պարզության, աշխատանքի ու ապագայի հեռատեսության դասեր ուսանում: Դարձյալ կրկնում եմ, երանի՜ թե մեկ-երկու անգամ խրատվելով և փորձվելով՝ չմոռանար այդ օգտակար դասերը, որ մարդու կյանքի ապահովությունն են:

Այժմ ընտանեկան ցանկության մյուս ճյուղը բացատրենք, որ ամեն բանից ժանտաբեր ու ավերիչ է, մահ է բերում իրեն ու տարածվելով թունավորում է ազգի բոլոր ընտանիքներին, որ

հարստության հետ կյանքը ևս վերացնում ու ջնջում է մարդու արժանապատվությունը՝ հանելով ու զրկելով իրենց ընտանեկան պարկեշտ դասից: Այնուհետև նրանց բաժինն այն է, որ ծաղր ու ծանակի են ենթարկվում մարդկանց աչքի ու դատաստանի առաջ: Եվ ի՞նչ է այս մոլեգին ցանկության անունն ու վարքը. մեկ բառով ասեմ՝ ԱՆԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ: Մեր հրաշամիտ թարգմանիչներն ավետարանի պատմած անառակ որդու կյանքը երկու բառով են արտահայտել. «Որովհետև անառակ կյանքով էր ապրում» (Ղուկ. ԺԵ 13), որ նշանակում է մոլորյալ մարդու զեխ կյանք՝ իր ամեն հանգամանքներով, որ անառակ որդին վարում է իր կյանքում: Մարդկանց մոլորության ու անառակ վարքի ասպարեզը շատ բազմաճյուղ ու ընդարձակ է, որոնց նկարագիրն Ավետարանը մեզ ներկայացնում է ջրհեղեղյան դարի մարդկանց ապականված կյանքով, որոնց համար ասում է. «Ուտում էին և խմում, կին էին առնում ու մարդու էին գնում» (Մատթ. ԻԴ 38): Հաց ուտելը մեր կյանքը պահպանելու համար է, գինի խմելը աշխարհի տառապանքներից մեր տխրությունը փարատելու համար է, սուրբ ամուսնությամբ կին առնելն էլ, աստվածադիր օրենքի համեմատ, մարդկային կյանքը պահելու ու բարգավաճելու համար է: Ի՞նչ է հապա Նոյի դարի մարդկանց անառակ կյանքը, որ Հիսուսն օրինակ էր բերում իր հավատացյալ որդիների զգուշության համար. նրանց կյանքը ծայրահեղ անբարեխառնություն էր: Նրանց սեղանը որկրամոլությունն էր, ու իրենց որովայնն Աստծուց զորեղ էին պաշտում, նրանց գինին խելաթափ արբեցությունն էր, նրանք ուտում, խմում ու անմիջապես վայելում էին Աստծու պարգևներն՝ առանց պարգևատուին օրհնելու: Նույն ամբարիշտ դարում կնոջ և սուրբ ամուսնության պատիվը ոտնահարվել էր, անասնաբար խառնագնաց լինելով՝ եղծվել էր սուրբ պսակի պայմանը, այլևս ընտանեկան կյանքին պահապան պարիսպ չկար, ամոթն ու երկյուղածությունը վերացել էին, առհասարակ մարդկության սեռն ապականված էր Աստծու առաջ, միայն մի բարի, արդար նահապետ էր մնացել երկնքի առաջ, որին նախախնամությունը տապանով պահեց ու ջրհեղեղով ջնջեց ապականված մարդկանց սերունդը:

Սուրբ Գրքի պատմությունների այս չարաղետ դասից պետք է ուսանենք, թե ընտանիքն ու մարդկությունը ջնջող մեծ պատուհասը անառակ ու զեխ կյանքն է, թե հայրական ժառանգական հարստությունը վատնողն այն է, թե ի վերջո հա-

ցին կարոտ ու սովամահ լինելու պատճառն այն է, թե անխզելի ամուսնության կապը հատող հանդուգն ձեռքն այն է, թե՛ ազգի, թե՛ այլ ազգի դատարաններում քրիստոնեական պարկեշտությունը քամահրող անպատկառ երեսն այն է, թե հայտնի գինետներում, հրապարակում ու այլ խավարաշրջիկ տեղերում քրիստոնյա անունը կրելով հեթանոսի կյանք վարողն ու հեթանոսին գայթակղություն տվողն այն է, խաղաղ ընտանիքը խռովողն ու ընտանեկան միությունը բաժանողը, հայրական տան հաստատուն հիմքերը հիմնովին շրջողն այն է:

Ո՛վ, որքա՜ն երանելի կլիներ, եթե արդի աշխարհի սրամիտ ու վարժ անառակներն ավետարանի պատմած անառակի հին օրինակը մտաբերելով՝ միաժամանակ հիշեին իրենց նախկին կյանքն ու վիճակը, հիշեին, թե անարգ կրքից ծառայության մեջ խոզարած են եղել ու փափագեին ձեռք բերել նախկին կորած կյանքն ու հացալից սեղանը:

Դարձե՛ք, ուրեմն, ո՛վ դուք անառակության մեջ մաշված ու թշվառ զավակներ, դարձե՛ք, զգաստացե՛ք ու դարձյալ շինեցե՛ք ձեր ընտանեկան ավերակները, որ ձեր ձեռքով, ձեր գործով ու ձեր անզսպությամբ քանդեցիք:

Ձեր խեղճ ծնողներին վշտացրեցիք, ձեր

քույրերին ու եղբայրներին լացացրեցիք, ընտանեկան պատիվը, մարդկության պատիվն արհամարհեցիք: Դարձե՛ք ու դարձյալ դո՛ւք շինեցե՛ք ձեր քանդած տան ավերակները: Եթե տակավին մնաք ու համառեք այդ ճանապարհին, անշուշտ, այն ձեզ կործանման կտանի, ու դուք վատահամբավ ու սովամահ կկորչեք, և ի վերջո ձեր ու ձեր հայրական տան հիշատակը կվերանա աշխարհից, միայն գերեզման կթողնեք՝ առանց անունի ու փառքի:

Թողնենք այժմ ընտանեկան կյանքի այս մոլության նկարագիրը, որ շատ ընդարձակ է, առաջ բերենք նաև նոր սովորական մոլության այն մասը, որ շատ ընտանիքների հաջողությունից ու հարստությունից զրկելով՝ աղքատացրեց: Եվ ի՞նչ է դրա անունը՝ խաղամոլություն:

Ես լումայափոխ կամ տնտեսագետ չեմ, դժվար է ինձ համար այդ մոլության նկարագիրն ըստ արժանվույն երևան հանել, միայն այնքանն եմ ըմբռնում, որ այդ մոլությունը բախտի երևակայությամբ մոլորված մարդիկ երկու կերպ են գործի դնում, ու երկուսն էլ միապես կործանարար են: Մի ձևը դրամով թղթախաղն է, որի ծածուկ հրապարակը բուն ընտանեկան կյանքի ու ծոցի մեջ է, մյուսը՝

մայրաքաղաքի արժեթղթերի հրապարակը, որ այսօր գրեթե բազմաթիվ մարդկանց համար որպես մի հաջողակ շահավառություն է դարձել, որի պատճառով շատ ընտանիքներ գահավիժեցին այդ խոր ու անտակ գետնի տակ: Եզովպոսի խորհրդավոր առակը նրանց հետ կատարվեց. արհեստավորը, վաճառականը իրենց բերանի հացն, այսինքն՝ փոքր ու չափավոր դրամագլուխն ու ապահով վաստակը թողնելով՝ այնտեղ վազեցին, անըմբռնելի ստվերի հետ խաղացին, իրենց չնչին ու ցամաքաջուր առվակներով մեծամեծ գետերի հետ մրցեցին և, ի վերջո, ի՞նչ շահեցին. ոչինչ, առվակներն ու վտակները դարձյալ առատ գետերի մեջ թափվեցին, գետերն էլ Մեծ Անգլիայի ծով գանձերի հետ խառնվեցին: Իսկ մեր փոքրիկ վտակների վիճակն ակներև տեսանք, թե ինչ եղավ, ու տակավին տեսնում ենք, թե ինչ կլինի: Ցավով եմ գրում. ոմանք թշվառացան իրենց ընտանիքներով, ու ոմանք էլ կատաղի հուսահատությամբ գնացին դեպի ծով, ասացին, որ իրենց ծածկի, որպեսզի մեռնեն ու չզգան պատվի ու ամոթի կսկիծ, և չտեսնեն իրենց թշվառ ընտանիքի անբախտ վիճակը:

Իսկ առտնին խաղամոլությունը շատ ընտանիքների համար դարձել է իբրև միակ զբաղմունք՝ զբաղեցնելով միայն չնչին ու աննշան գումարներով, սակայն ոմանց համար էլ, որ, իբրև բախտի խաղ, մեծամեծ գումարներով են մրցում, անբաժանելի մոլություն է դարձել: Երկուսն էլ իրենց խիստ վնասակար հետևանքներն ու վատթար կողմերն ունեն ու դարձյալ թե՛ բարոյապես, թե՛ նյութապես շատ աղետաբեր են ընտանեկան կյանքի համար, որովհետև ոմանք կորցնում են, ուրիշները գտնում են. նրանք, որ կորցնում են, հայտնի է, թե որքան են մեղավոր աշխարհի առաջ՝ նույնիսկ ընտանեկան կյանքում՝ մոր ու զավակի առաջ. սեղանի հացը, ինչքն ու ստացվածքը վերցնել ու ինքն իր ձեռքով կողոպտելով տալ ուրիշին՝ սրանից ավելի ընտանեկան ավարառություն չկա: Քաղաքակրթության մեջ այլևս ո՞վ կարող է մեղադրել ամայի լեռների ավազակների գործը, որը միայն դիպված է ճամփորդի համար, իսկ ավազակները շատ անգամ գոհ են լինում ու միայն գտածն են առնում՝ առանց ամբողջ տունն ու ընտանիքը կողոպտելու:

Իսկ նա, որ լի ուրախությամբ հրճվում է իր բախտախաղով, մի՞թե ինքն ու իր ընտանիքը վայելում են այդ անարդար ու անքրտինք վաստակը. ո՛չ, նրանք ինչպես գտնում են, վաղ ու հեշտությամբ էլ դարձյալ կորցնում են թե՛ խա-

դի մեջ և թե՛ այլևայլ անհաշիվ զեխություն-
ներում, որովհետև շատ դժվար է հավատալ,
թե աշխարհի խաղամոլները տնտեսել գիտեն,
կամ թե կարող են հաշվով ու խնայողությամբ
ապրել: Դա շատ անբնական է, որովհետև ով
որ դյուրությամբ շահում է, դյուրությամբ էլ
մսխում է, և ով որ դառն աշխատանքով է հաց
ու հարստություն ձեռք բերել, միայն նա կհո-
գա ապրել ու կառավարել իր ընտանիքը տնտե-
սելով:

Հիշենք նաև բարոյական կողմի մեծ անպատ-
վությունը, որ կրում է խաղամոլը: Զգիտեմ՝
նա ամոթ զգո՞ւմ է, երբ նրա անունը վատա-
համբավ է հնչում, և տարածվում է, թե այսինչ
պարոնը խաղի մեջ այսքան գումար է կորց-
րել. ի՞նչ է լինում այնժամ պարոնի վիճակը.
կորցնում է պատիվն ու վարկը պարկեշտ ժո-
ղովրդի առաջ, որով իր առևտրական գործերն
ու շահավաճառությունն անհաջողության մեջ
դադարում են, երբեմն էլ իսպառ դեպի սնան-
կություն են գնում:

Բարոյական ուրիշ մի մեծ վնաս ևս ասեմ
քեզ, որ կա ընտանեկան կյանքում. այդ չար
օրինակով ընտանեկան կյանքը եղծանելն է,
որովհետև ո՞վ կհավատա, որ երբ ծնողներն
ու ընտանիքի մեծերը տարվում են թղթախա-

ղով, խեղճ զավակները չեն հետևում նրանց ու
իրենց մատաղ հասակից սկսած՝ չեն վարժվում
այդ անմեղ թվացող մոլորության մեջ: Բացի
այս՝ մայրերն ու կանայք ևս հիվանդանում են
այդ հիվանդությամբ, ու շատերն իսկ հիվան-
դացել են՝ թողնելով տնային տնտեսությունը,
զավակների խնամքն ու կրթությունը, ընթեր-
ցանությունն և այլ ծնողական պարտականութ-
յունները: Խաղամոլ մարդկանց կյանքում մի
ավելի մեծ խանգարում ևս կա, որ նրանք թեթև
ու փոքր են համարում, այսինքն՝ թե ժամանակի
բարվոք տնտեսումը նրանց համար չէ, նրանք
ցերեկվա աշխատանքային զբաղմունքը բավա-
կան չեն համարում, ողջ գիշեր էլ այդ հաճելի
խաղով են զբաղվում. նրանք չեն շնչում ու չեն
տեսնում ոչ առավոտի կենդանանար շունչը,
ոչ արևածագը, նրանք, գիշերահանգիստ պահի
մեջ արթուն կենալով, տանջվում են՝ կորցնելով
մարմնի առողջությունը, հոգու մտավոր ուժը,
որով ջլատվում ու թմրում է մարդու ողջ գոր-
ծունյա ճարտարությունը: Դու լավ նայի՛ր ու
կտեսնես, որ այդ քնահատ պարոնները ցերեկը
դեգերում են իբրև քնաշրջիկ ու ապուշ: Քաղցր
քունն ու դժվարագյուտ ոսկին կորցնելուց հե-
տո ցերեկվա շահն ու վաստակը ևս կորցնում
են, որին էլ միայն սպասում է խեղճ ընտանիքը,

որովհետև այդ օրական շահերից է կազմվում իրենց ներկա ու ապագա կյանքի պարենը:

Համառոտենք, թեև շատ են ու զանազան մեր ընտանեկան կյանքի ներքին եղծումները ու անկարգությունները, որոնց պատճառով մեր ընտանեկան վիճակը շարունակ փոփոխության է ենթակա: Մեր հարուստ ու ազնվական գերդաստանները գրեթե հարյուր տարվա շրջան չունեն. այսօր ասուպի նման փայլում են մի պահ, վաղն իրենց տոհմական փառքով անցնում են ու ստվերանում: Մենք գիտենք՝ երկիրն ու երկրի օրենքները չեն երաշխավորում, որ նրանք տոհմային ճոխությամբ Անգլիայի լորդերի չափ սերնդեսերունդ հարատևեն, բայց պետք է խոստովանել, որ մեր ազգի ազնվական ընտանիքները չափազանց ձեռնարկումներով, անհաշվարկ տնտեսությամբ ու փառասիրական զեխությամբ իջել ու խոնարհվել են: Չեմ խոսում նրանց մասին, որ անարդար ճանապարհով ու միջոցներով են հարստացել և դարձյալ նույն անարդար միջոցներով տուժել են մինչև վերջին լուման:

Ուրեմն ընտանիքները՝ թե՛ հարուստ, թե՛ աղքատ, կապրեն ու կմնան այս աշխարհում, եթե գործասեր մրջյունի նման աշխատասեր լինեն, եթե աշխատանքի արդյունքը ժողովելով գանձատանն ու շտեմարանում՝ իմաստուն տնտեսությամբ մատակարարեն ընտանեկան պետքերը, հաշիվ, չափ ու կշիռ չմոռանալով՝ հոգան նաև ապագա ձմռան պաշարը, որում գործելը թերևս անհնարին լինի, եթե արդար վաստակը չչահագործեն՝ հարստահարելով աղքատ ընտանիքներին, որոնց վրեժխնդիր դատավորն Աստված է ու հատուցում է, եթե ընտանեկան դուռն ամուր փակեն, որ մուտք չգործի այնտեղ անառակ ու զեխ կյանքը: Իսկ այս բացված դուռը, որ այժմ հայ ընտանիքներն է կործանում, կփակվի միայն ուսմամբ, դաստիարակությամբ ու երկյուղած աստվածապաշտությամբ, որոնց պետք է ուղղված լինեն բոլոր ընտանիքների խնամքը, ջանքը ու մեծ հոգատարությունը՝ այլևայլ զոհերով ու անձնվիրությամբ հանդերձ: Այս է միայն ճարն ու դարմանը, այնժամ մենք ու աշխարհը կհավատանք, որ հայ ընտանեկան վիճակը լավագույնի մեջ կհարատևի, բարգավաճողները կանգուն կմնան, և ընկած ընտանիքները կբարձրանան:

Ավարտում եմ այս «ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ» փոքրիկ երկս՝ դարձյալ կրկնելով ու գրելով նույն բանը, թե ընտանեկան տան հաստատուն հիմքը ողջամիտ կրթությունն է և ուղիղ դաստիարակությունը, այս է աշխարհի բարոյախոս

իմաստասերների ցույց տված միակ ճանապարհը: Իսկ իմաստասերներից գերազանց մեզ լավագույն ճանապարհ են ցույց տալիս Սողոմոնն ու Սողոմոնից ավելի իմաստուն Հիսուսը. մե՛կն իբրև պատգամ վճռում է. «Արդարությունն բարձրացնում է ազգը, բայց մեղքը ազգեր է նվազեցնում» (Առակ. ԺԴ 34): Բայց ազգն ընտանեկա՛ն արդարությամբ է բարձրանում ու ընտանեկան մեղքով նվազում, իսկ մյուսն, այսինքն՝ Հիսուսը, հավատացյալների համար ցույց է տալիս Ավետարանի խոսքն ու ճշմարտությունը, որ միայն այն է համայն քրիստոնյա ընտանիքների իսկական կյանքն ու հավիտենական հիմքը: Երանի՜ նրան, որ այս հիքի վրա է հաստատում իր ընտանեկան կյանքը, որը երբեք չեն կարող խախտել աշխարհի գետերն ու հեղեղները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ԸՆԹԵՐՑՈՂԻՍ 5
Ա. ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔԸ 13
Բ. ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ ԴՐԱԽՏԻՑ ԴՈՒՐՍ..... 23
Գ. ՀԱՅՈՑ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՆՆ ՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ..... 33
Դ. ՄԱՐԴԸ ԵՎ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ..... 41
Ե. ՏՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ..... 53
Զ. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԽԱՓԱՆԱՐԱՐ ՁԵՂՈՒՄՆԵՐԸ 67
Է. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆԱԿԻՑ ԱՄՈՒՍՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 81
Ը. ՀԱՐՍԱՆԻՔՆ ՈՒ ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ..... 101
Թ. ՀԱՐՍԻ ՈՒ ՓԵՍԱՅԻ ԿՈՉՈՒՄԸ 115
Ժ. ՏՂԱՄԱՐԴՈՒ ՈՒ ԿՆՈՋ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 129
ԺԱ. ՄԱՅՐ ԵՎ ԴԱՅԱԿ..... 151
ԺԲ. ՁԱՎԱԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 167
ԺԳ. ՁԱՎԱԿՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ..... 185
ԺԴ. ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՀՆ ՈՒ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ 195
ԺԵ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՏԱԿ ՀԻՇԱՏԱԿ..... 205

ԺԶ. ՏԱՆ ԵՐԵՑՆ ՈՒ ԻՐ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 215
ԺԷ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԿԱՌԱՆՔՆ ՈՒ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ..... 225
ԺԸ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ,
ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄԸ..... 237